


1339

1

58-95



06 SEP 2013

1

8-95

ա

100  
142-ՑԲ.  
01 JUL 2009

Ե. ՅՐԱՆԳԵԱՆ.

Ն. Կ. ՄԻԽԱՅԼՈՎՍԿԻՆ

Ո Ր Պ Է Մ

ՓԻԼԻՍՈՓԱ-ՍՕՑԻՕԼՈԳ

1004  
18883



98

Ե Ր Ե Ն Ա Ն

Տպարան «ԼՈՅՄ» Արշակ Յակովբեանցի և որդիք  
1911 թ.

## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

I. ՆՆՐԱՆՈՒԹՒԻՒՆ.—Մեր թեման.—Մի-  
թայտվելու սօցիոլոգիական և փիլիսոփայական աշ-  
խարհայեացքի բնութագրերը.—Правда-սխտեմ.—ար-  
շարութիւն և ճշմարտութիւն.—Մ-ի տեղը սուսական  
իրականութեան մէջ 60, 70, 80 թւերին.—Նրա տեղը  
սօցիոլոգների շարքում. . . . . 9—30.

II. ՄԻՆԱՅԼՈՎԱՌՈՒ ՓԻԼԻՍՕՓԱՅԱ-  
ՆԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵՅՈՂՈՒԹՒՆԵՐ.—Նրա  
փիլիսոփայական կօնցիպցիայի բնորոշումը.—Նա բէ-  
ալ մտածող.—Նա հակամեաաֆիզիկ.—Նրա իմացաբա-  
նութիւնը և սրա բնորոշումը: Նա համոզւած ֆե-  
նօմենալիստ է.—Նա դէմ է իրն ինքնինի:—[Ինչ է  
«իրն ինքնինը».—մարդու և գիտութեան սահմանները  
զուգադիպում են իրար.—չկայ արսօլիւս ճշմարտու-  
թիւն.—մարի անսեռութեան սկզբունքը.—Մասի, Աւե-  
նարիուս և Միխայիլովիչ.—փորձ.—զուտ փորձ, սրա  
էութիւնը.—փորձի փիլիսոփայութիւնը . . . . . 30—70.

## III. Ն. Կ. ՄԻՒԱՅԼՈՎԱՌՈՒ ՍՕ- ՏԻՕԼՕԳԻԱՆ . . . . . 70—210.

I. ՄԻՒԱՅԼՈՎԱՌՈՒ ՍՕՅԻՕԼՕԳԻԱՅԻ  
ԳՆՆԵՉԻՍԸ.—50, 60-ական թւերը.—զարաչըր-  
ջանի բնորոշ և էական գծերը.—բնագիտու-

թեան նւաճումները.— Բնագիտական օրէնքները  
 նշանակութիւնը հասարակագիտութեան հա-  
 մար.— Բիօլոգիական սկզբունքները միաժաման-  
 ակ սօցիօլոգիական սկզբունքներ են.— սօցիօ-  
 լոգիան բիօլոգիայի շարունակութիւնը.— սրա  
 սխալ հոգմերը.— Սպէնսէր և օրգանական թէ-  
 օրիան.— օրգանիզմը մի հասարակութիւն և  
 հասարակութիւնը մի օրգանիզմ.— այս թէօ-  
 ըրայի այլ ներկայացուցիչները.— այլ հոսանք.—  
 հասարակութեան զարգացումը.— անտեսական-հասար-  
 ակական թէօրիան.— Մարքս և Էնգելս.— այդ  
 երկու հոսանքներէ հակադրութեան լուծման  
 պօրօքէմը.— Միխայլովսկու գերը զբանում.—  
 այդ հոսանքները Ռուսաստանում.— Միխայլով-  
 սկու կրած ազդեցութիւնները . 70—100.

II. ՍՕՑԻՕԼՕԳԻԱԿԱՆ ՄՈՒԲԻԵԿՏԻ-  
 ՎԻՊՄ ԵՒ ՍՈՒԲԻԵԿՏԻՎ ՄԵԹՕԴ.— օրինակով  
 և սուբիեկտիվ մեթօդներ.— Միխայլովսկու սու-  
 բիեկտիվիզմի էությունը և հիմնադրումը.— զե-  
 րաբերմունքի խնդիր.— սուբիեկտիվ տարրը  
 հասարակագիտութեան մէջ, սա անխառնափոխի  
 և անհրաժեշտ.— բարձր կօտորօլը պատկանում է  
 սուբիեկտիվ տարրին.— Միխայլովսկու սուբի-  
 եկտիվիզմի գեֆինիցիան.— սրա երեք էական  
 կողմերը . 100—117.

1. «Կանխակալ կարծիք».— սրա  
 էությունը.— Բնչպէս է կազմուած կան-  
 խակալ կարծիքը.— սրա գոյութիւնը բնա-  
 գետի և հասարակագետի մօտ.— տարբե-  
 ըութիւնը.— սօցիօլոգի մօտ բարոյական  
 տարրի գոյութիւնը . 117—127.

2. Տէլէօլոգիզմը սօցիօլոգիայի  
 մէջ.— սրա էությունը.— Կօնաի գար-  
 գացման երեք Փաղերը.— Միխայլովսկու  
 գարգացման երեք Փաղերը՝ օրինակով  
 մարդակենտրոն, արտակենտրոն և սու-  
 բիեկտիվ մարդակենտրոն.— սրանց էու-  
 թիւնը.— նա զէմ առաջին երկու Փաղե-  
 րին.— Բնչն.— տելէօլոգիական տարրի  
 անհրաժեշտութիւնը սօցիօլոգիայի մէջ  
 . 127—141

3. Արդարութեան և անհրաժեշ-  
 տութեան կատեգորիան.— բարոյական  
 տարրի գոյութիւնը սօցիօլոգիայի մէջ.—  
 սօցիօլոգիան անբաժան էթիկայից.—  
 Միխայլովսկու և Լուրովի ըմբռնումը.—  
 անհրաժեշտութիւնը և մարդու զիւրը  
 նրա հանդէպ . 141—151

4. Անմասի գերը, հնարաւորու-  
 թեան կատեգորիան.— տարբեր ըմբռ-  
 նումներ — իրերի բնական ընթացքը և  
 մարդը.— մարդը պատճառներէջ մէկը.—  
 մեծ մարդիկ.— սրանց կուշար չի դնում  
 Միխայլովսկին.— փոխարարներութիւն  
 տարրերի.— կլասսիֆիկացիա 151—164.

III. ԱՆՀԱՍՏԵԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԷՕՐԻԱՆ  
 ԵՒ ՊՐՕԳՐԵՍԻ ՖՕՐՄՈՒՄՆ.— սրա էու-  
 թիւնը.— բնական ընտրութեան սկզբունքը.—  
 հասարակութեան օրգանական թէօրիան.— իդե-  
 ալական և գործնական տիպեր.— Միխայլովսկու  
 զիւրը.— դիվերգենցիա և աշխատանքի ֆիզիօ-

լողիական բաժանումը.—կարլ ֆօն Բերի օ-  
րէնքը.—Միխայլովսկու պրօգրեսի ֆօրմու-  
լան.—անհատի լայնութիւնը և խորութիւնը.—  
Միխայլովսկին լայնութեան կողմնակից.—պրօ-  
ֆան-ինչ հասարակարգ է ուզու՞մ.—նրա պրօ-  
գրէսի ֆօրմուլալի վերաւոր կողմը.—քննա-  
դատութիւն.—Բազումնիկի, Լաւրովի շէր-  
քը.—Լաւրովի սրբագրութիւնը—վերջին խօսք  
164 . 210.

Ազգիւրներ և գրականութիւն.

Վերսպաներ.

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Н. К. Михайловскій, полное собр. сочи-  
нений 8 т.
2. На славномъ посту. Литературный сбор-  
никъ, посвященный Н. К. Михай-  
ловскому. (1860-1900).
3. Б. Л. Дичиковъ. Субъективизмъ и субъ-  
ективный методъ (критическій о-  
черкъ о Н. К. Михайловскомъ)—  
„Вопросы обществовѣдѣнія“ **գրքում:**
4. В. Лункевичъ. Н. К. Михайловскій,  
характеристика-эскизъ.
5. П. Лавровъ. Формула прогресса Н. К.  
Михайловскаго и т. д.
6. Ивановъ-Разумникъ. Исторія русской  
общест. мысли. II т. ст. 135-205.
7. Г. Вартамянъ. П. Миртовъ и субъек-  
тивный методъ въ социологii.
8. В. Черновъ. Философскіе и социал. э-  
тюды. (բոլորն էլ վերաբերում են  
Միխայլովսկու, ընդհանրապէս ոռ-  
ւական ուցիւղօգիական դպրոցի աշ-  
խարհայեցողութեան հիմնաւորման):

այս բոլորը մեզ աւելի քան պարզ է: Բայց, յամենայն դէպս, մենք հաճութեամբ ենք ձեռնարկում այդ դժւարին աշխատանքը: Հաճութեամբ ենք ձեռնարկում, որովհետև մեր առաջ կանգնած է մի խիստ օրիգինալ դէմք, մի համակրելի և ընդգրկող միտք, աշխատաւոր ժողովրդի համար բաքախոզ մի ջերմ սիրտ, աշխատանքի սկզբունքի համար պայքարող մի աննման մարտիկ:

Անա այսպէս ուշադրաւ և զբաւիչ է նա, ուս մեծ փիլիսոփա-սօցիօլօգը. անա այսպէս նա բազմակողմանի է, բարդ և խոշոր. նա ընդգրկում է իր մէջ բազմազան գծեր, որպիսութիւններ:

Նա առհասարակ իր ամբողջ մեծութեամբ, իր ինքնատիպ ֆիզիօնօմիայով բարձրանում է ուսական մտքի նորագոյն պատմութեան մէջ: Նա խոշոր է թէ իր խորունկ ու պայծառ մտածողութեամբ, թէ իր ընդգրկող հոգով և թէ իր ջերմ սրտով: Եւ նա իր այդ բոլոր բարեմասնութիւններով, իր փարթամ կեանքով և ամբողջ էութեամբ երևան է գալիս թէ վերացական մտքի աշխարհում և թէ հասարակական-քաղաքական եռուն կեանքում:

Այստեղ նա ուզում է թէ իր մտքին և թէ հոգուն-սրտին բաւարարութիւն տալ:

Թէև նրա այդ յատկութիւնները, այդ երկու կողմերը երբեմն զատոււմ են, բայց զատոււմ են՝ միայն յետոյ նորէն միանալու պայմանով: Ռուս սօցիօլօգ-փիլիսօփան ուզում է զանեւ այնպիսի մի տեսակէտ, «ուր правда-ճշմարտութիւնը և правда-արդարութիւնը ներկայանային ձեռք-ձեռքի տւած, մէկը միւսին լրացնելով»\*): Յամենայն դէպս, այդպիսի տեսակէտի մշակումը բարձր է այն բոլոր խնդիրներէց, որպիսին կարող են ներկայանալ մարդկային մտքին, և չկայ ոյժ, որ ավստասայինք այդ խնդրի վրա զործագրելով: Անհրկիւղ նայել իրականութեան աչքին և նրա արտացոլման՝ правда-ճշմարտութեան, օբիեկտիվ ճշմարտութեան, և միևնոյն ժամանակ պահպանել правда-արդարութիւնը, սուբիեկտիվ ճշմարտութիւնը — անա այդպիսին է Ն. Կ. Միխայլովսկու ամբողջ կեանքի գերագոյն նպատակը:

Այս խօսքերի մէջ բիւրեղացած կերպով տրւած է Ն. Կ. Միխայլովսկու ամբողջ փիլիսօփայական-սօցիօլօգիական օրիգինալ աշխարհայեցողութիւնը, նրա սուբիեկտիվ-ստական-սօցիօլօգիական և ինդիվիդուալիս-

\* ) Полное соч. I т. ст. V.

տական դեպքերինը: Նրա ամբողջ սօցիալ-  
փիլիսոփայական և սօցիոլոգիական-սուբեկ-  
տիվիստական յղացումը կարելի է բնո-  
րոշել երկու խօսքով— Правда-ի սխտեմ.  
Правда-ն պէտք է հասկանալ, իհարկէ, այն  
ընդգրկող իմաստով, որպիսին տալիս է Մի-  
խայլովսկին կամ առհասարակ ուսւ ժողո-  
վուրդը:

Պրակտիկ նրա սկզբունքների Սկզբ-  
բունքն է, նրա գերագոյն նպատակը ու  
խնդիրը, որին նա հետամտեց իր ամբողջ 45  
տարւայ զրական-հրապարակախօսական և  
փիլիսոփայական-սօցիոլոգիական գործունէ-  
ութեան ընթացքում: Եւ նա ամբողջ 45 տար-  
ւայ ընթացքում պայքար մղեց ուսական  
թէ մտաւոր աշխարհում և թէ սօցիալական  
քաղաքական կեանքում, երկար և դժւարին  
պայքար, որից նա միանգամայն յաղթանա-  
կող դուրս եկաւ իր Правда-ի սխտեմով, իր  
աշխարհայեացքի թապն ու պսակ կազմող  
սօցիոլոգիական սուբեկտիվիզմով:

Այսպիսով ծայր է տալիս ամբողջ մի  
մտաւոր շարժում, ստեղծւում մի ամբողջ և  
խիստ հետաքրքրական շկօլա, հարադատ  
ծնունդ ուսական իրականութեան, ուսաս-  
կան անմիջական կեանքի:

Ն. Կ. Միխայլովսկին դեռ շատ վաղ իր

վրա է գրաւում արժանի և լուրջ ուշադրու-  
թիւն: Արդէն 60-ական թւականներին նրա  
դէմքը պարզ էր, նրա աշխարհայեացքի,  
թէ փիլիսոփայական և թէ սօցիոլոգիա-  
կան, հիմնական դրութիւնները զարգացըր-  
ւած էին: Նա արդէն այդ թւականներին  
կազմում էր ուսական իրականութեան  
մէջ, մանաւանդ տեսական հիմնաւորումների  
և դրութիւնների տեսակէտից, մի կենդրոնա-  
կան անձնաւորութիւն: Նա կարգացւում  
է մեծ չափերով, տարածւում արագ և ազ-  
գում երկար ժամանակ ու խորը: Ճիշտ են  
նկատում, որ ուսւ գրողներից, անգամ ա-  
մենամեծ մտածողներից, ոչ ոք այն չափով  
չի կարգացել և ազգել ու զործել, որքան  
Ն. Կ. Միխայլովսկին: Ոչ Բէլինսկին, ոչ  
Չերնիշևսկին, ոչ Դոբրոլիւբովսկի ևն, չեն  
կարող համեմատել այդ կողմից Միխայ-  
լովսկու հետ: Ոչ ոք ուսւ գրողներից չէ ու-  
նեցիլ Միխայլովսկու նման երկարամեա,  
ամբողջ կէս դարեա բեղուն և և պայքարոտ  
գործունէութիւն, երկարամեա և բեղուն  
թէ վերացական մտքի, տեսական ինդիւ-  
սների սահմանում, և թէ հասարակական-քա-  
ղաքական կեանքի մէջ: Նրա զրական գոր-  
ծունէութեան յօրելեանը տօնեց 1900 թւին,  
իսկ ինքը մեռաւ 1904 թւին: Նա անդա-

դրում աշխատել և գործել է, նա ապրել և կուել է, տանջուել և ուրախացել ամբողջ կէս դար, մի մարդու ամբողջ կեանք. դա, իհարկէ, հեշտ է ասել: Այդպիսի կեանք չի ունեցել և ոչ մի խոշոր ոռուս հրապարակախօս-մտածող:

II.

Միխայլովսկու սօցիալ-փիլիսօփայական աշխարհայեցողութեան ընդհանուր բնութագրին արդէն պարզ է:

Բայց ի՞նչ էր ներկայացնում իրենից Ռուսաստանը, երբ երևան եկաւ Ն. Կ. Միխայլովսկին, ի՞նչ կարևոր և էական խնդիրներ էին զբաղեցնում առաջաւոր մտաւորականներին և, վերջապէս, որո՞նք են էպօխայի բնորոշ գծերը:

Քառասնական և յիսունական թւականները Ռուսաստանում ներկայացնում էին մի կողմ և հետաքրքրական շրջան: Արևմտեան Եւրոպայում արդէն առաջացել էին մի շարք արմատական յեղաշրջումներ և փոփոխութիւններ, յեղաշրջումներ և փոփոխութիւններ թէ սօցիալ-քաղաքական կեանքում և թէ մտաւոր աշխարհում: Մոշոր արդիւնաբերութիւնը ծաւալուում էր, կա-

պիտալիզմը նւաճումներ էր անում, դասակարգային շահերն իրար բաղխում և օրաւուր սրում, իսկ ժողովրդական խաւերի շերտաւորումը արագ կերպով առաջ էր գնում: Այս մի կողմից: Միւս կողմից առաջ էին եկել և հիմնաւորում էին սօցիալօգիական և սօցիալիստական թէօրիաներ, ինչպէս և կուսակցութիւններ:

Մի խիստ բեղուն և ուսանելի շրջան: Արևմտեան Եւրոպայի այդ յեղաշրջումները, առաջացած թէ վերացական մտքի և թէ սօցիալական կեանքի սահմանէն երում, չէին կարող չազդել ոռուսական իրականութեան վրա: Այդ տեսակէտից շատ յետ էր մնացել Ռուսաստանը Արևմտեան Եւրոպայից: Ռուսական իրականութեան մէջ կային խնդիրներ, այրող և կնճառտ խնդիրներ, որոնք արդէն վաղուց լուծել էին եւրոպական պետութիւնների մէջ և կորցրել իրենց այժմէական և այրող խնդրին յատուկ բնոյթը: Ամենայրող և այժմէական, անդամ ամօթ շարժող և մարդ-անհատի արածանաւորութիւնը խորապէս վերաւորող հարցը Ռուսաստանում համարում էր այդ ժամանակ ճորտատիրական կարգը, մի ստորացուցիչ վիճակ, որը շատ վաղուց Արևմտեան Եւրոպան մաշել էր:

Այսպէս, ժողովրդի, գիւղացիութեան արատագրման հարցն էր զբւած նոր փթթող Ռուսաստանի առաջաւոր մտաւորականների առաջ: Իսկ միաժամանակ ընդհանուր լինելիք էր, ընդհանուր բոլորի համար: Ամեն ինչ ժողովրդի համար, եւ ամեն ինչ ժողովրդի շահերի տեսակետից: Ահա այդ էպոխայի բնորոշ և յատկանշական դէպքերը, գեղեցիկ սկզբունքը: Ինչ չկար, և չէր էլ կարող լինել սուր զանազանաւորում ուսում մտաւորականների, ուսում ինտելիգենցիայի մէջ: Զերնիշնակիյ, Գորբուլիւրով, Ռուսպենսկիյ, Պիսարև, Լատով, Միխայլովսկիյ ևն. այս գեղեցիկ շարքը կարելի է դեռ երկար շարունակել, անձնաւորութիւններ, որոնք աշխատում և պայքարում էին ժողովրդի համար և հէնց այդպէս էլ կոչւում էին—«նարոզնիկներ»: Իսկ այդ շարժումը աւելի ուշ, 90-ական թւերին աւելի ծաւալուում և խորանում է, ստանալով մի կազմակերպութեան բնաւորութիւն— «նարոզնիկական կազմակերպութիւն»:

Ահա այդ և նման հարցերին անխտիր տարւած էր ուսական ինտելիգենցիան: Ռուս մտաւորականները հաւաքում, միացնում էին ցրւած ոյժերը, խտացնում կրօնողների շարքերը մի ընդհանուր կուրի համար: Կուր ընդհանուր թշնամիների դէմ և

կուր ժողովրդի շահերի տեսակետից: Մի զարմանալի հերոսական պերիօդ էր դա ուսական կեանքում՝ մտաւոր և հասարակական շարժման տեսակետից: Բոլորը դժգոհ էին տիրող հասարակարգից, մարդու անհատականութիւնը և արժանաւորութիւնը նւաստեցնող կարգերից: Զարմանալի արագութեամբ և անսպասելի կերպով բուսնում, հրապարակ էին գալիս նոր ու նոր ոյժեր, մտքի առաջադիմութեան և կեանքի յեղաշրջման համար պայքարող մարտիկներ: Եւ հետզհետէ, օր-աւուր խտանում էր նարոզնիկների շարքերը, մեծանում պրօգրէսիվ բանակը: Հին աշխարհայեացքը փուլ էր գալիս հէնց իր հիմքից: Ռուսաստանը ապրում էր իր Sturm und Drang Periode-ը, նման գերմանականին, ուր, ասես գետնի տակից, բուսեցին մի շարք խոշոր գէմքեր՝ Գէօթէ, Շիլլեր ևն, որոնք տապապալեցին հին աշխարհայեացքը, հին կենսահայեցողութիւնները:

Ահա այսպիսի պայմանների և իրականութեան մէջ է երևան գալիս Ն. Կ. Միխայլովսկին: Նա յայտնում է թէ որպէս թէօրետիկոս և թէ որպէս հասարակական գործիչ: Իսկ այդպիսի անձնաւորութեան, խտրուն միտք և ջերմ սիրտ ընդդրող

1004  
1883



նաւորութեան կարիքը աւելի քան ակնյայտ էր և անտարակուսելի: Ժամանակակից Ռուսաստանն էլ իր հերթին տալիս էր պարարտ և իրական հող Միխայլովսկուն՝ գործադրելու լիապէս թէ իր մտքի ընդհանրացնող ոյժը և թէ իր հոգու թափը: Այստեղ անհրաժեշտ էր և հասարակական գործունէութիւն, և՛ վերացական մտքի, տեսական աշխատանք: Եւ Միխայլովսկին հրապարակ է հանում ամբողջապէս ժողովրդական շահերի համար իր ջերմ սիրտը, հոգու ոյժը, մտքի զգաստութիւնը, կարճ, իր ամբողջ փիլիսոփայական-սոցիոլոգիական էրուդիցիան, պատրաստութիւնը:

Սկսում է մի գերադանցօրէն գեղեցիկ, գրաւիչ և վեհ պայքար: Նա պայքարում է երկու Ֆրօնտի վրա, թէ վերացական մտքի աշխարհում, տեսական հարցերի մշակման հողի վրա և թէ հասարակագիտական քաղաքական կեանքում: Նա պայքարում է անդադարում, առանց երբէք զրիչը վար գնելու: Եւ նա միշտ էլ պատուաւոր կերպով, որպէս յաղթանակող է դուրս գալիս երկուստեք մղւող կուից, նամանաւանդ տեսական հարցերի վերաբերմամբ: Իսկ այդ խիստ դժւարին կուում, այդ անխնայ պայքարի մէջ նա միշտ էլ առաջնորդում է իր,

սկզբում դեռ աղօտ կերպով պատկերացրած, ընդգրկող Պրաւդայի տեսակէտով: Նա միշտ էլ, թէ վերացական մտքի սահմանում և թէ հասարակական կեանքում, ինչպէս և իր զրական-հրապարակախօսական գործունէութեան մէջ, որոնում էր ճշմարտութիւնը, այն երկեակ ճշմարտութիւնը, որի մասին նա այքան երազել է և որն եղել է նրա կէտ-նպատակը, նրա սկզբունքների Սկզբունքը—Պրաւդան:

Այսպէս է պատկերանում մեզ Ն. Կ. Միխայլովսկին թէ իր կապիտալ գրածքներում, սոցիոլոգիական տրակտատներում և թէ իր ամենօրեա գրախօսականներում, անգամ զրական թեթև նկատողութիւնների մէջ:

### III

Ահա այդ ժամանակ և այդ պայքարումն է մշակւում ռուսական սուբիեկտիվիստական-սոցիոլոգիական դօկտրինը, կազմակերպւում ռուսական շիօլան:

Ն. Կ. Միխայլովսկու դերը ու աշխատանքը ռուսական սոցիոլոգիական-սուբիեկտիվիստական և պօզիտիվիստական աշխարհայեցողութեան մշակման և հիմնաւորման մէջ շատ խոշոր է և վճռական: Մի-

խայլովսկին կարողացաւ ամենազեղեցիկ կերպով ձևակերպել և արտայայտել, անգամ կլասիկ Փորմուլաների մէջ, ուսուսական պրօգրէսիվ բանակի, ինչպէս և ուսուսական կեանքում ակտիվ կերպով գործողների փիլիսօփայական մտորումները և տեսակէտը: Միխայլովսկին ունի, անտարակոյս, իր նախորդները, ուսուսական գագրոցի հիմնադիրները, որոնք իրեց անկասկածելի մասն ունին այդ հետաքրքրական և վերին աստիճանի զբաւիչ կօնցեոյցիայի յղացման և հիմնաւորման մէջ: Գերցեն, Չերնիշևսկիյ, Լաւրով — անա համակող անձնաւորութիւնները և ուս խոշոր մտածողների շարքը, որոնց մէջ միացած էր թէ կեանքի ակտիվ գործող-մարտիկը և թէ վերացական մտքի ներկայացոցիչը: Այդ երկու գծերը, այդ երկու կողմերը յատուկ են եղել այդ շրջանի ուս մտածողներին: Դա կեանքի անմիջական պահանջն էր: Իայց Միխայլովսկին եղաւ գրանց մէջ ամենամեծ թէօրեաիկոսը: Նա ընդգրկում էր խորունկ, փիլիսօփայական միտք, հարուստ, եւրոպական մտքով հարուստ էրուդիցիա և գիտութիւնների, թէ բնական և թէ հասարակական գիտութիւնների, խորը ճանաչողութիւն: Եւ շնորհիւ այդ բոլոր բարեմասնութիւնների, նա

կարողանում է ստեղծել ինքնուրոյն շիօլա, առջ է բերում գիտական-սօցիօլօգիական շարժում, ինքնուրոյն եւրոպականից, խոշոր չափով և իր էական գծերով ուսուսական ծնունդ, ուսուսական իրականութեան անմիջական ազդեցութիւնները իր վրա կրող: Նա քննադատում է եւրոպական սօցիօլօգիական ուղղութիւնները, առանձնապէս սպենսէրեան ըիօլօգիական սօցիօլօգիան, վերլուծման նիւթ դարձնում բնագիտութեան և հասարակագիտութեան երևան: բերած պրօբլէմները: Իսկ այս խորունկ և շատ բան ոչընչացնող քննադատութիւնը տալիս է Միխայլովսկու սօցիօլօգիական ըմբռնումը և դօկտրինը. սա բռնում է համաշխարհային սօցիօլօգիական ուղղութիւնների շարքի մէջ իր պատուաւոր և ինքնուրոյն տեղը:

Այդ քննադատութեան արդիւնքը ոչ միայն լինում է նրա սօցիօլօգիական դօկտրինի մշակումը, այլ ընդհանրապէս նրա Պրաւդայի սիստեմի մշակումը, մի սիստեմ, որ լուծում էր այն անտիւնօմիան, հակասութիւնը, որը զբաղեցնում էր այդ ժամանակւայ մտածողներին-թէօրեաիկներին և գործիչներին և որն արդիւնք էր հասարակագիտութեան և բնագիտութեան: Դա անհրաժեշտութեան և բարոյականի, օրիկտիվի և

սուբեկտիվի, բնական ընթացքի և իդէալիկատեգորիաների անտինոմիան էր: Գա էր նրա որոնումները, պրպտումները կէտ—նպատակը, և նա հասաւ դրան: Ահա այդ պրօբլէմի լուծումն է մի առանձին վեհութիւն տալիս Միխայլովսկու թէօրիային:

Եւ այդ ընդգրկող տեսակէտով գալիս է նա դաստիարակելու սերունդները, մի կողմից ուղղութիւն տալու ողու երիտասարդ ոյժերի որոնումներին և մտածողութեան և, միւս կողմից, զեկավար տեսակէտ հանդիսանալու ակտիվ ոյժերի գոծունէութեան համար: Նա դաստիարակում, ազդում և զեկավարում է ամբողջ կէս դար, մի մարդու ամբողջ կեանք: Գեղեցիկ և ուսանելի է եղել այդ կանքը, ողու սօցիօլօգփիլիսօփայի կեանքը, պայքարից և յաղթանակներից հիւսուած այդ գեղեցիկ կեանքը: Նրա ձայնը հեղինակաւոր էր, խօսքը համոզեցուցիչ: Նա մի հեղինակութիւն էր: Նրա խօսքին, նրա հեղինակաւոր ձայնին և զնահատմանն էր սպասում ողու ինտելլիգենցիայի մի խոշոր և յայտնի մասը: Նա դառել էր այդ մասի թէօրեակոսը, և այդ պիսին էլ մնաց մինչև մահը: Նրա կեանքի վերջին տարիներն անգամ եղել են դարմանալիօրէն բեղմնաւոր. նա գրիչը երբէք վար չի

ղրել: Նա արտայայտել է զրեթէ բոլոր ևրևոյթների մասին, և՛ փիլիսօփայական բնոյթ կրող, և՛ բարոյագիտական, և՛ սօցիօլօգիական, և՛ զուտ գրական-գեղարւեստական, և՛ բիօլօգիական, և՛ պատմափիլիսօփայական, և՛ հրապարակախօսական ևն:

Բայց ամեն տեղ էլ, այդ բոլոր բազմազան և պէսպիսի թեմաներ ունեցող գրւածքների մէջ էլ ձեզ երևում է նոյն Ն. Կ. Միխայլովսկին, նրա պարզ դէմքը, նրա զեկավար տեսակէտը, ընդգրկող Պրաւդայի տեսակէտը, երկեակ ճշմարտութիւնը: Այսպէս են բոլոր խոշոր մտածողները, որոնք ունեն ամբողջութիւն, ընդգրկող և ամբողջական հոգի, որից բղխում են բոլոր մտքերը, նոյն և միևնոյն աղբիւրից, նոյն և միևնոյն էութիւնից զանազան կողմեր տարածում, ճառագայթում է մի կիզակէտից, միայն յետոյ նորէն միևնոյն կիզակէտի շուրջը խմբելու հաստատ պայմանով՝ մի ներդաշնակ, ամբողջական և միաձոյլ միութիւն կազմելու համար:

Այդպէս էր անա Ն. Կ. Միխայլովսկին, ողու մեծ փիլիսօփա-սօցիօլօգը:

Ճիշտ է, Միխայլովսկու հիմնական մտքերը ու գրութիւնները, թէ սօցիօլօգիական և թէ փիլիսօփայական, ցրւած են նրա

բոլոր զբաժաններում. թէև նա չի տւել իր փիլիսոփայական-սօցիոլոգիական հայեացքներն սիստեմատիկ վերլուծումը, բայց յամենայն դէպս, անտարակուսել է այդ հիմնական դրութիւնների և մտքերի միջև եղած օրգանական կապը, ներքին անքակտելի առնչութիւնը: Ճիշտ է, Ն. Կ. Միխայլովսկու սօցիոլոգիան մի լրիւ կուրս չէ, ինչպէս նկատում է Իւժակով\*), բայց, յամենայն դէպս, նա ունի մի օրիգինալ և հետաքրքրական սօցիոլոգիական վարդապետութեան բոլոր կարևոր գծերը ու յատկութիւնները: Այդ չի կարող ոչ ոք ժխտել: Ասում են, որ Միխայլովսկու սօցիոլոգիան մի կուրս չէ. դա մի աւելորդ պնդում է և դա չի կարող մեղադրանք համարւել: Նրա սօցիոլոգիան չէր էլ կարող մի կուրս, մի սօցիոլոգիական լրիւ կուրս կազմել: Ով ծանօթ է այդ ժամանակէլս ուսական հասարակական կեանքին և այդ կեանքի առաջացրած անմիջական և կենսական պահանջներին և, միւս կողմից, քաջ ծանօթ է Ն. Կ. Միխայլովսկու խառնաձգին, նա այդպիսի պահանջ չի էլ անի, առնուողն նման պահանջը կընդունի անտեղի և աւելորդ: Հա-

\*) Соціол. доктрина Н. А. Михайловскаго.

ասարական կեանքը եռում էր, իրար էին բաղխում մի շարք կենսական աշխարհայեացքներ և դրանցից իւրաքանչիւրը ներկայանալով ուրոյն պահանջներով և կարիքներով, հասարակական-քաղաքական կեանքը պահանջում էր ակտիվ մասնակցութիւն, գրական գործունէութիւնն իր բաժինն էր ուզում ևն: Ահա այդպիսի պայմաններն մէջ նա չէր կարող առանձնանալ կտրինետում, կտրելով հասարակական կեանքից, և պարագել դուռ գիտական, տեսական աշխատանքով, լրացնել իր սօցիոլոգիայի բաց մնացած մասերը, ինչպէս և հիմնաւորել իր փիլիսոփայական աշխարհայեացքը, առանց մասն ունենալու մօմենտի, օրւայ հարցերի, այժմէական և այրող հարցերի լուծման մէջ: Դա Միխայլովսկու խառնաձգի համար ուղղակի անհնարին էր: Թէև նա մտադիր էր և ուզում էր այդ կարևոր աշխատանքը յետոյ կատարել, բայց նրան չաջողւեց դա, նա խաղաղ ժամանակ չունեցաւ դրա համար:

Ն. Կ. Միխայլովսկուն չաջողւեց այդ գործը: Բայց դա մի գործ է, մի խիստ կարևոր աշխատանք, որը պէտք է կատարածել: Այդ կարևոր բացը ձգտում են ծածկել ողւս սօցիոլոգիական-սուբիեկտիվիս-

տական շփուրայի այժմեան թէօրեաիկները, երիտասարդ ոյժերը, որոնց մէջ իր պատ-  
րաստութեամբ աչքի է ընկնում Վիկտոր  
Չերնովը:

IV

Կարծում ենք, արդէն պարզ է Մի-  
խայլովսկու փիլիսոփայական-սօցիօլօգիա-  
կան աշխարհայեացքը, ինչպէս, ընդհանուր  
գծերով: Պարզ է այդ ընդհանուր գծերից  
նոյնպէս և այն, որ Ն. Կ. Միխայլովսկին  
շատ աւելի մեծ է և միեւնոյն ժամանակ  
անհամեմատ օրիգինալ է որպէս սօցիօլօգ,  
քան որպէս փիլիսոփա: Այս հանգամանքը  
հէնց առաջին րօպէից աչքի է դարնում,  
անգամ նրա մի գրածքը կարդալիս:

Ն. Կ. Միխայլովսկին առհասարակ  
շատ քիչ է զբաղւել, մանաւանդ մասնագի-  
տօրէն, գուտ փիլիսոփայական-իմացարա-  
նական խնդիրներով, այն ինչ նրա կապի-  
տալ գրածքների մեծագոյն մասը կրում է  
գերազանցօրէն սօցիօլօգիական և սօցիալ-  
փիլիսոփայական բնաւորութիւն, ինչպէս  
օրինակ, «Что такое прогрессь?», «Борьба  
за индивидуальность», «Теория Дарвина и  
общественная наука», «Герои и толпа»,

«Что такое счастье?» ևն, գրածքներ, ուր  
շօշափւում ևն մի շարք հասարակագիտա-  
կան կնճառա խնդիրներ, սօցիալ-փիլիսո-  
փայական պրօբլէմներ: Նա երբէք չի զբաղ-  
ւել մասնագիտօրէն փիլիսօփայութեամբ.  
Նա չի եղել մասնագէտ փիլիսօփա: Նա ա-  
ւելի շուտ եղել է մասնագէտ սօցիօլօգ,  
թէև նա շատ դժգոհում էր, երբ նրան ան-  
ւանում էին «սօցիօլօգ»: Բայց փաստն այն  
է, որ նա որպէս սօցիօլօգ, որպէս հասարա-  
կագիտական խնդիրների թէօրեաիկոս  
խոշոր դէմք է ուսական գրականութեան  
մէջ, ինչպէս ինքնատիպ մտածող համաշ-  
խարհային սօցիօլօգների կողքին: Արդէն  
Միխայլովսկու առաջին սօցիօլօգիական  
տրակտատում, «Что такое прогрессь?»  
աշխատանքի մէջ բերեղացած կերպով հ-  
րեան է բերւած նրա սօցիօլօգիական և սօ-  
ցիալ-փիլիսօփայական աշխարհայեացքի  
ուրւագիծը: Եւ վստահօրէն կարելի է այդ  
աշխատութիւնը համարել Միխայլովսկու  
ծրագիր-գրածքը: Եւ յիրաւի, արդէն 60-  
ական թւերի վերջերին, երբ դրւած էր  
նրա այդ սօցիօլօգիական տրակտատը  
(1869 թ.), պարզ էր ուս մտածողի Ֆիլիթ-  
նօմիան որպէս սօցիօլօգի, արդէն գրւած  
էր նշա ընդգրկող Правда-ի սկզբունքը,

հետևապէս լուծւած էր նոյնպէս յայտնի անտինոմիան, անտինոմիան правда-ճշմարթեան և правда-արդարութեան, բնական ընթացքի և իդէալի, օբիեկտիվ ճշմարտութեան և սուբիեկտիվ ճշմարտութեան կատեգորիաների:

Եւ մինք խորապէս համոզւած ենք — որքան թոյլ է տալիս ենթադրելու Եւրոպայի սօցիօլօգիական ուղղութիւնները և հոսանքները մասին ունեցած մեր ճանաչողութիւնը, — եթէ Եւրոպան ծանօթ լինէր Միխայլովսկու սօցիօլօգիական գօհարինի հետ, նա կդասէր եւրոպական ամենայայտնի սօցիօլօգները շարքում, իսկ նրա սօցիօլօգիական սուբիեկտիվիզմին կտրւէր խոշոր, ինքնուրոյն և ուշադրաւ տեղ համաշխարհային սօցիօլօգիական գրականութեան մէջ: «Միխայլովսկուն պատկանում է ընդհանրապէս սօցիօլօգիական գրականութեան մէջ խիստ պատւաւոր տեղ, նկատում է հոշակաւոր պատմարան-սօցիօլօգ Կարևը: Միխայլովսկին մտում է միանգամայն ինքնուրոյն XIX դարի սօցիօլօգները մէջ, թէև նա հետևել է Կօնտին, Սպենսերին, Կարլ Մարքսին են»\*), աւելացնում է յարգելի ուսումնասիրողը:

\*) Бродягузъ — Ефронъ, Энцикл. словарь. XIX.

Եւ մենք ծանրանալու ենք յատկապէս և առանձնապէս նրա սօցիօլօգիական վարդապետութեան վրա, աշխատելով տալ այդ վարդապետութեան սխտեմատիկական վերլուծումը, որքան, իհարկէ, այդ թոյլ կտան մեղ ժամանակը, հանդամանքները ու մեր ոյժերը, ինչպէս և սոհասարակ հնարաւորութիւնը:

Բայց նախ քան այդ կարևոր և հետաքրքրական, միեւնոյն ժամակ խիստ հաճելի աշխատանքին անցնելը, կամենում ենք տալ նրա փելիսօփայական ըմբռնողութեան վերլուծումը, իհարկէ, միայն ընդհանուր գծերով:



II. ՄԻԽԱՅԼՈՎՍԿՈՒ ՓԻԼԻՍՕՓԱՅԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

I

Արդէն ներածութեան մէջ նկատեցինք, որ փիլիսոփա-Միխայլովսկին շատ աւելի պակաս-արժէք ու նշանակութիւն ունի սոցիոլոգ-Միխայլովսկու հանդէպ: Այս գրութիւնը անկասկած է: Բայց առ այժմ նա մեզ չի գրադեցնում որպէս սոցիոլոգ:

Այժմ մեր առաջ գրած է իրօք մի դժլարին խնդիր— տալ Միխայլովսկու փիլիսոփայական աշխարհայեացքի բնութագիրը, նրա փիլիսոփայութեան հիմնական գրութիւնները: Դժլարին աշխատանք, թէև միւս կողմից հետաքրքրական ու գրաւիչ աշխատանք: Ասում ենք դժլարին է այդ աշխատանքը, քանի որ ոուս հուշակաւոր մտածողը չի տւել որևէ գրւածք, ուր բիւ-

րեղացած կերպով զարգացրած լինէր իր փիլիսոփայական կօնցեպցիայի հիմնական գրութիւնները: Եւ անհամեմատ դիւրին աշխատանք է տալ Միխայլովսկու սոցիոլոգիայի վերլուծումը, քան նրա փիլիսոփայութեան, որովհետև նրա սոցիոլոգիական հիմնական գծերը, անգամ կլասիկ ֆորմուլաների մէջ, զարգացրած են մի շարք սոցիոլոգիական ուշագրաւ տրակտատներում, որոնք մենք առիթ ունեցանք յիշատակելու: Միխայլովսկու փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնական գրութիւնները գրւում են հէնց այդ սոցիոլոգիական գրւածքների, ինչպէս և նրա մի շարք հրատարակութասական և քննադատական աշխատութիւնների մէջ: Ահա հէնց այդ իսկ պատճառով խիստ դժլարանում է հետազոտողի, ուսումնասիրողի աշխատանքը:

Հէնց սկզբից պէտք է յայտնենք, որ մի ընդհանուր և գերազանցօրէն միաձոյլ փիլիսոփայական կօնցեպցիայի գոյութուն իսկոյն աչքի է խփում, երբ մարդ ուշագրութեամբ կարդում է նրա ոչ միայն կապիտալ և սկզբունքային-տեսական աշխատութիւնները, այլ մինչև իսկ նրա շատ աւելի երկրորդական նշանակութիւն և արժէք ունեցող գրւածքները, օրինակ, նրա օրւայ

և հրատարակախօսական բնույթ կրող յօդ-  
 ւածները: Այդ անտարակուսելի է: Ուշա-  
 դիր և գիտակ ընթերցողը անմիջապէս  
 նկատում է, որ այդ բոլոր մտքերը հետե-  
 ւողականօրէն բղխում են մի ընդհանուր և  
 համայնապարփակ աշխարհայեացքից:

Հաւաքել այդ՝ դանազան էջերում ցըր-  
 ւած՝ փիլիսօփայական մտքերը և գրու-  
 թիւնները ու սխառմի ենթարկել, գնելով  
 մի ամբողջական և ներդաշնակ միութեան  
 մէջ—անա ինչու՞ն է կայանում աշխատան-  
 քի դժարութիւնը: Այսպիսի պայմանների  
 տակ խիստ դժւար է, եթէ չստենք անհա-  
 րին, տալ հէնց առաջին անգամից լիակա-  
 տար, անթերի մի գործ: Այդպիսի մի գործ  
 տալուց դեռ շատ հեռու է անգամ ոուս գի-  
 տական-փիլիսօփայական աշխարհը: Այդ  
 տեսակէտից դեռ շատ քիչ ոուս մտածողներ  
 են փորձել մօտենալ Միխայլովսկու գըր-  
 ւածքներին վերլուծմանը: Այդ կողմից շատ  
 գնահատելի է ոուս սօցիօլօգիական-սուրբի-  
 եկտիվիստական և ինդիվիդուալիստական  
 շիօլայի երկտասարդ ոյժերի ջանքը ու աշ-  
 խատանքը, որոնք առանձնապէս վերջին  
 տարիներս սկսեցին յշակիլ իրենց փիլիսօ-  
 փայական աշխարհայեացքը:

Ստացինք, որ Միխայլովսկին որպէս

իմացաբան-փիլիսօփա շատ աւելի նւազ մե-  
 ծութիւն է, քան որպէս սօցիօլօգ: Այդպի-  
 սին է նրա ամեն մի կապիտալ աշխատան-  
 քի անմիջական տպաւորութիւնը: Բայց  
 այդ այդպէս լինելով հանդերձ, չի կարելի  
 համաձայնել այն ոուս քննադատների հետ,  
 որոնք Միխայլովսկու փիլիսօփայական աշ-  
 խարհայեացքը ցածր են համարում ամեն  
 քննադատութիւնից կամ յայտարարում են,  
 թէ դա «թիթի քննադատութեան անգամ չի  
 դիմանայ»:\* ) Զի կարելի համաձայնել նոյն-  
 պէս Բազուսնիկի հետ, երբ նա պնդում է,  
 թէ քննադատական փիլիսօփայութիւնը հա-  
 մարում էր Միխայլովսկու համար մի մե-  
 տաֆիզիկա, թէև, պէտք է նկատենք, յար-  
 գելի ոուս գրողի, Բազուսնիկի շատ մտքերը  
 մենք միանգամայն բաժանում ենք՝ յայտ-  
 նած Միխայլովսկու մասին:

Մեզ թւում է, այստեղ կայ տարբեր  
 մասշտաբներով և տեսակէտներով մօտենալու  
 ինդիր: Մեզ թւում է, որ քննադատները  
 ճիշտ չեն մօտենում Միխայլովսկուն և հէնց  
 դրա համար էլ նրանց գնահատական խօսքը  
 յայտնի չափով չի համապատասխանում ի-

\* ) В. Личковъ. «Субъективизмъ и суб-  
 методъ, критическій очеркъ о Михайловскомъ.  
 (Вопросы общественѣдѣнія).

րականութեանը և, հետևապէս, մեղանշում է ճշմարտութեանը:

Ճիշտ է, որ Ն. Կ. Միխայլովսկու «փիլիսոփայական բազածն աղքատ» է, ինչպէս նկատում է Բաղունինիկ. ճիշտ է, կաւելացնենք մենք, որ նա քիչ է զբաղւել փիլիսոփայութեամբ, փիլիսոփայական-իմացաբանական խնդիրներով. ճիշտ է միաժամանակ, որ նա եղածն էլ չի ենթարկել սխտեմի: Այս բոլորը ճիշտ է: Բայց չպէտք է աչքաթող անել և մոռանալ, որ մի փիլիսոփայական ընդգրկող աշխարհայեցողութիւն կայ: Եւ այդ փիլիսոփայական ընդհանուր սողմերը, թէգիտները, անգամ կլասիկ բանաձևերը հազարաւոր էջերում ցրիւ են եկած: Ահա այդ գրութիւնների վրա յենւելով պէտք է բնորոշել նրա փիլիսոփայական մտածողութիւնը և որոշել նրա զտրգացման հետեղական ու հաւանական ընթացքը:

Աշխատենք, ուրեմն, բռնել այդ եղած թելերից և տալ նրա փիլիսոփայութեան նկարագիրը: Այս տեսակէտը, կարծում ենք ամենաճիշտն է և արգարացին, ինչպէս և ամենալաւ չափն է ուսւ մտածողին, առհասարակ նման մտածողներին գնահատելու և միևնոյն ժամանակ ըստ արժանւոյն նրանց տեղը որոշելու համար:

Այս մէկ: Միւս կողմից պէտք է նկատել—և այդ հանգամանքը շատերն աչքաթող են անում—, որ Միխայլովսկու ընդգրկող փիլիսոփայական աշխարհայեցքի մասերը, նրա սօցիոլոգիական, էթիքական, գնօսելօլոգիական և այլ բնութեաններն այնպէս սերտօրէն կապակցւած են իրար հետ և այնպիսի ներքին առնչութեան, յարաբերութեան մէջ են գտնւում, որ ուղղակի անհնարին է ժխտել այս կամ այն մասը՝ առանց միւսները բացասելու: Նրա ընդգրկող աշխարհայեցքի այդ էական-բաղկացուցիչ մասերը միացած են մի միաձուլ սխտեմի մէջ: Պրաւդայի սխտեմն է այդ, ինչպէս արդէն նկատել ենք ներածութեան մէջ: Պրաւդան ընդգրկում է նրա ամբողջ աշխարհայեցողութիւնը— правда-ճշմարտութիւնը և прав-да-արդարութիւնը: «Այսպիսի խօսք, թւում է, չկայ ոչ մի եւրոպական լեզուի մէջ: Ասես միայն ռուսերէն լեզուով ճշմարտութիւնը և արդարութիւնը կոչւում են մէկ և միևնոյն խօսքով և ձուլւում մի մեծ ամբողջութեան մէջ»:<sup>\*)</sup> Պրաւդան, իր այդ խորունկ և լայն իմաստով, միշտ էլ կաղմիլ է Միխայլովսկու գեղեցիկ որոնումների նպատակը: Եւ

\*) Пол. соб. соч. I т. ст. V.

Правда-ճշմարտութեան բաժանումը правда-արդարութիւնից, այսինքն «թէօրեաիկ երկնքի ճշմարտութեան բաժանումը պրակտիկ երկրի ճշմարտութիւնից» նրան ոչ միայն չի բաւարարել, այլ միշտ էլ վերաւորել է: «Правда-ի սիստեմը պահանջում է այնպիսի սկզբունք, որը ա) ծառայէր որպէս դեկլարող սկզբունք շրջապատող աշխարհի հետադասութեան ժամանակ և, հետեւապէս, պատասխան տար այն բոլոր հարցերին, որոնք բնականօրէն առաջանում են մարդու մէջ. բ) որը ծառայէր որպէս դեկլար տեսակէտ պրակտիկ գործունէութեան մէջ և, հետեւապէս, պատասխան տար խղճի և բարոյական գնահատման այն բոլոր հարցումներին, որոնք նոյնպէս բնականօրէն ծագում են ամեն մի մարդու մէջ»:<sup>\*)</sup>

Այս բանաձևի մէջ շատ պարզ կերպով գրեւոր է այն միտքը, որ Միխայլովսկու ընդգրկող Правда-ի սիստեմի մի անբաժան-բաղկացուցիչ մասի, правда-ճշմարտութեան հիմնաւորութեամբ զբաղւում է փիլիսոփայական-իմացարանական տեսակէտը, իսկ միւս մասի, правда-արդարութեան հիմնաւորութեամբ զբաղւելու է սոցիոլոգիական-

\*) Соч. IV т. ст. 406 «Письма о правдѣ и неправдѣ».

էթիքական տեսակէտը: Բայց այդ աշխատանքը կատարւում է, ինչ խօսք, համայնապարփակ Правда-ի տեսակէտով և ոգով: Ահա հէնց դրա համար էլ մենք պնդում էինք, որ անհնարին է մերժել մէկը և ընդունել միւսը: Միայն կարելի է, իհարկէ, համաձայնել այն մտքի հետ, որ կարող է Правда-ի սիստեմի այս մասերից մէկը աւելի հիմնաւորւած, մշակւած զարգացրւած լինել, քան միւսը: Եւ այդպէս էլ է Միխայլովսկու մօտ:

Ինուսական իրականութիւնը 60-ական, 70-ական և 80-ական թւականներում, կենքի մի շարք այրող խնդիրները՝ յատկապէս գործնական կարիքներ շոշափող, ստիպում են բնականօրէն աւելի գործնական կեանքի երևան բերած հարցերով զբաղւել, ինչպէս և որոշ չափով էթիքական-սոցիոլոգիական պրօբլէմների վերլուծմամբ պարապել, քան զուտ փիլիսոփայական-իմացարանական աշխատանք կատարել: Այդպէս է վարւել և՛ Ն. Կ. Միխայլովսկին: Եւ չէր էլ կրող այլ կերպ լինել: Միխայլովսկու Правда-սիստեմի առաջին մասը, правда-ճշմարտութիւնը այն չափով և խորութեամբ չէ հիմնաւորւած, ինչ չափով և ինչ խորութեամբ զարգացրւած է երկրորդ մասը, правда-արդարու-

թիւնը: Եւ այս մասում Ն. Կ. Միխայլովսկին շատ աւելի պարզ և ամբողջացած կերպով է երևան գալիս, քան առաջին մասում: Բայց այս հանգամանքը, կրկնում ենք, երբէք չի խանգարում, որ երկու մասերը, այդ երկու էական-բաղկացուցիչ մասերը ներդաշնակօրէն, առանց ներքին հակասութեան, միմեան մի գերազանցօրէն գեղեցիկ ամբողջութեան մէջ ПРАВДА-ի, այն իմաստով, ինչպէս ըմբռնում է Միխայլովսկին:

Եւ մեզ թւում է, Միխայլովսկու դէմքը, նամանաւանդ նրա փիլիսոփայական տեսակէտը ճիշտ կերպով բնորոշելու համար և, որ գլխաւորն է, նրա նշանակութիւնը չնւազեցնելու համար, պէտք է անպայման ի նկատի առնենալ մեր դիտողութիւնները, մեր զարգացրած տեսակէտը: Ահա այդ տեսակէտով մենք պէտք է առաջնորդենք մեր աշխատութեան մէջ, նրա փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնական դրութիւնները վերլուծումը տալիս:

Դիմենք այդ վերլուծման:

II

Հակառակ Ն. Կ. Միխայլովսկու քննադատներին պնդումներին, նա իր փիլիսոփա-

յական կօնցեպցիայով շատ մօտ է կանգնած քննադատական փիլիսոփայութեան, նամանաւանդ այսպէս կոչւած էմպիրիօկրիտիցիզմին, Մախի և Աւենարիուսի փիլիսոփայական դրութիւններին և ըմբռնումներին: Միխայլովսկու շատ դրութիւնները և Փօրմուլաները զուգադիպում են նոյնպէս քննադատական փիլիսոփայութեան ժամանակակից ներկայացուցիչների դրութիւններին և հիմնական մտքերին, ինչպէս Ռիլի, Լասի ևն: Այս հանգամանքը աւելի պարզ կացուցանելու համար, ինչպէս և աւելի ըմբռնելի դարձնելու համար Միխայլովսկու փիլիսոփայական վարդապետութեան հիմնական դրութիւնները, մի խօսքով, նրա փիլիսոփայական կօնցեպցիայի բնոյթը աւելի պարզ դարձնելու համար, մենք կաշխատենք տեղին և յարմար պարագային միշտ էլ մի զուգահեռադիմ անցկացնել քննադական փիլիսոփայութեան, նամանաւանդ էմպիրիօկրիտիցիզմի և Միխայլովսկու փիլիսոփայութեան դրութիւնների և Փօրմուլաների միջև:

«Բոլոր հակաբնագանցական, իմանսենտ մասձողների մէջ Ռ. Աւենարիուսը

ամենաարմատականն է»,\*) ասում է էվալդ: Նոյն այս խօսքերը ամբողջապէս կարելի է կրկնել նաև ոռւս մտածողի վերաբերմամբ և այդ որակումը աւելի քան տեղին է: Մի-խայլովսկին, յիբաւի, ծայրայեղ և համոզ-ւած յակաբնագանցագէտ է:

Այդ է ասում նրա ամեն մի գրածքի ամեն մի էջը: Մետաֆիզիքական, արանս-ցինդենտ մտածողութիւնը որևէ տեղ չունի նրա փրկիսօփայական ըմբռնողութեան մէջ: Նա մի զրտական միտք ունի. նրա աշխարհայեցողութիւնը կրում է անվիճելի և գե-րազանցօրէն պիտական ոգի: Նա կանգնած է իրական հողի վրա և երբէք չի կամենում այդ իրականութեան սահմանները անցնել: Նա մտում է, այլ խօսքով, փորձի շրջա-նակի մէջ, և հէնց այդ փորձն էլ կազմում է նրա ելակէտը:

Մեթօզօլօգիական տեսակէտից Միխայ-լովսկին, Աւենարիուսի նման, ճանաչում է մի հետևողական պսիխօլօգիզմ. ըստ այդ ըմբռնողութեան, սոյն, ինչ կայ, մի հոգեբա-նական փաստ է: Իսկ մետաֆիզիկայի վե-րաբերմամբ ոռւս սօցիօլօգ-փիլիսօփային

\*) Avenarius als Begründer d. Empirio-kritizismus. S. 5.

կարելի է համարել ֆենօմենալիստ: Նա չի ճանաչում տրանսցենդենտ հասկացողու-թիւններ. նա չի ճանաչում, որովհետև նա ընդունում է, որ սուբիեկտը չի կարող ինքն իրենից հրաժարել: «Մարդու ճանա-չողութիւնը պայմանաւորում է մարդու բնութեան յատկութիւններով»\*), յայտարարում է Միխայլովսկին: «Տեսական սահմա-նում, բաւելացնում է նա մի փոքր յետոյ, մենք թողել ենք բոլոր դատողութիւններն այն մասին, թէ որքան համապատասխանում է «իրն ինքնինը», նումէնը իր արտացոլ-մանը, ֆենօմենին: Թողել ենք, որովհետև ճանաչել ենք մեր սահմանը և ընդունել մե-տաֆիզիքական ճանաչողութիւնը մեզ հա-մար անհասանելի»:\*\*)

Այս տողերից արդէն ինքնին պարզ է, որ Միխայլովսկին համոզւած ֆենօմենալիստ է և ոխերիմ թշնամի ընազանցական ըմբռ-նողութեան: Նա ընդունում և ճանաչում է միայն ֆենօմէնը, երևոյթը. հասարակական և ընական երևոյթներն են կազմում միայն գիտական, ինչպէս և փիլիսօփայութեան օրիելիտը, նրա անալիզի և ուսումնասիրու-

\*) IV T. CT. 62.

\*\*) ibid

թեան անմիջական և իրական նիւթը, որոնց մենք տեսնում ենք, ապրում, զրում, շօշափում և էքսպերիմենտից չեն խուսափում. երևոյթներ, որոնք, մի խօսքով, մարդու համար ըմբռնելի և հասկանալի են, իհարկէ, իր տեւալ օրդանիզացիայով: Եւ հէնց այդ իսկ պատճառով ողջ մտածողի փիլիսօփայական ըմբռնողութիւնը կրում է ֆէնօմենալիզմի դրոշմը: Նրա մտայնացումը երևոյթի ուսմունքն է և դրա շրջանումն էլ մնում է: Նա իրապաշտ է, իրական մտածող: Նա իր ընդգրկող սօցիօլօգիական և փիլիսօփայական աշխարհայեացքը, իր *Правда*-սիստեմը յենում է բիօլօգիական, հոգեբանական, էթիքական և հասարակական հիմունքների, հետևապէս փորձի տեւալների վրա: Իսկ այդպիսի հիմունքների վրա կառուցած աշխարհայեցողութիւնը հիմնօրէն բացասում է նումենի, իր *Ding an sich*-ի ամբողջ տրանսցենդենտ աշխարհի, որպէս ուսումնասիրութեան նիւթի:

Ի՞նչ է իսկապէս այդ նումէն կոչւածը: Նումէնը մի Բան է, որը դուրս է մնում մեր բնորոշած բնական և հասարակական երևոյթից, մի բան է, որը գտնւում է իրական, երևոյթների աշխարհի միւս կողմը: Նումէնը, մետաֆիզիքական մտածողութեան այդ

հարազատ ծնունդը մի մեծութիւն է, աւելի ճիշտ, մի Բան, որը մեր մտքին անհասանելի է, մեր զգացմունքներին չենթարկւելի և իրական անալիզից խուսափող: Իսկ մի Բան է, որն իր համար, մեղնից և բնութիւնից դուրս, կողիացած գոյութիւն ունի. դա մի Իր է, ինքնին և իր համար և մեզ հետ որևէ առնչութիւն չունի: Նա մի աշխարհ է, մի առանձին աշխարհ, երևոյթների աշխարհից դուրս, և մեզ համար անճանաչելի:

Իրական գիտութիւնը, ինչպէս և բէալ փիլիսօփայութիւնը, փորձի փիլիսօփայութիւնը հիմնօրէն և անպայմանօրէն բացասումն է բնազանցական մտածողութեան, հետևապէս՝ նումէի աշխարհի: Միխայլովսկու կօնցեալցիայի տեսակէտով գոյութիւն չունի— և չի կարող գոյութիւն ունենալ,— սուբիեկտից դուրս, բայց եւ միեւնոյն սուբիեկտից ճանաչւած երևոյթ: Իսկ այդպիսին է նումէն կոչւածը, մետաֆիզիքական ըմբռնողութեան այդ ծնունդը: Նումէնը փաստապէս մի Ռչնչութիւն է, որը դարերը զբաղեցրել և նիւթ է տւել զբերադոյն մտքերին, փիլիսօփայութեան մէջ դարապուխների ստեղծող խոշոր դէմքերին:

Ռուս մտածողը գիտակցաբար ծառա-

նում է մետաֆիզիքայի հանդէպ և հետու է  
 մնում մետաֆիզիքական բանդադուշանքնե-  
 րից: Նրա գրւածքներէց շատ կտորներ կա-  
 րելի է առաջ բերել, որոնք հիմնօրէն ժըխ-  
 տում են մետաֆիզիքական կօնցեպցիան և  
 ապացուցում նրա աշխարհայեացքի իրական  
 և գիտական բնոյթը, բայց մենք կբաւակա-  
 նանք միայն հետեւեալ կտորով, ուր որոշա-  
 պէս պարզուում է նրա դիրքը մետաֆիզի-  
 քայի հանդէպ: «Մ.մեն տեսակի մետաֆիզի-  
 քայի նւիրական, սրբազան երազանքը կա-  
 յանում է նրանում, նկատում է Միխայլով-  
 սկին, որպէս զի բաց անել իր սեփական  
 հոգու մէջ իրերի այն թագուն էութեան  
 արտացոլումը, մի էութեան, որը ինչ որ  
 տեղ՝ աշխարհի երևոյթների այն կողմը,  
 այսինքն դիտողութեան և փորձի աշխարհի  
 այն կողմն է: Աշխարհն այնպիսին չէ, որ-  
 պիսին նա ներկայանում է սահմանափակ-  
 ւած մարդկային զգայարանքներին: Թուչել-  
 անցնել այն ցանկապատերը, որոնք զրւած  
 են մարդու հէնց օրգանիզացիայով, սուղւել  
 իրերի մինչև ամենախորն արմատները,  
 հանդիպել այնտեղ երես առ երես անպայ-  
 ման ճշմարտութեան հետ և անշնչանալ այդ  
 ասուածային ճշմարտութեան առաջ—ահա  
 այդպիսին է բնազանցագէտի ցնորքը, նրա

անուրջը: Եւ չկայ աւելի անմիտ ցնորք,  
 քան բնազանցագէտի այդ ցնորքը»\*):

Չկայ աւելի անմիտ ցնորք, քան այդ,  
 որովհետև դա անհասանելի է մարդուն, որով-  
 հետև մարդը չի կարող հրաժարւել ինքն իրե-  
 նից: Իհարկէ, մարդու մտքի հետախուզումնե-  
 րի համար ոչինչ չկայ աննարին, բայց նա թող-  
 նում է իրական կեանքը, իրական տեսալ-  
 ների աշխարհը ու գիտական հոգը և թեա-  
 կիտում ոչ-գիտական, աւելի երևակայական  
 աշխարհը:

Մարդու և բնութեան սահմանները  
 զուգադիպում են իրար. ահա ուես մտածողի  
 մի ուշագրաւ և բնորոշ բանաձևը, միտքը:  
 Մարդու զգայարանքներն արդէն դնում են  
 մարդկային մտածողութեան համար որոշ  
 սահմաններ: Իմացութեան թէօրիան, գնօ-  
 սէօլօգիան Ն. Կ. Միխայլովսկու տեսակէ-  
 տով գտնւում է անմիջական կախման մէջ  
 զգայարանքների կողմից: Մի այլ տեղ նոյն  
 միտքը նա արտայայտում է հետեւեալ բա-  
 նաձևի մէջ:—«Գիտութեան սահմանները  
 զուգադիպում են մարդու սահմաններին,  
 որպէս ամբողջական զոյուլթիւն: Միտքը  
 մտնում է իր օրինական սահմանների մէջ:

\*) VI T. CT. 830.

Մարդը կարող է իմանալ միայն հրեոյթնե-  
րը և մնայուն յարաբերութիւնները: Իբերի  
էութիւնը—դա յաւիտեանական մթութիւնն  
է: Չկայ բացարձակ, արսօլիւտ ճշմարտութիւն, կայ  
ճշմարտութիւն միայն մարդու համար, եւ՝ մարդ-  
կային բնութեան սահմաններից դուրս՝ չկայ ճշմար-  
տութիւն մարդու համար»:<sup>\*)</sup> (ընդգծումը մերն  
է. էջ 8):

Ն. Կ. Միխայլովսկին մերժելով արսօ-  
լիւտ ճշմարտութիւնը, ընդունում է միայն  
յարաբերական ճշմարտութիւնը: Իսկ այդ յարա-  
բերական ճշմարտութիւնը գոյութիւն ունի  
մարդու համար: Նրա հայեցողութեամբ ոչ-  
գիտական, անզամ ցնորական է մտածել,  
որ մարդու պսիխօ-Ֆիզիքական տեհալ օր-  
գանիզացիայից անկախ աշխարհ, ինչպէս և  
ճշմարտութիւն գոյութիւն ունի: «Մար-  
դուն հասանելի է միայն յարաբերական  
ճշմարտութիւն և այդ ճշմարտութիւնը  
մարդու տեսակէտով, չի համապատաս-  
խանում իրերի բնութեանը և պարտա-  
գրական չէ հետեապէս բոլոր մարդկանց  
անխտիր: Մարդն ստանում է ճշմարտու-  
թեան տարբերը իր հինգ զգայարանքների  
օգնութեամբ, իսկ եթէ նա ունենար աւելի

\*) I т. ст. 120—21.

պակաս զգայարանքներ, այն ժամանակ  
Պրաւդան կներկայանար նրան բոլորովին  
տարբեր կերպարանքով... Բայց այդ Պրաւ-  
դան, աւելացնում է Միխայլովսկին մի փոքր  
ցածը, այդ յարաբերական Պարաւդան գործ-  
նականապէս արսօլիւտ է մարդու համար,  
որովհետեւ նրանից էլ աւելի չի կարող  
բարձրանալ»:<sup>\*)</sup>

Այս և վերերը առաջ բերած կտորնե-  
րում պարզ կերպով բնորոշում է Միխայ-  
լովսկու իմացարանական տեսակէտը, ինչ-  
պէս և նրա փիլիսօփայական կօնցեպցիայի  
գրական, գիտական բնոյթը: «Գիտութեան  
սահմանները զուգադիպում են մարդու սահ-  
մաններին» Միխայլովսկու այդ նոյն գիտա-  
կան գրութիւնն է պաշտպանում էմպիրօ-  
կրիտիցիզմի ներկայացուցիչ Վիլին, հըր նա  
պնդում է, թէ «չկայ ուրիշ, քան զգայարա-  
նապէս և սպեցիֆիկ մարդկային պայմանա-  
ւորած գիտութիւն»:<sup>1)</sup> Շատերը, գրանց  
թւում նաև Իվանով-Բաղունիկը, գտնում են,  
որ Միխայլովսկու իմացութեան թէօրիայի  
այդ ըմբռնողութիւնը և տեսակէտը շատ նեղ

\*) IV т. ст. 460—461.

1) B. Willy, ber Empiriokritizismus

է, և այդտեղ նրանք շեշտում և տեսնում են նոյն սուրբեկտիվիզմը, մի տեսակէտ, որ տիրապետող է նրա սօցիոլոգիայի մէջ: Այս վերջին պնդումը որոշ չափով ճիշտ է: Մենք արդէն վերը նկատեցինք, որ Միխայլովսկին մեթօդօլոգիական տեսակէտից ճանաչում է մի հետևողական պսիխօլոգիզմ: Ամեն ինչ հոգեբանական ֆակտ է. այն ամենը, ինչ ձեռք է բերում մեր զգայարանքների միջոցով, ունի հոգեբանական սկիզբ: Այս տեսակէտն արդէն կազմում է նրա հայեցողութեան օրիգինալ և բնորոշիչ գծերը, ինչպէս էլի առիթ ենք ունեցել շեշտելու: «Իմացարանութիւնը իր հետադատութիւններէ մէջ յենում է ոչ միայն հոգեբանական փորձի, այլ և աշտաքին փորձի վրա», նկատում է քննադատական փիլիսօփայութեան հոսանքները ներկայացուցիչը, Ռիլ: «Ճանաչողութիւնները, աւելացնում է յարգելի հեղինակը, անտարակոյս, ունին սկզբից հոգեբանական կամ սուրբեկտիվ գոյութիւն, բայց իմացարանութիւնը ստանում է և օրեկտիվ նշանակութիւն»:<sup>\*)</sup>

<sup>\*)</sup> Biehl, ber philosophische kritizismus. II Bd. S. 8.

Նմանութիւնը Միխայլովսկու և Ռիլի ըմբռնումների աւելի քան աշխարհ է: Միւս կողմից պարզ է նաև այն, որ Միխայլովսկին իմացարանութիւնը չի որոշում որպէս մի ուսմունք իրերի էութեան մասին: Իմացարանութեանը տեսական արժէք և նշանակութիւն տալով հանդերձ, նա շեշտում է նաև գործնական կողմը, այսինքն իմացութեան նպատակն է նաև բաւարարութիւն տալ մարդու կարիքներին:

Եզրափակելով մեր ասածները, պէտք է նորէն նկատենք, որ Միխայլովսկու իմացարանական-փիլիսօփայական ըմբռնողութիւնը միանգամայն հակաքնազանցական է և կրում է գերազանցօրէն դիտական բնոյթ, միևնոյն ժամանակ պարունակելով իր մէջ քննադատական փիլիսօփայութեան սաղմեր և դրութիւններ: Միխայլովսկին դէմ է բնազանցազէտներին, որովհետև դրանք դնելով ծագման և վախճանի հարցեր, իրերի թագուն էութեան պրօբլէմները յարուցանելով, ոչ մի դրական, շօշափելի հետեանքի չհասնելով հանդերձ, պատճառում են մտքի, ոյժի և ժամանակի անխնայ և ապարդիւն վատնում: Իսկ այդ արդէն միանգամայն դէմ է տնտեսութեան սկզբունքին, որը համարում են շատերը, նամանականդ էմպիրիօ-կրիտիկ-

ները, ճշմարտութեան գերագոյն կրիտերի-  
 ումը, մի սկզբունք, որը կամաց-կամաց  
 կիրառուում է զբաղան գիտութիւններէ,  
 ինչպէս և փիլիսոփայութեան մէջ, միաժա-  
 մանակ աւելի խորանալով և ընդլայնելով:  
 Անցնենք մտքի, ոյժի և ժամանակի  
 անտեսութեան սկզբունքին:

III

Մտքի անտեսութեան պատուաբար դրել է  
 և առաջին անգամ համաշխարհային որոշակի  
 շեշտումներով մտածող, ֆիզիկոս-փիլիսոփա  
 էրնստ Մախը 1871—72 թւականներին: Այդ  
 սկզբունքը տեսնում ենք նաև Միխայլովսկու  
 մօտ:

էրնստ Մախը, այդ թւից մօտ 10 տա-  
 րի յետոյ, 1882 և 1883 թւականներին  
 աւելի մշակում, հիմնաւորում և պարզ, որոշ  
 ձևակերպումով տալիս է անտեսութեան,  
 խնայողութեան սկզբունքը իր «Die öko-  
 nomische Natur der physikalischen  
 Forschung» աշխատութեան մէջ:

էրնստ Մախից թէև ուշ, բայց նրանից  
 բոլորովին անկախ, դնում է մտքի, ոյժի  
 անտեսութեան սկզբունքը նաև մի այլ խո-  
 շոր դէմք, Ռիխարդ Աւենարիուս: Տնտե-  
 սութեան սկզբունքը նա զարգացրել է իր

անգլերանիկ նշանաւոր «Die Philosophie  
 als Denken der welt gemäss dem  
 Prinzip der kleinsten Kraftmasses»  
 աշխատութեան և իր գլուխ գործոցի՝  
 «Kritik der reinen Erfahrung»-ի մէջ:

Աւենարիուսը կոչում է մտքի անտե-  
 սութեան, խնայողութեան սկզբունքը «ոյժի  
 նւազագոյն չափի» սկզբունք:

Ն. 4. Միխայլովսկին, ռուս մեծ սօցիո-  
 լոգ-փիլիսոփան դեռ 1869 թւին, մօտ 6  
 տարի Աւենարիուսից և երեք տարի էրնստ  
 Մախից առաջ, իր „Что такое прогрессъ“?  
 աշխատութեան մէջ ունի այնպիսի մի գի-  
 տական, թէև աղօտ կերպով արտայայտւած,  
 թեզիս. — «տնտեսել բնութեան և մարդու  
 ոյժերը այնպէս, որ նրանց վատնումը  
 լրացել համապատասխան յաւելումով»:  
 Սկզբունքն արդէն տրւած, արծարծւած է,  
 և էականը այս է: Չկայ, ճիշտ է, այնպիսի  
 կլասիկ ձևակերպումներ, ինչպիսին դառնում  
 ենք էմպիրիօ-կրիտիցիզմի տաղանդաւոր  
 հիմնադիրների, Ռիխարդ Աւենարիուսի և  
 էրնստ Մախի մօտ: Բաց սկզբունքը կայ  
 շեշտւած: Արդէն վերև առաջ բերած բացա-  
 տրութիւնները և հիմնաւորումները նրա  
 հակամետաֆիզիքական վերաբերմունքը ցոյց  
 են տալիս այդ սկզբունքի գոյութիւնը:

Բայց ի՞նչու՞ն է կայանում անտեսելու,

խնայելու սկզբունքի էութիւնը, նրա զիտական և հասարակական արժէքը:

Այս սկզբունքը պահանջում է, ինչպէս անունն ինքնին ցոյց է տալիս, չը շօտայել միտքը, այլ տնտեսել, չը վատնել ոյժը, այլ խնայողաբար դործադրել: Այն, ինչ ուղում ենք արտայայտել, նյն, ինչ ուղում ենք գրի առնել, պէտք է ձևակերպել մտածելի պարզ ձևերի մէջ, մտածելի քիչ մըտքերով:

Հնարաւոր եղած կարճ ժամանակում, աւելի քան քիչ բառերի մէջ ձևակերպւած, ոյժի եւ աշխատանքի նւազագոյն չափը վատնելով, տալ հնարաւոր եղածին չափ շատ նիւթ եւ առատ փորձ եւ հարուստ բովանդակութիւն:

Ահա այս բառերի մէջ է բիւրեղացած միտքը տնտեսելու սկզբունքի էութիւնը, նրա իմաստը: Պէտք է, ուրիշն, տնտեսել մտածելի մեծապոյն չափը մտքերի, ոյժերի եւ ժամանակի: Եւ յիշուի, այս սկզբունքն է կադմելու ամեն մի գիտութեան, նոյնպէս և փիլիսոփայութեան կէտ-նպատակը:

Ինչպէս որ պիտի տնտեսել մարդկային միտքը, նոյնպէս պէտք է տնտեսել նաև բնութեան ոյժը, ինչպէս շեշտում է Միխայլովսկին: Մարդկային մտքի, ինչպէս և բնութեան ոյժի անխնայ և անչափ վատ-

նումը բերում է իր հետ անահրժեշտօրէն նրանց սպառումն, նրանց քայքայումը:

Բացատրենք տնտեսելու սկզբունքը փաստերով:

Այս սկզբունքը առանձնապէս ոէլիբֆ կերպով երևան է դալիս լեզւական աշխարհում, լեզւաբանութեան մէջ: Համարեա բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների մէջ նկատելի է մի խիստ ուշագրաւ երևոյթ, մի հետաքրքրական շարժում: Այդ շարժումը կայանում է նրանում, որ բոլորն էլ աշխատում են մշակել, բիւրեղացնել լեզուն, մաքրել, դտել աւելորդաբանութիւններից, անօգուտ բարդութիւններից. կոկիկ և կարճ բառեր, դերձ աւելորդ վերջաւորութիւններից և տառերից, և այլն:

Ահա ոուսական կեանքը: Նրանք ձրգտում են դուրս ձգել մի շարք աւելորդ համարւած տառեր, որոնց դերը այլ բան չէ, քան ծանրարեոնել մարդկային միտքը, խլիղով ազարդիւն ժամանակ և ոյժ:

Միթէ՞ միևնոյն երևոյթը և տենդենցը չէ ներկայացնում արհեստական լեզուներ կադմելու շարժումը համաշխարհային կեանքում: Վերցնենք օրինակ, արհեստական լեզուներից ամենատարածւածը, «էսպերանտօն»:

«Հասպերանտօն» հնարաւորութեան մը-  
տածելի չափերի մէջ սեղմւած մի լեզու  
է, բարդութիւններից ազատ: Հորոքի-  
րի և խոնարհումների թիւը հասցրած է  
նւազագոյն չափի. չկան լեզւական բացա-  
ռութիւններ, բացառիկ օրէնքներ, իւրա-  
քանչիւր իր ունի իւր յատուկ անունը:

Այստեղ ևս ղեկավարւած են տնտեսու-  
թեան սկզբունքով: Ամենաքիչ ժամանակա-  
միջոցում, աշխատանքի և ոյժի նւազագոյն  
չափը գործադրելով, ձեռք է բերւում մի  
լեզու:

Տնտեսութեան նոյն սկզբունքով է ղե-  
կավարւում—և պէտք է ղեկավարւի ֆիզի-  
կոսը, հոգեբանը, քիմիկոսը սօցիօլօգը,  
և այլն, իրենց անալիզների, ուսումնասի-  
րութիւնների և արտայտելու մէջ:

Մտքի տնտեսութեան սկզբունքով է  
առաջնորդւում նոյնպէս փիլիսօփայոզ մի  
դէմք, երբ իր փիլիսօփայական վարդապե-  
տութիւնը, իր ամբողջ ուսմունքը ֆօրմուլա-  
ների մէջ է դնում, տրամաբանական ներ-  
դաշնակ համաձայնութեան բերում և մի  
որոշ սխտեմի վերածում: Նիւթի սխտեմա-  
տիզացիան արդէն ինքնին արդիւնք, պա-  
հանջ է մտքի տնտեսութեան սկզբունքի:

Այսպէս, ամեն տեղ այդ սկզբունքն է

կիրառւում, ամենքը նրա տեսակէտով են  
առաջնորդւում, գուցէ և առանց տնտեսիլու,  
խնայելու պօստուլատը իրենց համար ա-  
ռանձին ուսումնասիրութեան խնդիր և  
առարկայ դարձնելու, առանց անդամ նրա  
գիտական և հասարակական իմաստին և  
էութեանը գիտակից լինելու:

Տնտեսութեան սկզբունքը, հետևապէս  
դէմ է այն բոլորին, ինչ պատճառում է ոյ-  
ժերի անխնայ վատնումն, ժամանակի կո-  
րուստ և մտածողութիւնների շոյլումն:

Մտքի տնտեսութեան սկզբունքը իր  
էութեամբ միանգամայն դէմ, ոխերիմ թշնա-  
մի է մետաֆիզիքային: Նա բացասումն է  
ամեն մի մետաֆիզիք մտածողութեան,  
քանի որ վերջինս պատճառ է լինում միտ-  
քըն ասպարդիւն, մինչև իսկ կորուստով,  
գործ ածելուն:

Եւ մարդկային սրբան զերազանց և  
սրամիտ մտքեր, սրբան անգնահատելի  
էներգիա և ոյժ, սրբան անգին ժամանակ  
և աշխատանք վատնել են մետաֆիզիքայի  
աշխարհում, մետաֆիզիք մտածողութեան  
ծնունդ-պրօբլէմների վրա, նկատում է Մի-  
խայրովսկին:

Եւ դրանից դրական ոչինչ մարդկու-  
թեան համար:

Պէտք է թողնել անուրջները, երազանքները, և մնալ տեւել կեանքի ճոցում, ուէալ աշխարհում, մի խօսքով, փորձի շըրջանակի մէջ:

Առանց այն էլ մարդու կեանքը խիստ է կարճ, այնքան կարճ, որ բոլորովին անհնարին է, առանց ոյժ, մտածողութիւններ և ժամանակ տնտեսելու, ձեռք բերել անհրաժեշտագոյն եւ պահանջւող գիտութիւնն ու ծանօթութիւնը կեանքի, ընական և հասարակական երևոյթների մասին:

Տնտեսութիւնը իր էութեամբ միաժամանակ արամաբանական իդէալն է, տրամաբանութեան նպատակակէտը:

IV

Իրերի ճանաչողութիւնը զուտ հասկացողութեան և բանականութեան միջոցով այլ բան չէ, եթէ մի պատշաճութեամբ հշմարտութիւնը փորձի մէջ է:

ԿԱՆՏ

Դառնում ենք Միխայլովիւ փիլիսօփայական-իմացաբանական տեսակէտի կարևորագոյն կէտի լուսաբանութեան: Դա հիմունքն է, որի վրա կառուցւում է ամբողջ տեսական շէնքը: Այդ հիմունքը, ինչպէս առաջ էլ նկատել ենք, փորձն է, իրական տեւալների աշխարհը:

Փորձն է կազմում ելակէտը դրական գիտութիւնների: Ամեն մի մտայղացում, ամեն մի աշխարհայեցողութիւն առանց այդ փորձի անիմաստ է, մի հնչական մեծութիւն: Եւ իզուր չէ, որ դրական գիտութիւնները հետզհետէ գալիս և հանգչում են փորձի վրայ, ընդունելով այն իբր միակ ելակէտ եւ հիմունք: Այս տեսդեցը խիստ

ուժեղ շեշաւում է նոյնպէս փիլիսօփայա-  
կան մտայղացումների, թէօրիաների և շփո-  
ւաների մէջ:

Փորձի փիլիսօփայութեան հիմքը դրեց  
ուժեղ կերպով Կանտը, այդ համաշխարհային  
և ընդգրկող միտքը:

Իրերի ճանաչողութիւնը զուտ հասկա-  
ցողութեան և բանականութեան միջոցով այլ  
բան չէ, քան մի պատրանք. ճշմարտու-  
թիւնը փորձի մէջ է: Ահա Կանտի հիմնա-  
կան թէզը: Եւ նա դրեց իր համար իբր  
պօստուլատ փորձի բիւրեղացման խնդիրը:  
Նա դրեց, այն, մեաաֆիզիք տարրերից  
զտելու, մաքրելու պրօցեսի սկիզբը: Բայց  
Կանտը փորձի գտումը մինչև վերջը չտարաւ  
Փորձի դաման այդ գործը շարունակում են  
նոր-կանտիանիզմը, էմպիրօ-կրիտիցիզմը,  
«զուտ փորձի» փիլիսօփայութիւնը:

Ամեն ինչ փորձ, փորձը ամեն ինչ: Ահա  
ինչ ունի ժամանակակից մտածողութիւնը  
որպէս պօստուլատ, որպէս գերագոյն խըն-  
դիր: Առանց այդ փորձի գիտութիւնը յի-  
րաւի մի ֆիկցիա է: Իրական փորձը, եթէ  
կուզէք, ինքը գիտութիւնն է: Նոյնը պնդում է  
նաև Ռիլը: Ժամանակակից հասկացողու-  
թեամբ փորձը և գիտութիւնը որոշ չափով  
նոյնանում են: Փորձը սահմանն է գիտութեան  
և անպայման իրականը, ինչպէս և սկիզբն ու

վախճանը ամեն իմաստութեան:

Այդ հն ասում փորձի փիլիսօփաները:  
Այդ է ասում նոյնպէս մեր փիլիսօփա-սօ-  
ցիօլօգը:

Ն. Կ. Միխայլովսկու տեսակէտով մեր  
ամբողջ պսիխիական բովանդակութիւնը,  
առանց բացառութեան, փորձի արդիւնք է:  
Նա աւելի հեռուն է գնում և յայտարա-  
րում.— «Ակսիօմաներն անգամ արդիւնք են  
փորձի և գիտողութեան, և եթէ դրանք կա-  
րող են թւալ որպէս մարդկային հոգու բնա-  
ծին դրութիւններ, այդ էլ միայն նրանց  
չափից աւելի պարզ և ընդհանուր լինելու  
պատճառով. . . Այսպիսի ճանապարհով,  
գիտակցական թէ անգիտակցական փորձի  
ճանապարհով, ստացւում են մեր ճանաչո-  
ղութիւնները նոյնպէս աւելի բարդ առար-  
կաների մասին: Ոչ մեղմից դուրս, ոչ էլ  
մեր մէջ չենք կարող ճանաչել և ընդունել  
յատուկ գործիչների գոյութիւնը, որոնք  
տալիս են մեզ պատրաստի որոշումներ մեր  
յարաբերութեան վերաբերմամբ զէպի բը-  
նութիւնը և այլ մարդիք: Մարդը ծնւում  
է, ունենալով միայն զէնքեր իմացութեան  
ընդգրկման և երևոյթիների գնահատման հա-  
մար առհասարակ և իր հետ աշխարհ չի  
բերում որևէ պատրաստի ճշմարտութիւն:

Մեր ամբողջ պոփխիական բովանդակութիւնը առանց մնացորդի, այսինքն, մեր բոլոր մտքերը, մեր բոլոր ճանաչողութիւնները, լինեն դրանք ճիշտ թէ, սխալ, մեր բոլոր զգացմունքները և ցանկութիւնները, լինեն դրանք վատ թէ լաւ — բոլորը պարտաւոր են իրենց ծագմամբ փորձին:»\*)

Բայց ի՞նչպէս հասկանալ այդ փորձը, սրտեղից է նա ծագում:

Կայ հիմք այդ հարցը բարձրացնելու: Դա մինչև իսկ շատ կարևոր հարց է: Չէ որ շատերն են խօսում փորձի անունից: Սօփեստն անգամ խօսում է փորձի մասին: Ուրեմն, ի՞նչպէս հասկանալ այդ: Արդե՞ք ամեն մի ապրում, անհատական ապրում, ամեն մի հոգեկան եղելութիւն կարող է փորձ գիտւել: Եթէ, յիշուի, այդպէս լինէր, այն ժամանակ բոլորովին իրաւացի կլինէին էմպիրիօ-կրիտիցիզմի, ինչպէս և ուրս սօցիօլօգիական-սուրբիեկտիվիստական շիօլայի գէմ արած առարկութիւնները, այսինքն թէ որքան սուրբիեկտիւներ, այնքան էլ ճշմարտութիւններ, թէ ճշմարտութիւնը միանգամայն սուրբիեկտիվ է: Այս նոյն առարկութիւնը անում են նաև Ն. Կ. Միխայլովսկու գէմ:

\*) I т. ст. 129.

Բայց այդ առարկութիւնը ճիշտ չէ և բոլորովին անհիմն է: Անտարակոյս, փորձ ասելով, հասկանում ենք դրական, գիտական բնոյթ կրող փորձը: Անտարակոյս, ամեն մի հոգեբանական ակտ, ամեն մի ապրում և եղելութիւն դեռ գիտական փորձ չէ: Մի հոգեբանական եղելութիւն, մի անհատական ապրում ոչ միայն փորձ չէ, այլ և կարող է լինել մի պաթալօգիական, հիւանդազին դրութիւն, առնւազն գիտական արժէքից զուրկ: «Ամեն մի ապրած եղելութիւն կամ գիպւած, հոգեբանական իմաստով վերցրած, դեռ փորձ չէ, և չի կարող անպայմանօրէն փորձ համարւել: Նա կը դառնայ փորձ, երբ կհամապատասխանի էմպիրիօկրիտիցիզմի կրիտերիումին, գիտական տեսակէտին», ասում են այդ փիլիսօփայական ուղղութեան ներկայացուցիչները:

Ինչո՞ւմ է կայանում զուտ դրական փորձի կրիտերիումը:

Դրական, գիտական փորձի ամենաէական յատկանիշը և նախապայմանն է, որ փորձող անհատը ունենայ առողջ ներքեր, զգաստ և արթուն միտք, որը միաժամանակ մեծ ու կենդանի հոգով և բաց զգայարանքներով դիտում և մտնում է յարաբե-

րութեան մէջ միջավայրի հետ: Գիտել և դնել, ճանաչել և վերածանաչել, ըմբռնել և բացատրել: Ահա գիտական ժողովի կարևորագոյն փաստերը և պայմանները:

Եսի և միջավայրի սենթէզը, այս կրկուսի փիլիսոփայութիւնն է ստեղծում փորձ կոչւածը: Եսը և միջավայրը, միտքը և օրինակաբան անքակտելիօրէն շարկապւած, ձուլւած են փորձի մէջ և տալիս են իրենց գոյութեանը փոխադարձաբար իմաստ և արժէք: Բնախոյզը բնադիտական մի օրէնք և ընդհանուր դադափար է դուրս բերում իր օրինակացի, երբ նա հետադասում, տարբարութեամբ, յարաբերութեան մէջ է դնում այլ տարրերի հետ, համեմատում, և այլն: Նոյն ձևով է վերաբերում հեզերանը մի հոգեբանական երևոյթի հետ, սօցիօլօզը՝ հասարակական պրօցեսի և այլն:

Գիտական փորձը գերծ է պատահական հանգամանքներից, սուբիեկտիւ խառնուրդից, անցողական տարրերից, հիւանդոս և վաղանցուկ ընոյթ կրող պարագաներից: Նա պարունակում է այն, ինչ ընդգրկող նշանակութիւն ունի:

Այսպէս է անա առաջանում, ծագում գրական փորձը:

Տարիների դիտողութիւնը, խնամոտ

և գիտական անալիզը, ինչպէս և վերև յիշատակւած պայմաններն են տալիս փորձին գիտական և շարունակական նշանակութիւն, գրական և օրինակացի ընոյթ: Հետևապէս, այս ճանապարհով փորձի ճշմարտութիւնը դադարում է մնալ սուբիեկտիւ, այլ դառնում է օրինակացի: Յամենայն դէպս, դրանով չի բացասում այն ճշմարտութիւնը, որ փորձի սկիզբը սուբիեկտիւ պայմանաւորւած է: Նոյնն է պնդում նաև Ռիլ. «ճանաչողութիւնները, անտարակոյս, սկզբից ունին հոգեբանական կամ սուբիեկտիւ գոյութիւն, բայց իմացութիւնը ստանում է օրինակացի նշանակութիւն»: Բայց, միևս կողմից, այս հանգամանքը չի խանգարում, որ սուբիեկտիւ սկիզբ ունեցող փորձը դառնայ օրինակացի: Եւ նա կգառնայ իբրև այդպիսին, եթէ կան վերև շեշտած պայմանները: Օրինակ, «մարմինները լայնանում են տաքութիւնից», սա մի գիտական փորձ է, արդիւնք կրկար ժամանակաւ դիտողութեան և անալիզի: «Մարդիկ մահկանացու են», սա ևս գիտական, բիօլօգիական փորձ է, գերծ պատահական և անցողիկ պարագաներից:

Մրանք ապրած մօմենտներ են, կղերութիւններ, բայց ունին գիտական ընոյթ և արժէք, շարունակական նշանակութիւն

և համայնապարփակ բնաւորութիւն: Սրանք կօնկուրենտ չունեցող գրութիւններ են:

Սա է ահա գրական փորձը:

Այդ փորձը, ինչպէս ասացի, ընդգրկուած է սուբիեկտը և օբիեկտը, հետևապէս, նա կրողն է միաժամանակ այսպէս կոչուած «արտաքին» և «ներքին» փորձերի: Բէալ մտածողութեան տեսակէտով փորձը միայն in abstrakto կարելի է բաժանել «ներքին» և «արտաքին»: Չը կան «ներքին» և «արտաքին» փորձեր դատ-դատ:

Իդէալիստական կօնցեպցիան ծագում է յերաւի արտաքին և ներքին փորձերի յարաբերութեան մի սխալ ըմբռնումից: Նա գերադնահատում է ներքին փորձը, իսկ արտաքին փորձը դարձնում է կախուած ներքին փորձից: Հակառակ գրութիւնը ներկայացնում է մատերիալիստական ըմբռնողութիւնը, ասում է իրի. չկայ և չի կարող լինել արտաքին փորձ՝ առանց ներքին փորձի, և ընհակառակը: Սրանք համարժէք են և համակարգուած: Արտաքին և ներքին փորձերը տարբեր առարկաներ չեն, այլ միայն տարբեր տեսակէտներ, ուշադրութեան տարբեր ուղղութիւններ. առաջինը փորձի օբիեկտիվ կողմն է, իսկ երկրորդը՝ փորձի սուբիեկտիվ կողմը: Իսկ օբիեկտը

և սուբիեկտը, ինչպէս յաճախ դիտել ենք, միշտ էլ միացած են: Այս նոյն տեսակէտի վրա է կանգնած նոյնպէս Միխայլովսկին, ինչպէս և ուրեւ սօցիօլօգիական-պօզետիվիստական շկօլայի ներկայացուցիչները:

Պահպանել «հաւասարակշռութիւն օբիեկտի և սուբիեկտի միջև, մարդու և բնութեան ու միւս մարդկանց միջև» — ահա սկիզբը, որի տակ մշակուած է օբիեկտիվ փորձը, ինչպէս և օբիեկտիվ ճշմարտութիւնը: Իսկ մի խիստ ուշադրաւ գիտական գրութիւն է, որը գրուած է շատ աւելի վաղ, քան Աւենարիունն է տւել իր Փօրմուլան — եսը և շրջապատը որպէս հիմունքներ գիտական փորձի: Ն. Կ. Միխայլովսկու կարծիքով օբիեկտիվ «ճշմարտութիւնը հաւասարակշռութեան մի յայտնի, յատուկ դէպք է օբիեկտի և սուբիեկտի միջև, մասնաւորապէս մարդու և բնութեան միջև՝ միւս մարդկանց հետ»: Այս թէզը, մի կողմից, հերքում է Միխայլովսկու քննադատների այն առարկութիւնը, թէ նրա փորձը որպէս թէ սուբիեկտիվ է. միւս կողմից հերքում է նոյնպէս «այնքան ճշմարտութիւններ, որքան սուբիեկտներ» Փրադան: Այս թէզը, միւս կողմից, այնպիսի գիտական և նշանաւոր գրութիւն է, որն այժմ պաշտպանում են

էմպիրիօկրիտիցիզմի, պօզիտիվիզմի ժամանակակից հռչակաւոր ներկայացուցիչները: Ինչպէս էմպիրիօկրիտիցիզմը, նույնպէս և ուսու սօցիօլօգիական-սուբիեկտիվիստական պօզիտիվիստական շկօլան խարսխում է իր իմացաբանութիւնը օրինկտի և սուբիեկտի, գուտ փորձի և փիլիսօփայական կրիտիցիզմի վրա: Այս երկու շկօլաների միջև, զոնէ շօշափուող պրօբլէմի վերաբերմամբ, եթէ տարբերութիւն կայ, դա կայանում է ձևակերպման և լեզուի մէջ, բայց երբէք կօնկրէտ և զիտական բովանդակութեան ու իմաստի մէջ: Եթէ մենք Ն. Կ. Միխայլովսկու թէզիսի մէջ «մարդ» դադափարի տեղ դնենք «ես» և «բնութեան» տեղ՝ «շրջապատ», կստանանք Ռ. Աւենարիուսի ձևակերպումը: Ճիշտ է թէև այն, որ մենք հասկացողութիւնների այնպիսի պարզութիւն չենք տեսնում ուսու գրողների մօտ, ինչպիսին գտնում ենք էմպիրիօ-կրիտիցիզմի ներկայացուցիչների մօտ:

Ահա ինչպէս է բնորոշում Վիկտօր Չերնովը այդ ուսուական դպրոցի աշխարհայեացքը, որի ներկայացուցիչներից մէկն էլ ինքն է:—«Ի՞նչալ և բէալ սուբիեկտիվ և օբիեկտիվ մօմենտների ձուլում—ահա ուսու պօզիտիվիստական-սօցիօլօգիական վարդա-

պետութեան հիմնական գծերը, որը կարմիր թելի նման անցնում են նրա կառուցածքի միջով, սկսած ամենաընդհանուր և վերացական գրութիւններից և վերջացած ամենամասնակի և կօնկրէտ գրութիւններով»:<sup>\*)</sup>

Մի անգամ ևս վերադառնալով փորձը սուբիեկտիվ խառնուրդից մաքրելու հարցին, պէտք է նկատենք, որ այս խնդրի վերաբերմամբ ևս գտնում ենք ուսուական պօզիտիվիստական-սօցիօլօգիական շկօլացի ներկայացուցիչների, ինչպէս և Միխայլովսկու մօտ շեշտուած մտքեր, բանաձևած կտորներ: Անհրաժեշտ է «մաքրել փորձը աւելորդ տարրերից», պահանջում է Չերնով: «Մտացումը գուտ, անխառնուրդ փորձի, այդ փորձի միակ տւեալների կապակցւած, զիտական մշակման և սխառնմատիղացիայի հետ—ահա երկու պայմաններ, առանց որոնց փիլիսօփայութիւնը չի կարող լինել մտածողութիւն աշխարհի մասին՝ համաձայն ոյժի նւազագոյն չափի»:<sup>\*\*)</sup> Ն. Կ. Միխայլովսկին ունի անգամ աւելի նշանակալից և կարևոր կէտ, յատկապէս սուբիեկտիվ խառնուրդից, պատահական և սուբիեկտիվ տարրերից

\*) Черновъ, философ. и социолог. этюды, ст. 6.

\*\*\*) ibid, ст. 22.

փորձը ապահովելու.— «հնարաւոր եղածին չափ խնամքով, ուշի ուշով ճշտել զրա էմպիրիկ բովանդակութիւնը և որոնել նրա ազբիւրնները»։\*)

Ն. Կ. Միխայլովսկու աշխարհայեցողութեան մի էական և բնորոշ գիծն է կազմում նոյնպէս քննադատական ոգին, որը յատուկ է առհասարակ ուսական պօզիտիււիստական-սօցիօլօգիական շէօլային, ինչպէս և ընդհանուր գծերով նման աշխարհայեցողութիւնն ներկայացնող հոսանքին հայ իրականութեան մէջ։ Ն. Կ. Միխայլովսկին, ինչպէս և յիշւած հոսանքները առհասարակ խիստ քննադատաբար են վերաբերում փորձին. Միխայլովսկին, ինչպէս և սրանք չեն ճանաչում դօզմաներ, այլ միշտ էլ յենւում են զրական գիտութիւնների, նրանց անալիզների, և երևան բերած փաստերի, կատարած նւաճումների վրա։

Մենք վերջացրինք նրա փիլիսօփայական-իմացաբանական աշխարհայեացքի հիմնական դրոսթիւնների վերլուծումը։ Արեցինք այնքան, որքան մեր ոյժերն էին թոյլ տալիս, որքան առհասարակ հնարաւոր էր։ Բայց, կարծում ենք, որ մեր վերլուծումից արդէն պարզ է նրա աշխարհայեացքի բնութագիրը։ Մեր վերլուծումից, կարծում ենք, պարզւեց նաև այն, որ Միխայլովսկու համար «քննադատական փիլիսօփայութիւնը ոչ միայն մի մետաֆիզիկա չէ», այլ, ընդհակառակը, նրա մօտ գտնում ենք քննադատական փիլիսօփայութիւն, նամանաւանդ էմպիրիօ-կրիտիցիզմի մի շարք դրոսթիւններ։ Մեր վերլուծումից, կարծում ենք, պարզւեց նոյնպէս և այն, որ Ն. Կ. Միխայլովսկու փիլիսօփայական աշխարհայեցողութիւնը գերազանցօրէն հակամետաֆիզիքական է, զիտական և քննադատական։

\*) I T. CT. 133.

Ն. Կ. ՄԻՒԱՅԼՈՎՍԿՈՒ  
ՍՕՑԻՕԼՕԳԻԱՆ

I. ՄԻՒԱՅԼՈՎՍԿՈՒ ՍՕՑԻՕԼՕԳԻԱՅԻ  
ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԸ

I

Գառնում ենք Ն. Կ. Միխայլովսկու աշխարհայեացքի ամենահետաքրքրական, աւելի քան ուշագրաւ մասի, սոցիոլոգիական դոկտրինի լուսարանութեանը:

Այս բնագաւառում նա իր մտածողութեամբ և յղացումներով շատ է օրիգինալ, շատ է գրաւիչ: Ճիշտ է, թէև նա չի տւել իր սոցիոլոգիայի հիմունքների սխտեմատիկ հետազօտութիւնը, բայց, ինչպէս ներածութեան մէջ շեշտեցինք, անտարակուսելի է օրգանական կապի գոյութիւնը նրա սոցիոլոգիական դրութիւնների և հայեցակէտերի միջև. կայ սխտեմ, բայց չկայ սխտեմատիկ վերլուծում: Ահա այս հանգամանքը չպէտք է մոռացութեան տալ: Միւս կողմից անկասկած է, որ Միխայլովսկուն

աւելի զբաղեցրել են սօցիօլօգիական պրօբ-  
լէմներ— և ուրիշ կերպ էլ չէր կարող լի-  
նել—, քան սօցիօլօգիան, որպէս մի ամ-  
բողջական գիտական գիտցիպլին՝ իր բոլոր  
բաղկացուցիչ մասերով: Ահա հէնց դրա  
համար էլ նրա սօցիօլօգիական վարդապե-  
տութիւնը «մի կուրս չէ:»

Բայց Ն. Կ. Միխայլովսկու սօցիօլօ-  
գիան, աւելի ճիշտ նրա սօցիօլօգիական  
դօկտրինը հասկանալու և մանաւանդ ըստ  
արժանւոյն գնահատելու, ինչպէս և յատուկ  
գաղափար կազմելու համար նրա ինքնու-  
րոյնութեան չափի, և այն տարրերի մասին,  
որոնք վերցրած են ուրիշներից — անհրա-  
ժեշտ է առաջնորդել արխտոռակեան  
պատճառների կլասիֆիկացիայով, այսինքն,  
անհրաժեշտ է ցոյց տալ նրա գենիզիսը, ծա-  
ղուձը, այն կապը, որ կայ անցեալ և ներ-  
կայ սօցիօլօգիական հոսանքների և Միխայ-  
լովսկու սօցիօլօգիայի միջև, երևան բերել  
նրա ազդեցութիւնը և կրած ազդեցութիւն-  
ները. պարզել այն հասարակական պայման-  
ները, որոնք յայտնի չափով ստիպել են  
տալ աշխատութեանը այդ և ոչ թէ մի այլ  
ձև:

Աշխատենք, ուրեմն, այս տեսակէտով  
մօտենալ Միխայլովսկու սօցիօլօգիական

աշխարհայեցողութեան շուտաւարտութեանը  
և գնահատմանը: Իրա անհրաժեշտութիւնը  
զգացուում է նաև այն տեսակէտից, որ չկան  
նրա սօցիօլօգիական սկզբունքների և հա-  
յեցակետերի սխտեմատիկ, նամանաւանդ  
լրիւ վերլուծումը: Այդ տեսակէտից յատ-  
կապէս արժէքաւոր տեղ է բռնում Իւ-  
ժակովի գրածքը և առճաստրակ Միխայլով-  
սկու 40-ամեայ յօդուեանին ներքաճ աշ-  
խատութիւնները:

Բայց անցնենք նիւթին:

Ե՞րբ և ի՞նչ պայմանների մէջ երևան  
եկաւ Միխայլովսկին: Ի՞նչ էր ներկայա-  
ցնում այդ ժամանակ Եւրոպան, և ի՞նչ  
Ռուսաստանը՝ մտաւոր ուղղութիւնների  
և հասարակական հոսանքների ու կեան-  
քի տեսակէտից: Որոնք էին, վերջա-  
պէս, դարաշրջանի բնորոշ և էական գծերը:

Խիստ հետաքրքրական է այդ գարա-  
շրջանը, 60-ական թւականները, թէ Այւ-  
մտեան Եւրոպայի և թէ Ռուսաստանի հա-  
մար. հետաքրքրական, նամանաւանդ մտա-  
ւոր, հասարակագիտական-փիլիսօփայական  
հոսանքների տեսակէտից: Խորունկ և  
լայն նւաճումներ էր անում յատկապէս  
քնազխտութիւնը, նամանաւանդ, մեզ հե-  
տաքրքրող և զրազեցնող հարցի տեսակէ-

տից, կենսաբանութիւնը: Եւ իզուր չէ, որ XIX դարը համարուում է բնագիտութեան դար: Անգլիական մեծ բնագէտը, Չարլզ Դարվինը համարուում էր այն կենտրոնական Փիզուրը, այն կեղակէտը, որի շուրջը հաւաքուում էին ժամանակի մտածողները և մտաւոր շարժումները: Նրա գրքերը, նամանաւանդ «տեսակների ծագումը» բանում են ամբողջ մի դարագլուխ, առջ կն բերում խորունկ յեղաշրջում ընդհանրապէս մարդկային մտածողութեան մէջ և մասնաւորապէս բնագիտական աշխարհում: Թնագիտութիւնները, առանձնապէս կենսաբանութիւնը, տօնում էր իր հռչակաւոր յաղթանակը, և գրեթէ ամբողջ արեւմուտքը, յանձին իր լաւագոյն մտածողների և դասակների, կլանւած էր այդ հսկայական մտաւոր շարժումով: Մարդկային մտածողութիւնը, եթէ ոչ ամբողջովին, գոնէ խոշոր մասով գտնուում էր բնագիտական հոսանքի և ուղղութեան անմիջական ազդեցութեան տակ: Եւ այլ կերպ չէր էլ կարող լինել, չէր կարող մարդկային մտածողութեան ընթացքը չարդւել այդ հոսանքից, քանի որ դա մի հսկայական շարժում էր, ուժեղ և ազդեցիկ: Ամենահարուստ և ճոխ գրականութիւնը համարուում էր բնագիտական գրա-

կանութիւնը: Դարվինը քաշ է տալիս, գերում մի շարք ակնաւոր գրողների, անգամ համաշխարհային մտածողների, ինչպէս էրնստ Հէկկէլ, Հելմհոլց, Վայսման, Լեն, որոնք աւելի ևս զարկ են տալիս բնագիտական գրականութեան և մտածողութեան ուժեղանալուն ու խորանալուն, ինչպէս և ստեղծում հարուստ մատերիալ, ճոխ գրականութիւն, և այսպիսով ազդում ամբողջ սերունդների վրա: Այս բնագէտները, բնագիտութեան խոշոր ներկայացուցիչները մշակում, տալիս են բիօլոգիայի, առհասարակ բնագիտութեան սահմանում մի շարք կարևոր և նշանակալից ընդհանրացումներ, փիլիսոփայական գրութիւններ: Կարճ, նրանք տալիս են բնագիտութեան, առանձնապէս բիօլոգիայի փիլիսոփայութիւնը: Գոյութեան կռիւ օրէնքը, բնական ընարութեան և յարմարումի սկզբունքները, տեսակների ծագման թէօրիան Լեն, որոնք կազմում են բնափիլիսոփայութեան ամենահիմնական թէզիսները և մտքերը:

II.

Բայց բնագիտական, նամանաւանդ բիօլոգիական ընդհանրացումները չեն մտում

միայն այդ բնագաւառի սահմաններում՝ որպէս տիրող և պարտադրական սկզբունքներ ու օրէնքներ: Ոչ. բիօլօգիական, առհասարակ բնափիլիսօփայական ընդհանրացումները դուրս են գալիս այդ շրջանակից և տարածուում միւս բնագաւառների վրա, ձգտելով դառնալ ընդգրկող սկզբունքներ, պարտադրական նաև միւս գիտական դիսցիպլինաների համար, պարտադրական ընդհանրապէս համաշխարհային շարժումների և երևոյթների համար: Կարճ, բնախոյզները բիօլօգիայի փիլիսօփայական ընդհանրացումները և սկզբունքները տարածում են նոյնպէս հասարակական կեանքի երևոյթների վրա և ուզում են բոլոր սօցիալական բարդ փաստերը, եղելութիւնները և շարժումները բացատրել, լուսաբանել այդ սկզբունքներով, օրինակ՝ գոյութեան կուր օրէնքով, յարմարման և ընտրողութեան սկզբունքներով ևն: Այլ կերպ արտայայտած, Գարվիների ընդգրկող բնագիտական թէօրիային առ հասարակական նշանակութիւն:

Այսպիսով սկսում է բնագիտական հետազօտութիւնների կամ շարժման նւաճումների մի նոր ֆազը՝ հասարակագիտական նշանակութեամբ: Ահա այդ ժամանակ մշակուում է ամբողջ մի սօցիօլօգիական տե-

սութիւն, սօցիօլօգիայի ամբողջ մի կուրս, գիսցիպլին, հիմնւած բիօլօգիական սկզբունքներին, բնափիլիսօփայութեան ընդհանրացումների վրա: Իս մի ուշագրաւ շարժում էր, հետաքրքրական և բնորոշ այդ դարաշրջանի մտածողութեան համար առհասարակ: Այդ շարժման էութիւնը կարելի է որոշել կարճ և պարզ կերպով: Բիօլօգիական սկզբունքները միաժամանակ սօցիօլօգիական սկզբունքներն են: Պարզ և կտրուկ յայտարարում են հուշակուտր բնախոյզները և բնափիլիսօփաները: Այդ կազմում է նոյնպէս Եւրոպայում տիրող մտածողութեան էական կողմը: Եւ այսպիսով ստեղծուում է մի ամբողջ հասարակագիտական թէօրիա— դարվիսեան սօցիօլօգիա:

Բիօլօգիական սկզբունքները միաժամանակ սօցիօլօգիական սկզբունքներ են: Ուղղազծական դարվիսիստ-բնագէտների այս անվերապահ յայտարարութիւնը կրում էր իր վրա դժգոհատիկ մտածողութեան անտարակուսելի դրոշմը: Նրանց քայլը դժգոհատիկ էր, որովհետև անվերապահ ու առանց որոշ սահմանափակումների՝ ուզում էին անխտիր տարածել, կիրառել բիօլօգիական սկզբունքները, ուրիշ խօսքով, բնական երևոյթներին և շարժումներին զեկավարող օրէնքները հասարակական երևոյթներին և

շարժումները վրա:

Բայց շարունակենք մեր վերլու-  
ճումը: Բնագէտ-սօցիոլոգները այդ դօզմա-  
տիկ մտածողութեան սխալ կէտերին յա-  
ճախ առիթներ կուենանք կրկին ու կրկին  
վերագտնալու:

Կային այդ բնագէտ-սօցիոլոգների մէջ  
մտածողներ, որոնք, սօցիոլոգիան համարում  
էին բիօլոգիայի ոչ միայն շարունակութիւնը,  
այլ սոսկական դարգացումը: Այլիսի տեսակէտի  
վրա էր կանգնած անգամ Օզիւստ Կօնտը,  
սօցիոլոգիայի՝ որպէս գիտական գիտցիպ-  
լինի հիմնադիրը: Կարճ, նրանք բիօլո-  
գիան նոյնացնում էին սօցիոլոգիաի հետ:  
Այդպէս բիօլոգիական սօցիոլոգիան ան-  
քակտելիօրէն կապւած է նրա, Օ. Կօնտի  
անւան հետ, թէև պէտք է նկատել, որ  
նրանից առաջ էլ եղել են նման փորձեր,  
բայց միայն նա ընդհանրացրեց և սխտեմի  
վերածեց:

Բիօլոգիական սօցիոլոգները սոսկական  
դարգացումը, էվօլուցիան համարում էին  
պրօգրէս: Նրանք կանգնած էին այն թիւր  
տեսակէտի վրա, թէ գոյութեան կոնքրէնչ-  
պէս և ընարողութեան սկզբունքը լաւերի,  
կատարեալների կողմն է: Բնութեան և շրթ-  
ջապատի պայմաններին յարմարողները,

դարվինեան սօցիոլոգների տեսակէտով, ա-  
մենալաւ տիպերն են, իդէալական և պրօ-  
դրէսիվ: Նոյնպէս մի թիւր կարծիք, որն  
առաջանում էր բիօլոգիական և սօցիոլոգի-  
ական երևոյթները դիկավարող օրէնքների  
ոչ-գիտական նոյնութիւնից և իրար շփո-  
թելուց: Մրցումը բիօլոգիական սօցիոլոգնե-  
րի թէօրիաների մէջ անազին տեղ է բռնում:  
Նւ Միխայլովսկին) ոռւս սուրեկտիվիստ-  
սօցիոլոգը միանգամայն իրաւացի է և միա-  
ժամանակ գիտական հիմունք ունի Դարվի-  
նի թէօրիան անւանելու «հանճարեղ բուր-  
ժուական», իսկ իրեն, Դարվինին «հանճա-  
րեղ բուրժուա-նատուրալիստ»:

III

Դարվինեան սօցիոլոգիայի հիմնաւոր-  
ման մէջ ամենախոշոր տեղը պատկանում է  
Անգլիայի խոշոր մտածողին, XIX դարի  
մեծ փիլիսօփա-սօցիոլոգին, Հերբերտ Սպեն-  
սէրին: Սա է ամենամեծ զարկը տւել այդ  
սօցիոլոգիական ուղղութեան զարգացման և  
տարածման: Նա ուղղագծական դարվինիստ  
էր և նա եղաւ առաջին խոշոր մարդը, որը  
առանց վերապահութեան բիօլոգիական օ-  
րէնքները դրաւ սօցիոլոգների հիմքում, և

այսպիսով մշակեց Դարվինեան սօցիօլօգիան: Կարճ, նա տւաւ դարվինի բիօլօգիական փիլիսօփայութեանը սօցիալ-փիլիսօփայութեան ընդթ: Եւ աւելի քան ընորոշ և հետաքրքրական է այն որակումը, այն որոշիչը, որ տրւում է գիտական աշխարհում Սպենսէրին — «սօցիօլօգիական Դարվին»:

Հ. Սպենսէրի տեսակէտով բովանդակ հասարակական երևոյթները դեկավարւում են նոյն այն հիմնական օրէնքներով և սկզբունքներով, որոնք գրւած են բիօլօգիական երևոյթների և շարժումների հիմքում: Հասարակութիւնը ներկայացնում է իրենից ճիշտ այսպիսի մի օրգանիզմ, ինչպիսին ներկայացնում է բիօլօգիական օրգանիզմը: Այսպիսով, «հասարակութիւն» և «օրգանիզմ» հասկացողութիւնները նոյնանում են Սպենսէրի ուսմունքի մէջ: «Հասարակութիւնը մի օրգանիզմ է և օրգանիզմը՝ մի հասարակութիւն»: Այսպէս է աճա նա յայտարարում: Իսկ այս հիմունքներով նա զարգացնում և հիմնաւորում է մի ամբողջ թէօրիա, որը յայտնի է սօցիօլօգիայի մէջ «հասարակութեան օրգանական թէօրիա» անունով:

Իս ամբողջ մի շարժում էր, մի հսկա-

յական հոսանք: Իս աւելին էր քան բիօլօգիական տարրի նշանակութեան և գերի շեշտումը սօցիօլօգիայի մէջ: Իս աւելին էր, քանի որ սօցիօլօգիան, այդ նորագոյն գիտութիւնը փաստապէս դադարում էր լինել մի ինքնուրոյն գիտական գիտցիպլին, և այդ անունը միայն մի դատարկ մեծութիւն էր ներկայանում: Ֆրանսիական գրող Էսպէնասը այնքան էր հեռու գնում, որ մինչև իսկ յայտարարում էր սօցիօլօգիան բիօլօգիայի մի սոսկական մասը:

«Օրգանական թէօրիայի» ներկայացուցիչները, իրենց գլուխն ունենալով Հերբերտ Սպենսէրին, շեշտում են, ուրիմն, հասարակութեան և բիօլօգիական օրգանիզմի անալոզիայի վրա, և այս ճանապարհով կառուցում իրենց սօցիօլօգիական շէնքը: Համեմատելով այդ երկու հասկացողութիւնները, հասարակութեան և կենդանական օրգանիզմ, նրանք զտնում և մատնանշում են մի շարք նմանութիւններ, մի շարք էական գծեր՝ ընդհանուր երկուսի համար էլ: Նմանութեան զլիաւոր կէտերն են. ա) որ երկուսն էլ, թէ հասարակական օրգանիզմը, այսինքն, հասարակութիւնը և թէ բիօլօլօգիական օրգանիզմը աճում են. բ) թէ հասարակութեան և թէ բիօլ. օրգանիզմի մէջ

բազմանում են Ֆունկցիաները և աւելի ու աւելի զօնազանաւորման ենթարկւում թէ օրգանիզմները, և թէ հասարակութիւնը:

Բացատրենք մի երկու օրինակով: Ստորին կենդանին, օրինակ, դեռ չունի ֆունկցիաների շեշտած զանազանաւորումը. այդ ֆունկցիաները, կանգանու օրգանները դեռ որոշ և պարզ չեն: Այդ ստորին կենդանին դեռ չունի ստամոքս, շնչառութեան առանձին օրգան: Բայց նա հետզհետէ ենթարկւում է դիֆֆերենցիացիայի, զանազանաւորման և առաջ են գալիս որոշ ձևով ֆունկցիաներ, և այսպիսով կատարւում է օրգանների մէջ աշխատանքի բաժանում: Այս բիօլոգիական աշխարհում: Նոյն երևոյթը, նոյն տիրող ընդհանուր օրէնքը կատարւում է նաև հասարակութեան մէջ: Նախապատմական շրջանում, օրինակ, քարանձաւների, բարէ և երկաթէ շրջաններում նախամարդը դեռ չէր ենթարկւած դիֆֆերենցիացիայի. նա մի ամբողջութիւն էր, դեռ չկար աշխատանքի բաժանում նրա օրգանների մէջ: Նախամարդը և՛ որսորդ էր, և՛ խաշնարած, և՛ մարտիկ: Եւ այսպիսով, ըստ Սպենսերի, քանի գնում է թէ բիօլոգիական և թէ հասարակական օրգանիզմը զարգանում է, շերտաւորման ենթարկւում,

աշխատանքի բաժանում կատարւում և հետևապէս, օրգանիզմը, ինչպէս և հասարակութիւնը անցնում է պարզից դէպի բարդը, միատարրից՝ բազմատարրը:

Այդ է զեկավարող տինգերական օրէնքը, ինչպէս և խնկական զարգացումը: Իսկ այդ զարգացումը Սպենսերի համար նոյնանում է պրօգրէսի հասկացողութեան հետ:

Բայց վերոյիշեալ նմանութիւնները հետ միասին կան նոյնպէս նոյնքան էական և հիմնական տարբերութիւններ բիօլոլօգիական և հասարակական օրգանիզմների մէջ: Այդ շատ լաւ գիտակցում է նաև Հերքերտ Սպենսերը: Մենայդիսուր և էական տարբերութիւնը կայանում է նրանում, որ կենդանական կամ բիօլոգիական օրգանիզմը մի անբաժանելի ամբողջութիւն է, մի ամբողջութիւն անբաժանելի օրգանների, կարճ՝ բիօլոգիական օրգանիզմը մի կոնկրետ ամբողջութիւն է, մինչդեռ մարդկային հասարակութիւնն, ընդակառակը, մի բաժան, անջատ և ոչ թէ միացած ամբողջութիւն է, կարճ՝ նա մի դիսկրէտ ամբողջութիւն է: Բիօլոգիական օրգանիզմի մէջ բոլոր տարրերը, բոլոր օրգանները և ֆունկցիաները անբաժանելիօրէն միացած են մի միութեան մէջ,

մինչդեռ, մարդկային հասարակութեան մէջ այդ տարրերը բաժան-բաժան են և անջատ: Բիօլոգական օրգանիզմի մէջ գիտակցութիւնը, վերջապէս, միայն մի տեղումն է կենտրոնացած և նա ներկայացնում է մի ինդիվիդ, մինչդեռ մարդկային հասարակութեան գիտակցութեանը այդպիսի կենտրոնացում չկայ, այլ գիտակցութիւնը բաժանւած է շատ տեղերում: Հասարակութեան մասերը միացած են հոգեպէս, իսկ օրգանիզմի մասերը, վանդակները միացած իրար հետ նիւթապէս, ֆիզիքապէս, ևն ևն:

Սպենսէրը, ինչպէս և «օրգանական թէօրիայի» բոլոր ներկայացուցիչները, իրենց ուշադրութիւնը կենտրոնացնում են հասարակութեան բիօլ. օրգանիզմի անալոգիայի վրա, բայց Միխայլովսկին, և անասաբակ ոռուտական սօցիօլոգիական շիօլայի ներկայացուցիչները, ինչպէս մի կարև, մի Չերնով, մի Լունկևիչ, իրենց ուշադրութիւնը կենտրոնացնում են, ընդհակառակը, գրանց միջև եղած տարբերութեան վրա:

Եւ այդ էական և կարևոր տարբերութիւնները, ինչպէս նկատեցինք, շատ լաւ գիտակցում են նաև օրգանական թէօրիայի, բիօլոգիական սօցիօլոգները ներկայացուցիչները, ինչպէս և ինքը, Սպենսէրը:

Դեռ աւելին: Սպենսէրը շեշտում է մի էական բաժանողական դժի վրա, և հէնց այդ դրութիւնը շատերին, ինչպէս և կարևին պարմանալու առիթ է տուել: Նրանք պարմանում են, որ Սպենսէրը, այդ բաժանողական դիժն ընդունելով հանդերձ, գալիս կանգնում է հասարակութեան և օրգանիզմի անալոգիայի սկզբունքի վրա: Անա այդ կէտը: Սպենսէրը համարում է հասարակութիւնը մի դերօրգանական, էվօլյուցայի արդասիք: Այդ տերմինը, դերօրգանիզմ, կայ արդէն Սպենսէրի մօտ: Հակասութիւնը ակնհեր է: «Միթէ՞ նրանք զբանով հակասութեան մէջ չեն ընկնում, հարցնում է իրատացիօրէն սուս պատմաբան-սօցիօլոգ կարևը: Ի՞նչ կարիք կար ստեղծելու այդ տերմինը, դերօրգանիզմ, որը տալիս է բոլորովին այլ որոշում»:<sup>\*</sup>)

Բաւականին պարզ է հէնց այժմեանից, կարծում ենք, թէ որ աստիճանի անհիմն և ոչ գիտական է մարդկային հասարակութեան և կենդանական օրգանիզմի անալոգիան, միաժամանակ պարզ է, թէ որքան սխալանք կայ դրա մէջ: Այդպիսի

\* Кареевъ. Историко-философ. и социол. этюды ст. 143.

մի թիւը քմբոնման և սխալանքի վրա է հիմնւած նոյնպէս աշխատանքի սօցիալական բաժանման և աշխատանքի ֆիզիօլօգիական բաժանման անալօզիան, մի դրութիւն, որ սերտօրէն կապւած է վերևի դրութեան հետ, այսինքն հասարակութեան և ֆիզ. օրգանիզմի անալօզիայի հետ: Ուղղագծական դարվինիստները նայնացնում են Դարվինի «յատկանիշների բաժանման» սկզբունքը բերի «աշխատանքի ֆիզիօլօգիական բաժանման» սկզբունքի հետ: Մի ազդակնոյ մոլորութիւն: Այդ սխալանքը և շիտթը նկատելի է շատ դարվինեան սօցիօլօգիաների մօտ: Որ այդ երկու սկզբունքները իրարից միանգամայն բաժանուում են և երբէք նոյնը չեն, այդ մենք մանրամասնօրէն կտեսնենք, երբ կվերլուծենք Միխայլովսկու «անհասականութեան թէօրիան» և պրօզրէսի հասկացողութիւնը: Այժմ միայն այսքանը կասենք, որ բերի օրէնքը, այսինքրն, «աշխատանքի ֆիզիօլօգիան կամ ֆիզիքական բաժանումը» տիպի դարգացման կողմն է, մինչդեռ «յատկանիշների բաժանումը» կամ աշխատանքի սօցիալական բաժանումը տեսակի դարգացման կողմն է: Միևս կողմից, պարզ է նաև այն, որ միշտ էլ տեսակի և անատի շահերը չեն դուգագիպում:

Հերբերտ Մպենսէրը միակ խոշոր դէմքը չէ, ինարկէ, դարվինեան սօցիօլօգիայի հիմնաւորողների մէջ, հետևապէս նաև օրգանական թէօրիայի թէօրետիկոսների մէջ: Օրգանական թէօրիան ունեցաւ նաև իր այլ նշանաւոր հիմնադիրները և զարգացնողները, ինչպիսին են՝ Լիլիօնֆիլդը, Շէֆֆլէ կն: Սրանք էլ, որպէս հաւատարիմ հետևորդներ սպենսէրիան սօցիօլօգիայի, աւելի ևս զարգացնում և խորացնում են օրգանական թէօրիայի հիմնական դրութիւնները: Նրանց ուշադրութիւնն ամենից շատ կենտրոնանում է հասարակութեան և կենդանական օրգանիզմի, առհասարակ սօցիալական և օրգանական էվօլյուցիաների միջև եղած անալօզիայի վրա: Նրանք բոլորն էլ ձգտում են մի գուգահետական անց կացնել այդ երկուսի միջև, սալով դրան կուռ, հաստատուն հիմունքներ, զործագրելով իրենց աժբողջ հարուստ էրուգիցիան: Սրանք էլ նայում են հասարակութեան վրա որպէս իրական, բիօլօգիական օրգանիզմի վրա, և որը զեկավարուում է ճիշտ նոյն օրէնքներով, ինչպիսի օրէնքով զեկավարուում է բիօլօգիական օրգանիզմը: Շէֆֆլէն էլ աւելի հեռուն է գնում: Նա դիտում է հասարակութիւնը որպէս մի իրական ին-

դիվիզ, մի անհատականութիւն, միայն բարձր տեսակի ինդիվիզ. նա անհատականութիւն է անգամ իր Ֆունկցիաներով, այսինքն, Ֆիզիոլոգիորէն: Շէֆֆլէն այնքան ծայրայեղութեան մէջ է ընկնում, որ նա մի առ մի թւում է սօցիալական նեարդերը, օրադանները, կենտրոնները ևն: Նրա համեմատութեան ծայրայեղութիւնը հասնում է անգամ արտուրդի, միանդամայն կորցնելով գիտական հոգը իր ստանդարտակից:

Տեղն է այժմ նկատել, որ օրգանական թէօրիան այժմ շատ է թուլացած և յետ մղւած, չգիմանալով գանազան կողմերից տեղացող տեսական հարւածներին:

Անա XIX դարի խոշոր շարժումներից մէկը, ներկայացրած ընդհանուր գծերով — ընագիտական և բիօլոգիական-սօցիոլոգիական շարժումը, որն ազդել է մի շարք սերունդների վրա, իսկ անջնջելի դրոշմ դրել ժամանակակից մտածողութեան և թէօրիաների վրա:

V

Բայց զրա հետ միասին և գրեթէ միաժամանակ տիրում էր նոյնպէս մի այլ

շարժում, նոյնքան հզօր, նոյնքան հսկայական և ազդեցիկ, որքան առաջին շարժումը: Իսկ անասարակ հասարակագիտական շարժումն է, սօցիալական տեսական յեղաշրջումներն շրջանը:

Կապիտալիզմը յաղթանակում էր, ծագում էր խոշոր արդիւնարերութիւնը և հասարակահօն-տնտեսական կեանքը կրում խորունկ յեղաշրջում: Այդ տնտեսական-սօցիալական հոսանքի ներկայացուցիչներն են հաղիսանում մի շարք մտածողներ, նոյնքան խոշոր և ընդգրկող, որքան բնագիտական հոսանքների ներկայացուցիչները, ինչպիսին են՝ Ադամ Մսիս, Պրուդօն, Լուի Բլան, Օվին, Տուրիէ, Կարլ Մարքս, Էնգելս ևն: Մի ամբողջ շարք ակնաւոր դէմքերի և խորունկ մտքերի:

Ինչպէս որ առաջին շարժման մէջ կենտրոնական Ֆիզուրն է Դարվինը, այնպէս էլ երկրորդ շարժման մէջ Կարլ Մարքսն է: Եւ ինչպէս որ Դարվինի երկերը բռնում են ընագիտութեան մի ամբողջ դարազուրիս, ճիշտ այնպէս էլ Կարլ Մարքսի գլուխ-դորձոցը, «Կապիտալը» բռնում է մի ամբողջ շրջան հասարակագիտութեան մէջ: Այդ երկու մտածողների երկերը, առանձնապէս Դարվինի «տեսակէտների ծագումը» և Մարք-

սի «Կապիտալը» համարում են առհասարակ XIX դարի ամենախոշոր, հասարակական կենսաքի և մարդկային մտքի զարգացման մէջ խորունկ յեղաշրջում առաջ բերող ստեղծագործութիւնները: Իրանցից ամեն մէկը դնում է ամուր հիմքեր նոր աշխարհայեցողութեան կառուցւածքի, բանում նոր և լայն հորիզոն այդ աշխարհներում:

Ահա այդ երկու շարժումները, — բնագիտական և սօցիալական-հասարակագիտական, զարգանում էին կողք-կողքի, միաժամանակ, ինչպէս և իրար դէմ կառուցւած՝ որպէս թշնամի, հակադիր հասանքներ և ուղղութիւններ: Ուժեղ պայքարը երկար շարունակում է այդ երկու ուղղութիւնների միջև: Թւում էր, որ դրանց մէջ կայ մի անկամարջելի վիճ, մի անլուծելի հակադրութիւն:

Ահա այս հակադրութեան լուծման պրօբլէմն էր դրւած հրապարակի վրա, և դարի լաւագոյն ոյժերը նւիրել էին այդ անտաղօնիզմի լուծման: Մի այժմէական և այրող հարց: Նոյն դրութիւնը նաև Ռուսաստանում: Ռուսաստանն ևս մասնակից էր այդ աշխատանքին, և չէր էլ կարող հեռու մնալ դրանից, քանի որ XIX դարի այդ ամենախոշոր շարժումները չին սահմանափակ-

ւում միայն Եւրոպայով, այլ դառնում են համամարդկային:

Իսկ 60-ական թւականներին այդ երկու հոսանքներն էլ գտնում են կողմնակիցներ ռուսական իրականութեան մէջ: Օրգանական թէօրիան, առհասարակ դարվինիան սօցիօլօգիան այնպիսի ուժեղ և խորը չէր Ռուսաստանում, ինչպէս Եւրոպայումն էր: Նա Ռուսաստանում շատ դժգոյն էր և թոյլ, ինչպէս և չունէր շատ կողմնակիցներ: Այդ երևոյթը աւելի քանի հասկանալի էր ռուսական այն էպօխայի համար, ասում ենք հասկանալի, քանի որ Ռուսաստանը շատ էր յետ մնացել Եւրոպայից մի քանի կողմերով և տեսակէտներով, թէ խոշոր արդիւնաբերութեան տեսակէտից, թէ դասակարգային կուլի, դասակարգային դիֆֆերենցիալայի տեսակէտից, ևն: Բայց, յամենայն դէպս, թէև թոյլ էր դասակարգային զանազանաորումը, բայց նա կար, սկսւած էր արդէն և, հետևապէս, արժարժւում են նոյն խնդիրները, բարձրանում է նոյն վէճը, ինչ տիրում էր Եւրոպայում:

Ռուս մտաւորականների մէջ էլ սկսւում է այդ շերտաւորումը, ինչպէս և պայքարը այդ երկու հոսանքների ներկայացուցիչների միջև: Մարքսիզմը, որպէս հասա-

րահադիտական վարդապետութիւն, աւելի քան զգալ է տալիս իրեն ուստական իրականութեան մէջ:

Անա այդ պայքարում իր մեծութեամբ րարձրանում է նոյնպէս ուստ մեծ փիլիսոփա-սօցիոլոգը, ուստ սուրբիեկտիվիստ Միխայլովսկին: Եւ հէնց այդ պայքարումն էլ զարգանում, հիմնաւորում և բանաձևւում նրա ընդգրկող սօցիալ-փիլիսօփայական, նրա սօցիոլոգիական աշխարհայեացքը: Ռուս սուրբիեկտիվիստ-սօցիոլոգը ասանձնապէս կատարի կոխ և պայքար է մղում Եւրոպայում և Ռուսաստանում սկսող և շայն չափեր ընդունող օրգանական թէօրիայի դէմ: Կանգնած գիտական հողի վրա, նա տալիս է այդ սօցիոլոգիական աշխարհայեացքի կառուցւածքին ուժեղ և ցնցող հարւածներ: Նրա առաջին սօցիոլոգիական, սահասարակ սօցիալ-փիլիսօփայական աշխատութիւնը, „Что такое Прогресс?“-ը, գրւած դեռ 1869 թւին և որի մէջ խտացած են արդէն նրա փիլիսօփայական-սօցիոլոգիական աշխարհայեացողութեան հիմնական գծերը ու գրութիւնները, — նւիրւած էր Սպենսերի աշխատութիւնների, նրա սօցիոլոգիական վարդապետութեան խորունկ և բազմակողմանի, միևնոյն ժամանակ ջախջախիչ քննա-

դատութեան, մի քննադատութեան, որի նմանը չէր աւել մինչ այդ եւրոպական գրականութիւնը:

Ասացինք, որ Միխայլովսկու այդ անգրանիկ սօցիոլոգիական տրակտատում արդէն երևան է բերւած նրա ընդգրկող աշխարհայեացողութիւնը՝ իր ընդհանուր դժերով, և ազագայում նա միայն աւելի հիմնաւորել, զիտական նոր փաստերով ու աւեակներով ճոխացրել է արդէն արծարծւած ու դրւած դրութիւնները: Այդ հանգամանքի վրա շեշտում են նրա քննադատներից շատերը: Այդ գրւածքը ունի իր նեգատիվ, քննադատական-ժխտողական բաժինը և միւս կողմից իր գրական բաժինը: Առաջին բաժնում նա քննադատում է, ինչպէս ասացինք, ահասարակ սպենսերեան սօցիոլոգիական, ասանձնապէս օրգանական թէօրիան, օրիեկտիվ մեթօղը սօցիոլոգիայի մէջ ևն: Արդէն այդ գրւածքում պարզւում է նրա դիրքը սօցիոլոգիայի և բիօլոգիայի նոյնութեան վերաբերմամբ, ինչպէս և բնագիտական ու հասարակագիտական մեթօղների և պրօգրէսի ըմբռնման հանդէպ: Նա մօտենում է այդ հարցերին իր ընդգրկող սօցիոլոգիական սուրբիեկտիվիզմի տեսակետով, անհատականութեան սկզբունքի և

պրօգրէսի իր Փօրմուլայի վրա յենած:

Բնագիտութեան և հասարակագիտութեան հարցը, որը համարուում էր այդ ժամանակեայ ամենպէսական և դժւարին խնդիրը ու գերել էր ըստը մտածողներին, սօցիալփիլիսօփաներին,— ստանում է Միխայլովսկու սօցիօլօգիական-սուբիեկտիվիստական դօկտրինի մէջ իր խիստ գիտական, մեղ համար շատ գնահատելի և օրիգինալ լուծումը: Եւ այդ աշխատանքը կատարուում է հէնց նրա առաջին սօցիօլօգիական գրեածքում, իսկ յետագայում միայն աւելի գետայլօրէն հիմնաւորում է: Եւ մենք իրաւացիօրէն կարող ենք Միխայլովսկու այդ տրակտատը անւանել «ծրագիր-գրեածք»:

Վերև ընդգծած պրօբլէմի, այսինքն, հասարակագիտութեան և բնագիտութեան հակադրութեան լուծման բնոյթով ինքնին բնորոշում է ամբողջ նրա սօցիալփիլիսօփայական վարդապետութիւնը: Նա տալիս է այդ երկու գիտութիւնների սենձէրը: Նա համարում է գիտութեան այդ երկու բնագաւառներում երևան եկած նւաճումները, հետազօտութիւնները, և ոչ թէ նոյնացնում սօցիօլօգիական նւաճումները բիօլօգիական նւաճումների հետ, մի բան, որը տեսնում ենք ուղղագծօրէն մտածող դարվիսիստ-սօ-

ցիօլօգները մօտ: Այդ սենձիկ մտածելակերպը տիրապետող տեսակէտ է նրա սօցիալփիլիսօփայական յղացումի մէջ: Սենթիթիկ կողմը բնորոշող գիծ է ոչ միայն Միխայլովսկու համար, այլ առհասարակ ուսական սօցիօլօգիական-սուբիեկտիվիստական և պօզիտիվիստական շկօլայի ներկայացուցիչների համար:

Միխայլովսկին յետ մղելով բիօլօգիական սօցիօլօգներին այն դօգմատիկ պնդումը, թէ սօցիօլօգիան բիօլօգիայի զարդացումն է միայն, և յենւելով իր բնագիտական և հասարակագիտական խորունկ ճանաչողութեան և հարուստ էրուդիցիայի վրա,— նա հաւասարապէս գնահատում է թէ մէկը և թէ միւրը: Եւ միւս կողմից, քանի որ նա քաջ ծանօթ էր թէ բնագիտութեան և թէ հասարակագիտութեան ներկայացուցիչների թոյլ կողմերին, այնպէս որ նա զերծ մնաց այդ միակողմանիութիւններից և կարողացաւ կանգնել գիտական հողի վրա, ինչպէս և խոր կերպով վերցնել այդ՝ ամենքին զբաղեցնող և խիստ այժմէական հարցը: Եւ դա կարող է միայն պատիւ բերել սուբիեկտիվ-սօցիօլօգ Միխայլովսկուն: Այդտեղից անտարակուսելի է նաև նրա խոշորութիւնը, նրա համաշխար-

հայրն և համայնագարմախ միաքր: Այդ հարցի լուծման տեսակէտով, նա գնում էր Ջեքսֆիշեակու և Լարօվի յիսեկոց, բայց իր գիտական հարուստ էրուզիցիայով՝ երկու գիտութիւնների սահմաններում, ինչպէս և այդ հարցի խորութեամբ, Միխայլովսկին գերադանցում էր իր նախորդներին: Բայց ասիտս, որ նա շատ քիչ է զբաղւել զուս պիտութեամբ, զուս գիտական-փիլիսոփայական հարցերի հետազոտութեամբ: Գործնական կեանքը կլանել էր նրա գիտական մտքի և ոյժի յայտնի, եթէ չասենք մեծագոյն, բաժինը: Բայց այդ այդպէս լինելով հանդերձ, Միխայլովսկին, որպէս սօցիօլօգ, կարող է կանգնել հաւասար արժէքով Եւրոպայի յայտնի սօցիօլօգների կողքին:

Փիւլիմացութեան տեղիք չտալու համար, անհրաժեշտ ենք համարում հէնց այժմեանից մատնանիշ լինել մի հանգամանքի վրա: Բնագիտութեան և հասարակագիտութեան հակադրութեան այդպիսի լուծումը, ինչպիսին տալիս է Միխայլովսկին, ինքնին արդէն լուսադոյն ապացոյցն է այն բանի, որ նա դէմ չէ բիօլօգիական տարրին սօցիօլօգիայի մէջ: Նա, ընդհակառակը, ընդունում է բիօլօգիան սօցիօլօգիայի, հասարակագիտութեան ամենալաւ դաշնակիցը, որից

կարելի է մտերիալ վերցնել առատօրէն: Նա դէմ է միայն ուղղագծական դարվինիստ սօցիօլօգներին, որոնց հայեցակէտով սօցիօլօգիան ծածկւում է բիօլօգիայով և, հետևապէս, ուզում են բիօլօգիական բոլոր օրէնքները տարածել և կիրառել հասարակական երևոյթների ու պրօցէսների վրա: Նա դէմ է, վերջապէս, սօցիօլօգիական լիբերալիզմին, բնական ընթացքի և գոյութեան կուրի սկզբունքին հասարակագիտական երևոյթների աշխարհում, են:

V

Այս բոլորից յետոյ, կարծում ենք, պարզ է այն պայքարի ընդթագիւրը, այն դարաշրջանի գլխաւոր ուղղութիւնների նշանակութիւնը և դերը, երբ մշակւում է ուսս սուբիեկտիվիստ-սօցիօլօգի աշխարհայեցողութիւնը:

Ճիշտ է, Միխայլովսկին քննադատում է, անդամ անողոք քննադատութեան ենթարկում Սպենսէրի, Կանտի և այլի կարծիքները, բայց նա ամբողջապէս չի ժբխտում նրանց հետազոտութիւնները: Նա արժէքաւոր շատ բան է գտնում նրանց մօտ և գնահատում: Եւ դրանք յայտնի ազ-

դեցութիւն են արեւ նրա աշխարհայեցքի վրա: Առհասարակ պէտք է նկատել, որ Օգիւստ Կօնտի իմացական-պօղեաբիլիտտական շիօլան, Սպինսէրի բիօլօգիական և Կարլ Մարքսի տնտեսական շիօլան բաւականին ազդել են Միխայլովսկու վրա: Բայց նա զրանց հանդէպ միշտ էլ պահպանել է մտքի ինքնուրոյնութիւն և աշխարհայեցքի օրիգինալութիւն:

Նւ ևթէ աւելացնենք,—և դա ինքստինքեան հասկանալի դտնելով,—որ Միխայլովսկու սօցիօլօգիական-փիլիսօփայական տեսակէտի վրա ազդել են նոյնպէս Ֆրանսիական ազադասակարգային Պրուզօնը, Կարլ Փօն-Բերը, իսկ ուս մտածողների մի գեղեցիկ ու զրուիչ շարք՝ Իերցէն, Չերնիշևսկի, Լաւրով, Կարծում ենք, արդէն սպառած կլինենք ազդեցութիւնների հարցը, ինչպէս և ընդգծած այն պայմանները, որոնց տակ ծնւում և զարգանում է Միխայլովսկու թէօրիան:

Բայց զրանց հետ չպէտք է մոռանալ աւելացնել նաև մի անուն, որին Միխայլովսկին «ընկեր-ուսուցիչ» է կոչում, և որի մի շարք գրութիւններից օգտւում է մեր փիլիսօփա-սօցիօլօգը: Դա Նօթինն է:

Բայց այդ ազդեցութիւնների և պայ-

մանների տակից Միխայլովսկին դուրս է գալիս, ինչպէս ասացինք, իր որոշ սօցիօլօգիական Ֆիզիօնօմիայով, իր ինքնատիպ և օրիգինալ սօցիօլօգիական դօկտրինով: Նւ նրա ամբողջ աշխարհայեցքը եթէ ուզենանք մի բառով արտայայտել, պէտք է ասել «սօցիօլօգիական սուբիեկտիվիզմ»:

Բայց ինչ՞ու՞ն է կայանում դա, որո՞նք են նրա սօցիօլօգիական դօկտրինի բաղկացուցիչ ու էական մասերը և գծերը:

Անցնենք նրա սօցիօլօգիայի այդ բաղկացուցիչ մասերի վերլուծման:

## II. ՄՈՒՐԻՆԵԿՏԻՎԻԶՄ ԵՒ ՍՈՒՐԻՆԵԿՏԻՎ ՄԵԹՕԴ

### I

Սուրբեկախիվիզմը համարուում է առհասարակ Միխայլովսկու սօցիօլօգիայի ամենաուշագրաւ և օրիգինալ մասը: Բայց նա դեռ աւելին է. նա ոչ միայն ուշագրաւ և օրիգինալ է, այլ, ըստ իս, նաև ամենագնահատելի, արժէքաւոր, թանկագին կողմն է, որը պէտք է վայելալանքով պահել:

Այս հարցը, սուրբեկախիվիզմը սօցիօլօգիայի և պատմութեան մէջ, շատ է ծնւել, բունն և կատարի պայքարի աւիթ հանդիսացել: Նրա շուրջը շատ են մտքերը բաղլւել, շատ են նիդակներ ճօճւել: Այդ հարցը իր սուր ընաւորութեամբ երևան է եկել նամանաւանդ Ռուսաստանում: Մտքի այդ հսկայական մարտում իր ամբողջ մեծութեամբ բարձրանում է Միխայլովսկին, կանգ-

նելով պայքարող բանականերից մէկի դուխը: Եւ փաստոր յողթանակը մնաց Միխայլովսկու, առհասարակ ուսական սուրբեկախիվիստական—սօցիօլօգիական շօլայի ներկայացուցիչների կողմը:

Դրեւծ էր հասարակագիտական և բնագիտական մեթօդների, սուրբեկախիվ և օրբեկախիվ մեթօդների կնճոտա հարցը: Բայց դա մեթօդների հարց լինելուց դատ, նաև ամբողջ վարդապետութեան հարց էր:

Մպինսէրը, առհասարակ դարվինեան քիօլօգիական սօցիօլօգները, կանգնած էին օրբեկախիվ մեթօդի տեսակէտի վրա, առհասարակ օրբեկախիվիզմի տեսակէտի վրա թէ բնագիտութեան, և թէ հասարակագիտութեան մէջ:

Ահա այդ տիրող ըմբռնողութեան, գերիշխող մեթօդի դէմ էր կանգնած ուս սուրբեկախիվիստը, Միխայլովսկին: Նա բաժանում է օրբեկախիվիզմի, օրբեկախիվ մեթօդի սկզբունքը միայն այն չափով, որ չափով դա կիրաւում է բնական երևոյթների հետազօտութեան մէջ, իսկ երբ օրբեկախիվիստները կամենում են այն այդ մեթօդով մօտենալ նաև սօցիալական, պատմական երևոյթների հետազօտութեանը, Միխայլովսկին ծառանում էր նրանց դէմ, ցոյց

տալով օբիեկտիվ մեթօդի անպտուղ, ոչ գիտական և անհնարին լինելը այդ սահմանում:

Սօցիալական, պատմական երևոյթնե-րի, և փաստերի ու եղելութիւնների հետազօտութեանը պէտք է մօտենալ սուբիեկտիվ մեթօդով. սուբիեկտիվիզմը պէտք է լինի տիրապետող և դեկավար տեսակէտը սօցիալական գիտութիւնների մէջ:

Ահա Միխայլովսկու հիմնական միտքը նրա գիտական թէզիսը:

Եւ այդ հիմնական դրութեան վրա կառուցւած է ամբողջ մի սօցիօլօգիական վարդապետութիւն, սուբիեկտիվիստական սօցիօլօգիական վարդապետութիւնը, որը այժմ ունի Ռուսաստանում իր յայտնի ներկայացուցիչները:

Սուբիեկտիվիզմի տեսակէտի վրա է կանգնած ժամանակակից ուսւ յայտնի սօցիօլօգ-պատմաբան Կարենը: Նա ամբողջապէս բաժանում է Միխայլովսկու տեսակէտը: Եւ նա իր յայտնի բաժինը ունի սուբիեկտիվիզմի, սուբիեկտիվ տարրի հիմնաւորման մէջ: Նա յաճախ առիթներ է ունեցել զբաղւել այդ հարցի լուսաբանութեամբ և պայքարել նրա համար: Նա իր մտքերը զարգացրել է սիստեմատիկ կերպով «ИСТОРИКО-ФИЛОС. И СОЦИОЛ. ЭТЮДЫ» աշխատու-

թեան մէջ:

Մեծ տեղ են բռնում նաև մի շարք երիտասարդ ոյժեր, ուստական սուբիեկտիվիստական սօցիօլօգիական շիօլայի երիտասարդ հետևորդները, որոնց մէջ առաջին տեղը բռնում է Վիկտօր Չերնօվը, որ ներկայանում է այժմ այդ գալոցի ամենայայտնի թէօրեատիկոսներից մէկը, եթէ չասենք ամենայայտնին \*):

II

Բայց այստեղ ըստինքեան բարձրանում է մի շատ էական հարց. ինչպէս են նրանք հասկանում սուբիեկտիվիզմը: Դա մի հարց է, որի լուծումից շատ բան է կախւած:

Իսկոյն պիտինկատել, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թէ մի սոսկական մեթօդի, այլ ամբողջ մի դօկտրինի, մի ամբողջական սօցիօլօգիական վարդապետութեան հետ: Դա սուբիեկտիվ տեսակէտն է սօցիօլօգիայի, առհասարակ սօցիալական գիտութիւնների մէջ—պատմութեան, քաղաքականութեան, էթիկայի սօցիօլօգիայի մէջ:

\*) Տես նրա գիրքը. «ФИЛОС. И СОЦИОЛ. ЭТЮДЫ», առանձնապէս «СЪОБЪЕКТИВНЫЙ МЕТОДЪ ВЪ СОЦИОЛОГИИ» էտիւզը ст. 151—250.

Բայց մօտենանք վերև դրեաձ կարևոր հարցին: Կարևոր շատ ճիշտ կերպով է մօտենում հարցի լուծմանը և, հետևապէս, պարզուձ նրանց ըմբռնած սուբիեկտիվիզմը: Շատերն են կանգնած սուբիեկտիվիզմի տեսակէտի վրա. սօֆիստաներն էլ կանգնած են այդ տեսակէտի վրա: Կայ, ուրեմն, սուբիեկտիվիզմ և սուբիեկտիվիզմ: Ռուսական սուբիեկտիվիզմը բոլորովին ինքնատիպ է և կրում է միանգամայն գիտական բնոյթ: «Ուրիշ բան է իր վիսից ստեղծել սիստեմ և իր մտածողութեան արդիւնքներին վերադրել իրական գոյութիւն, բայց այլ բան է ունենալ որոշ յարաբերութիւն դէպի այս կամ այն սօցիալական փաստը, ձևը բերւած կանոնաւոր, օբիեկտիվ ուսումնասիրութեան ճանապարհով» \*):

Ահա ինչպէս է մօտենում խնդրին Կարևոր: Հէնց այդ բաների մէջ արդէն աչքի է խփում ուսական սուբիեկտիվիստների մեթօդի գիտական նշանակութիւնը և բնաւորութիւնը: Այստեղից պարզ է, որ ամբողջ հարցը կայանում է նրանում, թէ հնարաւոր է սօցիալական երևոյթներին վերաբերել

\*) Карьеръ. «Историко-фил. и соц. этюды», «субьективизмъ въ социологiи» ст. 117.

անվագով (Կարևոր), կամ հնարաւոր և «օբիեկտիւտը է տելէօլօգիական տարրի գուրս զցելը սօցիօլօգիական հետազօտութիւններից, կարող է սօցիօլօգը, և ունի տրամաբանական իրաւունք իր հետազօտութիւնների միջից գուրս վոնդել մարդուն, ինչպէս նա կայ իր վշտերով և ցանկութիւններով» (Միխայլովսկի):

Այստեղ, ուրեմն, դրեաձ է վերաբրմունքի խնդիր: Հնարաւոր է օբիեկտիվ, անվրդով և հանգիստ վերաբրել սօցիալական, քաղաքական, էթիքական փաստերին, եղելութիւններին և երևոյթներին: Այս հարցին Միխայլովսկին, և առհասարակ, ուսական սուբիեկտիվիստական-սօցիօլօգիական շկօլան պատասխանում է բացասաբար: Եւ նրանք ոչ միայն շեշտում են սուբիեկտիվիզմի վրա սօցիօլօգիայի մէջ, այլ և դա համարում են անխուսափելի և անհրաժեշտ: Անկարելի է սուբիեկտիվ տարրը գուրս զցել սօցիօլօգիայի միջից: Ահա նրանց անվերապահ և գիտական պընդումը: «Օբիեկտը չի կարող այլ կերպ ազդել հետազօտողի վրա, քան առաջ բերելով դէպի իրեն սուբիեկտիվ վերաբրմունք, եթէ միայն վերջինս չի ուզում սահմանափակել մենակ երևոյթի արտաբին ըմբռնողու-

թեամբ: Ահա այս դէպքում չի կարող երեւոյթը հասկացել առանց սուբիեկտիվ տարրի օգնութեան, և դա, անհրաժեշտ, անպայման է»\*) «Տառապող մարդկութիւնը, միացած երկրի արամարանութեան հետ, վրէժխնդիր է լինում ըտրոր նրանցից, ով նրան մոռանում է; ով նրա տանջանքների մէջ չի իտիանցում. օբիեկտիվ տեսակէտը գուցէ պարտադիր է բնագէտի համար, բայց կատարելապէս անպէտք է սօցիոլօգի համար, քանի որ վերջինս օբիեկտը՝ մարդը նոյնանում է սուբիեկտի հետ»\*\*)

Ահա այս իմաստով են համարում սուբիեկտիվ տարրը անխուսափելի, անհրաժեշտ և անպայման սօցիոլօգիայի մէջ: Մարդ-անհատը, սպրելով սօցիալական երևոյթների բարդ հիւսուածքի մէջ, միշտ էլ երեւան է բերում իր որոշ ցանկութիւնները, կամեցողութիւնները անհշբր և նպատակները: Իսկ ուր նպատակ կայ—սօցիալական երևոյթների մէջ միշտ էլ նպատակներ կան—այնտեղ չի կարող չլինել երևոյթների գնահատում, արժէքաւորում: Մարդն արդէն ըստ իր բնութեան ընդգրկում է մօրալական գիտակ-

\*) Карцевъ. ibid. ст. 118.

\*\*) Михайловскій, «пол. соч.» I т. ст. 72.

ցութիւն և դա կազմում է նրա անբաժան մասը, որից անկարող է պոկ գալ: Եւ նրա հէնց այդ բնութիւնը հարկադրում է նրան գնահատել, դատողութիւն տալ երևոյթների, դէպքերի մասին: Մարդն անգամ ճանխուսափելիօրէն տալիս է իր սուբիեկտիվ բովանդակութիւնը ամեն մի ստեղծագործած կերպարանքին, տիպին: Դօն-Քիշօտ, Համլէտ, Օտելլօ, Մանֆրէդ ևն,—այն ըտրորը ոչ միայն կենդանի դէմքեր են, այլ դէմքեր, հասկացողութիւններ գեղարւեստագէտի: Ամեն մի գեղարւեստական արտադրութիւն ոչ միայն առարկայի պատկերն է, այլ և դատողութիւն նրա մասին»\*) Եւ մարդը, ընդգրկելով մօրալական գիտակցութիւն և նպատակ, միշտ էլ մօտենում է մի նախորդած մաշտարով երևոյթներին, մարդկանց յարաբերութիւններին, քաղաքական շարժումների, էթիքական հասկացողութիւնների և կրօնական ուղղութիւնների գնահատմանը: Այստեղ նա չի բաւականանում նրանով, ինչ կայ, ինչ տեսալ է, այլ նա ուզում է նոր դրութիւն, նա գնահատում է եղածը մի սօցիալական իդէալի տեսակէտով, ինչպէս և տալիս է որոշ նոր-

\*) Михайловскій. «пол. соч.» I т. ст. 140.

մեր թէ հասարակութեան յարաբերութիւններին և թէ հասարակական կազմին: Այստեղ արդէն շեշտուում է և նպատակէ դերը, տեղէօլօգիական տարրը, և էթիքական գնահատումը, հետեապէս, և սուբիեկտիվ սկզբունքը: Իսկ թէ «արդօք մեր նպատակները կլինեն մեծ թէ փոքր, մեր ցանկութիւնները՝ բարոյական թէ անբարոյական, մեր իդէալները՝ հասանելի թէ անհասանելի, այդ միևնոյն է, բայց, յամենայն դէպս, մի բան անսարակուսելի է, այն, որ նրանք անպայման կան և կլինեն ու գնելու են անպատճառ իրենց դրոշմը մեր հետազօտութեան վրա»:\*) Սօցիօլօգը, պատմաբանը, բարոյագէտը, որոնք ընդգրկում են այդ իդէալը, անխուսափելիօրէն, առաջնորդուում են իրենց սօցիօլօգիական-պատմական հետազօտութիւնների մէջ սուբիեկտիվ մեթօդով, նրանք գործադրում են անպայմանօրէն սուբիեկտիվ տարրը և տեսակէտը: Ահա ինչպէս պէտք է ըմբռնել սուբիեկտիվ տարրի, առհասարակ սուբիեկտիվիդմի անխուսափելիութիւնը սօցիօլօգիայի մէջ: Սա մի գուռ սօցիալ-հեզերանական փաստ է,

\*) *ibid* III т. ст. 10 «Философия истории Л. Влана»

մի եղելութիւն, որն անկարելի է ժխտել. հասարակական երևոյթները և յարաբերութիւնները և անմիջական կերպով շօշափում են մարդու շահերը և ազդում նրա վրա, և նա անկարող է անտարբեր մնալ:

Օբիեկտիվ մեթօդը ոչ միայն անօգուտ է սօցիօլօգիայի մէջ, այլ և անկարելի է, ինչպէս վերևն էլ նկատեցինք: Օբիեկտիվ գիտութիւնը տալիս է միայն գիտելիքներ, տեղեկութիւններ, գիտական ճանաչողութիւններ երևոյթների մասին: Եւ միայն այսքանը: Բայց այդքանը շատ քիչ է: Նա չի տալիս ցանկութիւններ, սօցիալական նպատակներ և գնահատումներ: Բայց սօցիօլօգիան տալիս է այդ, յենեկով գիտութեան օբիեկտիվ տեսանքի, պատմական, սօցիօլօգիական և վիճակագրական փաստերի վրա. նրա հիմքում դրած է սուբիեկտիվ տարրը, ցանկալիութեան և ոչ-ցանկալիութեան, վատի և լաւի սկզբունքը: «Մտքով հասարակական կեանքը, ամբողջ պատմութիւնը ներկայացնում է իրենից անհատների գիտակցական թէ անգիտակցական գործունէութեան արդիւնք: Դրանցից ամեն մէկը իր գործունէութեամբ ուղղում է հասարակութիւնը այս կամ այն կողմը

և, այսպիսով, այս կամ այն իմաստով որպէս կու՞մ է պատմութիւնը: Մեր ամեն մի վերաբերմունքը, որը շօշափում է հասարակութիւնը, սօցիալական ֆակտ է: Ապրել հասարակութեան մէջ և չկատարել հասարակական բնոյթի գործ, դա համահաւասար է սօցիալական կեանքի էութեան չըմբռնման: Եւ, ընդհակառակը, տեւալ հասարակական դրութեան ըմբռնումը անմիտ է սուանց նրա սուբիեկտիվ գնահատման»:<sup>\*</sup>)

Միխայլովսկին նոյնքան պարզութեամբ գնում է իր պահանջը. «սօցիոլոգի ուղղակի պիտի ասէ. ևս ցանկանում եմ իմանալ հասարակութեան և նրա անդամների մէջ և գոյութիւն ունեցող յարաբերութիւնները, բայց սոսկական գիտնալուց դատ, ևս ուզում եմ նոյնպէս իմ իղէալների իրականացումը»: Օրինակովիդ՝ սօցիոլոգիայի մէջ, Միխայլովսկու կարծիքով, այլ բան չէ, քան մի դիմակ, որով անբարեխիղճ մարդիկ խաբում են ուրիշներին, իսկ բարեխիղճները՝ իրենց: Դրա համար էլ Օգիւստ Կօնտը միանգամայն իրաւացի է, երբ նա պնդում է, որ «միայն նրանք կարող են յաջողու-

թեամբ գրադուել սօցիոլոգիայով, ում բարոյական մակարդակը բաւականին բարձր է»: Ձէ որ «անբարեխիղճ մարդիկ», նրանք, «որոնց բարոյական մակարդակը» ցածր է, կարող են խեղաթիւրել պատմական փաստերը և եղնութիւնները իրենց ծրագրի ու հաշիւների օգտին, և զբանից, անտարակոյս, կիցսուբի հասարակական և պատմական գիտութիւնը, հետազօտութիւնը: Ահա դրանից պէտք է անհրաժեշտօրէն զգոյշ լինել:

### III

Արդէն, ուրեմն, գիտենք, որ սուբիեկտիվ տարբը հասարակագիտութեան մէջ կարեոր, անհրաժեշտ և անխուսափելի է:

Բայց սուբիեկտիվ տարրի գոյութիւնը սօցիոլոգիայի մէջ դեռ չի նշանակում, որ գրանով ծխաւում է օրինկտիվ տարբը, օրինկտիվիդնն առհասարակ: Ոչ, երբէք: Այդպիսի գրութիւն չէք գտնի ոչ Միխայլովսկու, ոչ էլ ուսական սուբիեկտիվիտական-սօցիոլոգիական շօշայի միւս ներկայացուցիչների մօտ, ինչպէս Չերնիշևսկու, Լաւրովի, ոչ էլ երիտասարդներից ամենաականաւորի, Չերնովի մօտ: Իսկ Կարևի կարծիքն արդէն վերելը առաջ բերինք:

<sup>\*</sup>) Картеръ. «вст.-фил. и сош. этюдн»:—  
ст. 127

Միխայլովսկին տեղ է առնում, խօսելով, նրա լեզուով, մի երկեակ ճշմարտութեան, այն է՝ *правда-ճշմարտութիւն* և *правда-արդարութիւն*, ուրիշ խօսքով, օրինկտիվ և սուբիեկտիվ ճշմարտութիւն: Ընդունելով օրինկտիվիզմը, Միխայլովսկին, յամենայն դէպս, բարձր կօնսուրը, հսկողութիւնը՝ վերապահում է սուբիեկտիվ տարրին: Եւ այսպիսով նրա մօտ սուբիեկտիվիզմը ստանում է գիտական հիմք և խորունկ իմաստ: «Մտածող մարդը միայն այն դէպքում կարող է հասնել ճշմարտութեան, երբ կատարելապէս միանում է մտացածին օրինկտի հետ և ոչ մի բայէ չի բաժանուում նրանից, այսինքն, մտնում է նրա շահերի մէջ, վերապրում է նրա կեանքը, խորհում է նրա մտքերով, վերգգում նրա զգացմունքը, տանջում նրա տանջանքներով, լացում նրա արտասուքներով»:\*)

Միխայլովսկին ընդունելով սօցիալական երևոյթները, հասարակական կեանքի, պատմութեան դէպքերը, վիճակագրական տեղեկութիւնները, ցեղագրական եղելութիւնները որպէս աւեալներ, որպէս գիտութեան օրինկտիվ աւեալներ, նա յամենայն

\*) I T. CT. 72.

դէպս շեշտում է ճիշտ կերպով այն փաստի վրա, որ մարդը, սօցիալ-հոգեբանական տեսակէտից, չի կարող այդ բոլորի հանդէպ մնալ չէզօք, ինդեֆերենտ և անվրդով, այլ նա, ունենալով որոշ տեսակէտ և իդէալ, պնդատում, արժէքաւորում է այդ բազմապիսի փաստերը և եղելութիւնները: Եւ իզուր չէ, որ բոլոր պատմական երկերը սուբիեկտիվ են: Եւ միայն այդպիսի սուբիեկտիվիզմով, սուբիեկտիվիզմի այս լայն առումով կարելի է հասնել ճիշտ և գիտական իմացութեան հասարակական կեանքի երևոյթներին մասին: Անհնարին է հրաժարել իր սեփական Եսից, իր գիտակցութիւնից, և մտածել գերմարդկային անկողմնակալութեան մասին: Այդ անհնարին է հէնց մարդու հոգեբանութեան տեսակէտից: Եւ երբէք ցանկալի էլ չէ հրաժարել սեփական Եսից, մօրալական գիտակցութիւնից:

Սա է ահա տիրող կարծիքը բոլորի համար: Բոլորն են դործադրում սուբիեկտիւ տարրը, միայն չեն խոստովանում: Այդ են ասում անգամ նրա թշնամիները, նամանաւանդ այժմ, երբ արդէն կրքերը մեղմացել են, և կայ հնարաւորութիւն աւելի հանգիստ, փոքր ինչ անաշուօրէն վերաբերել դէպի իրենց մեծ թշնամուն, մտքի

աննաման մարտիկին, Միխայլովսկուն: Այժմ չկայ բնականօրէն նախկին ատելութիւնը գէպի ուսս սուրբեկտիվիստը: Մարքսիստները շատ գրութիւնները և պնդումները դալիս են բացասելու հէնց իրենց գաւանած օրինակովիզմը, և ակամայ կամ անգիտակցաբար պաշտպանում են այն, ինչ զնում է իրենց ակոյեանը:

Մարքսիստներն ընդունում են, սր դասակարգային իդէօլոգիան: և հոգեբանութիւնը զնում են իրենց գրողը հետազօտութիւնների վրա և այդպէս էլ կերպարանաւորում: Նրանք ներկայանում են պրօլետարների շահերի պաշտպան: Սա արդէն մաքուր տեսակի սուրբեկտիվիզմ է: Նրանք ներկայանում են արդէն որոշ ձեւատումների, տենչերի, ցանկութիւնների և իդէալի կրօզներ, և այդ տեսակէտից էլ ուզում են կազմակերպել հասարակարգը, նորմեր տալ հասարակական յարաբերութիւնների: Ի՞նչ է այս: Ձուտ սուրբեկտիվիզմ, սուրբեկտիվ վերաբերմունք: Սպենսէրն անգամ, ինչպէս և Դարվինը, իրենց գերազանցօրէն յատակ օրինակովիզմով չկարողացան հետևեալ քննադատութիւնից և օրակէցին «բուրժուա-սօցիօլոգներ»:

Այստեղ տեղին է բարձրացնել այն

հարցը, որ զնում է Կարեն. «Տրտեղ որոնել, սակայն, նօրմալ սուրբեկտիվիզմը, եթէ ընդունենք զա գերմանացու կամ Ֆրանսիացու, կաթոլիկի կամ բողոքականի, ֆէօդալի կամ բուրժուայի, բնազանցազէտի կամ պօպետիվիստի, հասարակական գործչի կամ կարխնետային գիտնականի տեսակէտների մէջ»: Ինում է հարցը և որոշապէս և ճիշտ կերպով տալիս իւր պատասխանը. — «պարզապէս հետազօտողի մարդկային անհատականութեան մէջ, ինչպէս այդպիսինի, այսինքն, սղատ մատնանշած պատահական որոշումներից»:<sup>\*)</sup>

Միխայլովսկու սուրբեկտիվիզմի, նրա սօցիօլոգիայի այդ մասի գեֆինիցիան աւելի քան պարզ է: Միխայլովսկու սուրբեկտիվիզմը ունի երեք բնորոշ և էական կողմեր, որոնք կազմում են նրա բովանդակութիւնը, այն է՝ տիէօլոգիան սօցիօլոգիայի մէջ, հնարաւորութեան կատեգորիան սօցիօլոգիայի մէջ և արդարութեան կատեգորիան սօցիօլոգիայի մէջ:

Նրա սօցիօլոգիական սուրբեկտիվիզմի այս երեք կողմերը արդէն ազօտ գծերով և շեշտումներով երևան բերուեցին այս զլխում:

<sup>\*)</sup> «О субъективизмѣ въ социологiи» ст. 130-31.

Մեզ մնում է միայն աւելի մանրամասնօրէն դարգացնել և հիմնաւորել դրան, որով աւելի պարզ, յստակ կերպարանք կստանայ Միխայլովսկու սօցիօլօգիական վարդապետութիւնը:

Բայց նախ քան այդ երեք կողմերէ բնորոշմանը անցնելու, անհրաժեշտ է տալ Միխայլովսկու մի օրիգինալ դրութիւնը. «կանխակալ կարծիքի» էութիւնը, անհրաժեշտ է, որովհետեւ դա կազմում է որոշ չափով նրանց հիմքը, միաժամանակ սուսուրբիեկտիվիստի սօցիօլօգիայի բնորոշ կողմերից մէկը:

Ինչ՞ով է կայանում «կանխակալ կարծիքը»:

2. «ԿԱՆՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ».

Հնարաւոր է արդեօք երևոյթներէ, նամանաւանդ հասարակական կեանքի երևոյթներէ օրիեկտիվ գնահատութիւնը, այնպիսի գնահատութիւն, որպիսին ընդունւում է առհասարակ ընութեան երևոյթների վերաբերմամբ: Դրեւծ հարցը կարելի է նաև այսպէս բանաձևել. — հնարաւոր է արդեօք հրաժարել բնութեան, նամանաւանդ սօցիալական երևոյթների ուսումնասիրութեան միջոցին նրանից, ինչ Միխայլովսկին անւանում է «կանխակալ կարծիք»:

Ահա էական հարցը, և դրանով մենք արդէն մօտենում ենք անմիջօրէն Միխայլովսկու սուրբիեկտիվիզմին:

Բայց ինչ՞ով է կայանում կանխակալ կարծիքը, ի՞նչպէս է դա Միխայլովսկին ըմբռնում, որին նա այնքան խոշոր և որոշիչ տեղ է յատկացնում սօցիալական և պատմական հետադատութիւնների մէջ:

Ռուս սուրբիեկտիվիստ-սօցիօլօգի տեսակետով մարդը չի ներկայանում որպէս մի *tabula rasa*, մի սպիտակ թուղթ, որի վրա

ամեն ինչ հնարաւոր լինէր գրելու: Մարզը բերում է իր հետ որոշ տեսակի պսիխիկան պատրաստութիւն: Նա պսիխիկան դատարկութիւն չէ: Մարզու մէջ կան պսիխիկան բովանդակութեան շատ սաղմեր՝ ժառանգաբար անցած: Այս մի կողմից: Միւս կողմից, մարդուն չի աւած ամեն ինչ միայն անձնական, այլ և ուրիշներէ փորձով: Դա կօլլեկտիվ փորձն է, միեւնոյն ժամանակ դարերի, երկար ժամանակեայ փորձը:

Ահա այդ եղած աւեալներէ, կօլլեկտիվ և անհատական-անձնական, միութիւնը դասաւորելով այս կամ այն ձևով՝ կազմում է Միխայլովսկու ըմբռնած «կանխակալ կարծիքը»: Կանխակալ կարծիքը, այս առումով կազմում է մարդու էութիւնը, նրա եսի և գիտակցութեան անբաժան մասը: Կօլլեկտիվ կամ անձնական փորձերի քանակով և նըրանց այսպիսի թէ այնպիսի կօմբինացիաների որակով է որոշուում մարդկանց բարոյական կազմը: Ահա այս ճանապարհով կազմըւում է մեր պսիխիկան բովանդակութիւնը: Իսկ «հրաժարել մեր եսի էմպիրիկ բովանդակութեան այդ կողմից դա նոյնքան անհնարին է, որքան անհնարին է կամայնականօրէն ջնջել մեր յիշողութեան միջից որևէ իմացութիւն: Այստեղից էլ ահա կազ-

մըւում է կանխակալ կարծիքը»\*) Եւ այդ կանխակալ կարծիքի անտարակուսելի գոյութիւնն է, որ մեզ ասում է՝ չսէտքէ շատ էլ ճառել գերմարդկային անկողմնակալութեան մասին: Ուր կայ այդ կանխակալ կարծիքը, այնտեղ չի կարող լինել նման անկողմնակալ, օրինկտիվ վերաբերմունք: Այդ յատկութիւնը լինելով մարդու էութիւնը, չի կարելի նրանից հրաժարել, ինչպէս առաջ էլ ասացինք: Եւ կարևոր էլ չէ այդ հրաժարումը: Դա հաւասար կլինէր ինքնաժխտման: Կանխակալ կարծիքը արդիւնք է մի շարք ժառանգական յատկութիւնների, միջավայրի մի շարք պայմանների, հասարակական դրութիւնների, սօցիալ-անհատական հոգեբանութեան կազմի, որոնք ստեղծում են տիպիքական հասարակական միութիւններ, խմբակցութիւններ, դասակարգեր: «Ասան ինձ, թէ որ հասարակական միութեանն ես պատկանում, և ես կասեմ քեզ, թէ ինչպէս ես նայում իրերի վրա»: Միխայլովսկու այս խօսքերը շեշտում են կանխակալ կարծիքի գոյութեան վրա:

Ուրեմն, կանխակալ կարծիքի հիմքում գրւած է մի կողմից անձնական, միւս կող-

\*) Мухайловский «пол. соч.» I т. 150 стр.

մից կօլլէկտիվ փորձը՝ պայմանաւորւած սօցիալական կեանքով, որը Միխայլովսկին կոչում է «сочувственный опыт»: Այդ հիմնւած է յատկապէս մարդու վերապրելու կարողութեան և յատկութեան վրա. վերապրելու ուրիշի զգացմունքը, տենչը, կեանքը: «Կարեկցութեան փորձը, ասում է Միխայլովսկին, անձնական փորձի հետ միասին, որոշ կերպով կօմբինացիայի մէջ մտնելով, անցնում է մեր պսիխիական բովանդակութեան մէջ և, ճշմարտութեան և սխալանքի կատեգորիաների շարքում, դնում է նաև դուրեկանի և անդուրեկանի, ցանկալիի և անցանկալիի, բարոյականի և անբարոյականի, արդարութեան և անարդարութեան կատեգորիաները»:<sup>\*</sup>)

Եւ անա այդ պսիխիական բովանդակութիւնը, երկու տեսակի փորձերի, անձնական և կարեկցական, կօմբինացիայից առաջացած այդ բարոյական կազմը ստիպում է մարդուն նայել հասարակական փաստերի վրա որոշ տեսակէտով, կանխակալ կարծիքով՝ նա նայում է երևոյթներէ վրա որոշ իդէալի, արդէն նախորոշւած ըմբռնութեան տեսակէտով:

<sup>\*</sup>) I т. ст. 150.

Այդ կանխակալ կարծիքը, Միխայլովսկու ըմբռնողութեամբ և պնդումով, գոյութիւն ունի մինչև իսկ բնագէտի մօտ, բնութեան երևոյթների հետազոտութեան միջոցին, որոնց վերաբերմամբ բնախոյզը շատ աւելի հնարաւորութիւն ունի անկողմնակալ, օրինակով լինել, քան հասարակագէտը՝ սօցիալական երևոյթների: Եւ վերևի շեշտւած «կանխակալ կարծիքը տարբերում է բնագէտի կանխակալ կարծիքից միայն նրանով, որ դրանում կարևոր դեր է խաղում բարոյական տարրը: Ինչպէս երկու միկրօսկօպիստներ, տարբեր թէօրիսմներ ունեցող, տեսնում են այն, ինչ իւրաքանչիւրը որոնում է, այնպէս էլ երկու սօցիօլօգներ, տարբեր տեսակէտներ ունեցող, տեսնում են այն, ինչ որտեսնում են»:<sup>\*</sup>) Այստեղ երկու բնագէտներն էլ առաջնորդւում են իրենց կանխորոշւած տեսակէտով, իրենց որոշ թէօրիայի տեսակէտով, Միխայլովսկու տերմինօլօգիայով արտայայտած «կանխակալ կարծիքի» տեսակէտով: Եւ այդպիսիները երբեմն տեսնում են այն, ինչ իրօք չկայ, կամ այն, ինչ կուզենային, որ լինի: Սա մի խիստ հոգեբանական մօմենտ է, անհատա-

<sup>\*</sup>) ibid ст. 158.

կան-հոգեբանական գիծ:

Նւ եթէ կանխակալ կարծիքի գոյութիւնը անտարակուսելի է բնագէտի մօտ, բնագիտական հետազօտութիւնների մէջ ուր մենք գործ ունենք բնութեան երևոյթների հետ և աւելի քիչ կապած են մեզ հետ, հետևապէս աւելի քան պարզ է և հասկանալի, անգամ անխուսափելի նրա ներկայութիւնը սօցիօլօգի մօտ, պատմական և սօցիալական երևոյթների հետազօտութեան մէջ: Ասում ենք անխուսափելի, որովհետև այստեղ գիտական շահից, զուտ իմացական տարրից զատ կայ նոյնպէս բարոյական տարրը: Այստեղ մենք գործ ունենք շատ աւելի բարդ երևոյթների, սօցիալական բազմազան երևոյթների, փաստերի, բազմապիսի շահերի հետ, մարդկային, անհատական, ցեղական, կրօնական, սօցիալական, իրաւական, բարոյական ևն: Սա մարդկային այլազան գործողութիւնների մի բարդ հիւսւածք է, մի հարուստ աշխարհ, անհատական և կօլլեկտիվ ցանկութիւնների, ձգտումների, կամեցողութիւնների, սօցիալական իդէալի մի հիւսւածք: Սա շատ արժէքաւոր տարր է: Ասում ենք արժէքաւոր, որովհետև աւանց դրան սօցիօլօգը կամ պատմաբանը չի կարող անգամ հասկանալ, ըմբռնել հա-

սարակական-պատմական երևոյթները, մասնաւոր դնահատել և սխտեմի ենթադրել: Նա ունի սպասելիքներ, ակնկալութիւններ, նա ունի իդէալ, որի համար նրա սիրտը բարախում է. նա ապրում է այդ փաստերի հետ, զգում, տանջւում: «Հասարակական կեանքի երևոյթների սահմանում դիտողութիւնը անխուսափելիօրէն այն աստիճան կապած է բարոյական գնահատման հետ, որ «չտարւել քաղաքական փաստերով և չգնահատել նրանց արժէքը»—կարելի է միայն, չհասկանալով նրանց նշանակութիւնը: Բայց բարոյական արժէքաւորումը արդիւնք է մտքի սուբիեկտիվ սրօցեասի»:<sup>\*)</sup> Այդ չկայ բնագէտի մօտ: Բնութեան հետազօտութիւնների մէջ կայ միայն իմացութեան տարրը: Բնագէտի մօտ գլխաւորապէս գեր է խաղում գիտութեան, հետևապէս ճշմարտութեան շահը, իսկ հասարակագէտի մօտ դրա հետ միասին նաև արդարութեան մօրալական գիտակցութիւնը, բարոյական գնահատումը՝ իդէալի տեսակէտով:

«Ահա երկու դիրք. մէկը խօսում է բնութեան երևոյթների մասին, միւրը՝ հասարակական կեանքի երևոյթների մասին.

\*) ibid et. 87.

Մէկը զբւած է խաղաղ, առանց կրքի և ան-  
 աչառօրէն դասաւորուում է մի փաստը միւս  
 փաստի վրա և անարգել հասնում մինչև  
 ընդհանրացումը: Միւս զրքում այդպէս չէ:  
 Դուք տեսնում էք, որ զրոյը ազահարար  
 կլանում է իրեն զբաղեցնող զգայութիւն-  
 ներով: Դուք կարող էք ամեն մի տողից  
 դատել զրոյ ձեռքի պուլսի զարկի մասին.  
 նա սիրում է, ատում, ծիծաղում և լալիս:  
 Դուք կարող էք անգամ տեսնել բարկու-  
 թեան և արտասուքների հետքերը անշունչ  
 թղթի վրա»:<sup>\*</sup>)

Սուբիեկտիվ տարրի այսպիսի ըմբռ-  
 նումը ոչ միայն անխուսափելի է սօցիալա-  
 կան երևոյթների հետազօտութեան մէջ, այլ  
 և անհրաժեշտ, կարևոր. զրանից երբէք չը-  
 պէտքէ խուսափել, այլ, ընդհակառակը,  
 պահպանել և խորացնել: Միխայլովսկու այդ  
 զրութիւնը, գոնէ մեզ համար, շատ գնահա-  
 տելի է թանկագին:

Եթէ այդ այդպէս է, հիթէ կանխակալ  
 կարծիքը անպայմանօրէն կայ և անհրաժեշտ  
 է գիտութեան, նամանաւանդ հասարակագի-  
 տութեան համար, եթէ, ասում ենք, այս  
 զրութիւնը ճիշտ է, այն ժամանակ հետևո-

<sup>\*</sup>) ibid et. 80.

դական և տրամաբանական մտածողութիւնը  
 պահանջում է ճիշտ ճանաչել նաև սուբիեկ-  
 տիվ մեթօդի անհրաժեշտութիւնը ու կա-  
 բերութիւնը սօցիօլօգիայի մէջ: Դրանք  
 այնքան իրար հետ սերտօրէն կապւած են,  
 որ անհնարին է իրարից բաժանել: Այդ հո-  
 դի վրա շատ են պայքարել ոուս մարքսիստ-  
 ները, առհասարակ օրիեկտիվ մեթօդի կող-  
 մակիցները ոուս սուբիեկտիվիստ-սօցիօլօգ  
 Միխայլովսկու հետ, բայց յաղթանակը, ինչ-  
 պէս նկատել ենք, մնաց վերջինիս կողմը:  
 Մարքսիստները սիրում են յաճախ խօսել  
 դասակարգային գիտակցութեան, դասակար-  
 գային տեսակէտի մասին, առանց նկատե-  
 լու, որ զրանով հակասում են իրենց օրիեկ-  
 տիվիզմին և պաշտպանում են սուբիեկտի-  
 վիզմը, սուբիեկտիվ տարրի ներկայութիւնը  
 սօցիօլօգիայի մէջ: Սուբիեկտիվ տարրը,  
 կանխակալ կարծիքը, այսինքն, կօլլեկտիվ  
 և անձնական վորձի որոշ ձևի կօմբինացիան  
 կայ և նա դնում է իր զրօշմը մեր հետա-  
 զօտութեան վրա. զրանով են ղեկավարում  
 բոլորը՝ գիտակցաբար թէ անգիտակցա-  
 բար: Բայց «կանխակալ կարծիքը և սու-  
 բիեկտիվ տարրը սօցիօլօգիայի մէջ պէտք  
 է հասկանալ ոչ թէ որպէս անհատական-կա-  
 մայական սուբիեկտիվիզմ, այլ մարդակեն-

արոն, անարօպօցնարիկ սուբիեկտի-  
վիզմ»\*) Իսկ թէ ինչպէս է ըմբռնում Մի-  
խայլովսկին մարդակենտրոն անարօպօցնարիկ  
սուբիեկտիվիզմը, այդ մենք իսկոյն կտեսնենք:  
Այժմ դառնում ենք հէնց այդ հարցին տե-  
լէօլօգիզմը սօցիօլօգիայի մէջ:

— օրօգրօր —

\*) Лункевичъ «Михайловскій» ст. 7.

2. ՏԵԼԷՕԼՕԳԻԶՄԸ ՍՕՑԻՕԼՕԳԻԱՅԻ ՄԷՋ.

Տելէօլօգիզմը սօցիօլօգիայի մէջ կազ-  
մում է Միխայլովսկու սուբիեկտիվիզմի բո-  
վանդակութեան էական, բնորոշիչ յատկու-  
թիւններէից մէկը: Այդ արդէն գիտենք:

Իայց ինչո՞ւնն է կայանում տելէօլօ-  
գիզմի էութիւնը առհասարակ և Միխայլով-  
սկու ըմբռնած տելէօլօգիզմը սօցիօլօգիայի  
մէջ մասնաւորապէս: Մեզ համար կարևորը  
երկրորդն է, որի վրա մի փոքր երկար  
կանգ կառնենք:

Մեր առաջ կանգնած է Միխայլովսկու  
տրիադը, մտքի զարգացման երեք Փազերը,  
մի տրիադ, որի զէմ այնքան պայքար է  
մղւել:

Միխայլովսկին խիստ քննադատու-  
թեան ենթարկելով Կօնտի տրիադը, զար-  
գացման երեք Փազերը, տալիս է իր սե-  
փական տրիադը:

Յայանի սօցիոտիվիստ-սօցիօլօգը, Կօն-  
տը, ինչպէս յայանի է, բաժանում է մարդ-

կային բովանդակ պատմութիւնը, մաքի  
 զարգացումն առհասարակ, երեք մեծ ֆազե-  
 րի, երեք շրջանների—աստուածաբանական, բնա-  
 զանցական եւ դրական: Առաջին ֆազում մար-  
 դիկ չունէին որեւէ հասկացողութիւն օրի-  
 նաւորութեան և երևոյթների պատճառա-  
 կան կապակցութեան մասին: Նրանք տես-  
 նում և ճանաչում էին գերբնական էութիւն-  
 ների մատը երևոյթների մէջ: Աստուածա-  
 բանական ըմբռնումն ընդունում է մետա-  
 ֆիզիկ իմացութեան կարելիութիւնը: Նա  
 ուղղում է իր հետազօտութիւնը իրերի ներ-  
 քին էութիւնը, վերջնական պատճառին: Մարդիկ սկզբում առարկաներին վերագրում  
 էին հոգի և միենոյն ժամանակ ընդունում,  
 որ դրանք ազդեցութիւն ունեն մեր ճակա-  
 տագրի վրա: Դա ֆետիշիզմի զարգացումն  
 է: Բնազանցականը անցողական ֆազն է:  
 Այստեղ ընդունում է երևոյթների պատ-  
 ճառական կապը դրական կամ պօզիտիվ սու-  
 տիճանի վրա, ուրիշ լսօսքով, պօզիտիվ փի-  
 լիսօփայտութեան շրջանում, մի կողմ է թող-  
 նում գերբնական ոյժերի գործունէութիւնը,  
 ինչպէս և մետաֆիզիքական էութիւնները,  
 և մարդն իր ուշադրութիւնը ուղղում է հէնց  
 երևոյթների, փաստերի ըէալ յարաբերու-  
 թիւններին, նրանց կապակցութեան՝ ժա-

մանակի և տարածութեան մէջ:

Բացասելով Կօնտի այն թէօրիան, զար-  
 գացման ֆազերի նրա բաժանումը, Միխայ-  
 լովսկին առաջադրում է իր տրիազը, իբ-  
 բաժանումը:

Միխայլովսկին էլ ընդունում է երեք  
 խոշոր ֆազեր, պերիօդներ՝ օրիեկտիվ-մար-  
 դակենտրոն, արտակենտրոն և սուբիեկտիվ-  
 մարդակենտրոն:

Առաջին, այսինքն, օրիեկտիվ-անտրօ-  
 պօցենտրիկ (օրիեկտիվ-մարդակենտրոն).  
 Ֆազում մարդը ճանաչում է իրեն բնութեան  
 միակ, իրական և բացարձակ կենտրոնը:  
 Երկրորդ զարգացման էքսցենտրիկ (արտա-  
 կենտրոն) ֆազում մարդը դնում է իր վրա  
 վերացական պարտականութիւններ, կատե-  
 գօրիաններ, դրանց իրենից աւելի բարձր  
 դասելով. այժմ արդէն կենտրոնը այլևս  
 մարդը չէ, այլ այդ վերացական կատեգօ-  
 րիաները: Իսկ երրորդ, սուբիեկտիվ-անտրօ-  
 պօցենտրիկ (սուբիեկտիվ-մարդակենտրոն)  
 ֆազում մարդը նորէն ինքն իրեն է դնում  
 իրեն մարդկային հասարակութեան, ինչպէս  
 և ընդգրկող տիեզերքի կենտրոնը:

Առաջին ֆազում իշխում է օրիեկտիվ,  
 բացարձակ տելէօլօգիան, և որի տեսական  
 ֆօրմուլան է. «ամեն ինչ ստեղծւած է մար-

դու համար», իսկ երկրորդ ֆազում իշխում է անտի-տելեօլոգիան, որի ֆորմուլան է՝ «մարդը արդարութեան, ճշմարտութեան, հարստութեան համար կամ, որ նոյնն է, արդարութիւնը արդարութեան համար, ճշմարտութիւնը ճշմարտութեան համար, հարստութիւնը հարստութեան համար»: Այս երկու ֆորմուլաներն իրար վերաբերմամբ տրամազօրէն հակադիր են: Այս տեսակէտից բնորոշիչը և էականը երրորդ ֆազն է, սուբիեկտիվ-անտրօպօցենտրիկ պերիօդը, ուր ընդունում է անտի-տելեօլոգիզմ բնութեան վերաբերմամբ, իսկ տելեօլոգիզմ մարդու, մարդկային հասարակութեան վերաբերմամբ:

Ռուս սուբիեկտիվիստ-սօցիօլոգը, ուրեմն, մերժում է առաջին երկու ֆազը և ընդունում երրորդը: Նա չի ընդունում բնութեան մէջ նպատակներ, բնութիւնը չունի տելեօլոգիա: «Հիմնական և ոչնչով չվերացնող տարբերութիւնը մարդու դէպի մարդը ունեցած յարաբերութեան և մարդու յարաբերութեան միջև՝ դէպի մնացած բնութիւնը կայանում է ամենից առաջ նրանում, որ առաջին դէպքում մենք գործ ունենք ոչ թէ հասարակ երևոյթների հետ, այլ այնպիսի երևոյթների, որոնք ձգտում են

դէպի որոշ նպատակ, այն ինչ երկրորդ դէպքում այդ նպատակը մարդու համար գոյութիւն չունի»:<sup>\*)</sup> «Եւ հէնց զարգացման էքսցենտրիկ, արտակենտրոն պերիօդի մարդկանց սխալը կայանում է նրանում, որ նրանք ձգտում են հասկանալ, ըմբռնել բնութեան նպատակները, և այսպիսի դէպքում գործադրում են սուբ. մեթօդը, մինչդեռ նրանք անգիտանում էին մարդու նպատակները և գործադրում էին դրա համար էլ օրիեկտիվ մեթօդը հասարակական գիտութիւնների մէջ»:<sup>\*\*)</sup>

Եւ Միխայլովսկու այս պնդումը, այս դրութիւնն ունի զերազանցօրէն գիտական հիմք. նոյն այդ միաքը պաշտպանում են շատ խոշոր մտածողներ: Քննադատական փիլիսօփայութեան հոշակաւոր ներկայացուցիչ Ա. Ռիլը բացարձակ կերպով մերժում է տելեօլոգիզմը բնութեան մէջ: «Կայ գիտութիւն ձևերի մասին բնութեան մէջ, բայց չի կարող լինել գիտութիւն նպատակների մասին բնութեան մէջ: Տելեօլոգիան պատկանում է ոչ թէ բնութեան ճանաչողութեան, այլ նրա գնահատման... գիտու-

\*) Михайловский I т. ст. 145.

\*\* ) ibid ст. 145.

թիւնն ինքն, որպէս ամբողջութիւն, կազմակերպուում է արժէքի տեսակէտով, զիտութիւնն ինքն մէկն է արժէքներին»\*) «Բնութեան վերաբերմամբ մեր բոլոր նպատակները միահաւասար լաւ են, բոլոր մեր դործերը հաւասարաչափ բարի, բնութեան մէջ բոլոր առարկաները մեզ համար ունեն միահաւասար ներքին արժանիքը, քանի որ մենք բնութեան վերաբերմամբ չունենք բարոյական վերաբերմունք... Այստեղից, կարծում եմ, պարզուում է, թէ ինչու փիլիսոփայութեան յարաբերութիւնը դէպի հոգեկան և հասարակական կեանքի աշխարհը, և հետեւապէս, դէպի պատմութեան աշխարհը, պէտք է տարբեր լինի, քան թէ դէպի մատերիալ գոյութիւնը, դէպի բնութեան աշխարհը»:\*\*)

Մի այլ, ոչ պակաս արժէքաւոր, տեսակէտից էլ մերժում է Միխայլովսկին առաջին, օրինակով-անարօպոցինարիկ, և թէ երկրորդ, էքսցենտրիկ ֆազերը: Առաջին ֆազը փաստապէս ուլտրա-ինդիվիդուալիս-

տական մի պերիօդ է («ամեն ինչ մարդու համար ստեղծւած»), իսկ երկրորդ ֆազը հակա-ինդիվիդուալիստական մի պերիօդ է (մարդը հարստութեան արդարութեան համար): Իսկ նրա սօցիօլօգիական-սուբիեկտիվիստական ընդգրկող աշխարհայեցողութեան տեսակէտով ընդունելի չէ ոչ առաջինը և ոչ էլ երկրորդը: Նա կանգնած է սուբիեկտիվ-անարօպոցինարիդմի, սուբիեկտիվ տեղէօլօգիայի տեսակէտի վրա:

Սուբիեկտիվիզմն արդէն ինքն ըստ-ինքեան ապացոյց է տեղէօլօգիայի գոյութեանը սօցիօլօգիայի մէջ: Եւ հէնց այդպէս էլ հասկանում է Միխայլովսկին, ինչպէս և առհասարակ ուսական սօցիօլօգիական-սուբիեկտիվիստական շիօլան: Սուբիեկտիվ տեղէօլօգիան նրանք ըմբռնում են որպէս մի ուսմունք մարդկային նպատակների մասին և ոչ թէ բնութեան նպատակներին: Նրանց ըմբռնածը, ուրիշ խօսքով, մարդու տեղէօլօգիան է և ոչ թէ որևէ գերբնական ոյժի, Բանականութեան ևն: «Օրինելիւ տարբեր բարոյագիտութեան, քաղաքականութեան, սօցիօլօգիայի մէջ սահմանափակում է անհատի գործունէութեամբ, հասարակական ձևերով, նկատում է Լաւրով: Որպէս զի հասկանալ այդ, պէտք է ունենալ և զիտել

\*) A. Riehl, Zur Einf. in. d. Phil. d. Gegenwart. S. 185

\*\*) Карфевъ «истор.-фил. и соц. этюды» ст. 88.

նպատակներ, որոնց համար անհատի գործու-  
նէութիւնները կաղմուս են լռի միջոց. նպա-  
տակներ, որոնք մտնում են հասարակական  
ձևերի մէջ և առաջ բերում պատմական  
զէպք: Բայց ի՞նչ է նպատակը: Դա ցանկա-  
լին է, դուրեկանը, այն, ինչ պիտի լինի:  
Բոլոր այդ կատեգորիաները գուտ սուրբիակ-  
տիվ են»: Մարդն ըստ իր էութեան ներ-  
կայանում է սրպէս մի տենչացող, ձգտող,  
կամեցող և նպատակադրող արարած: Նա  
երևան դալով հասարակական կեանքի մէջ,  
դնում է իր համար որոշ նպատակներ և  
իր գործունէութեան ամբողջ ընթացքում  
հետևում է դրանց: Այդպէս է նաև պատմա-  
կան կեանքում: Մարդն արժէքներ է ստեղ-  
ծում, գնահատում, վերագնահատման են-  
թարկում մարդկանց բովանդակ գործունէ-  
ութիւնը, յարաբերութիւնները: Եւ այդ բո-  
լորը նա անում է իր հասարակական նպա-  
տակի տեսակէտից, իր վախճանական իդէ-  
ալի պրիզմայով: Այդ նպատակը, այդ վախ-  
ճանական իդէալը կայ, ոչ ոք չի կարող ժըլ-  
տել դա: Եւ այդ իդէալի համար ամեն մէ-  
կի սիջար բարախում է: Առանց այդ իդէա-  
լի ուղղակի անհնարին կլինէր հասարակա-  
կան երևոյթների, պատմական եղելութիւն-  
ների և փաստերի ճշտագրիտ հասկացողու-

թիւնը, նրանց ըմբռնումը: Մարդու բոլոր  
դիտողութիւնները այդտեղ վերին աստի-  
ճանի սերտ կերպով կապած են բարոյա-  
կան արժէքների հետ և մարդը, հետևապէս,  
չի կարող ինգիֆերենտ, անտարբեր մնալ  
հասարակական-քաղաքական զէպքերի աշ-  
խարհում, լինել լուռ հանգիստտես և «օրի-  
եկտիվ» դիտող: Այս անկարելի է: Մարդն,  
ընդհակառակը, տարւում, որևորւում է հա-  
սարակական-քաղաքական փաստերով, նա  
դատում է և դատում, լալիս է և խնդում,  
տանջում է և յուզում: Ահա այս տարբերն  
են, որ հնարաւոր են դարձնում սօցիալ-  
քաղաքական շարժումների ըմբռնումը: Մար-  
դիկ յաճախ կրկնում են և յանձնարարում  
ուրիշներին այն խիստ բանալ ֆրազան «չը-  
արտասուել և չծիծաղել, այլ հասկանալ»:  
Սա, յիշաւի, մի արտօրդ է հասարակական-  
քաղաքական կեանքում, սօցիոլոգիայի մէջ,  
ուր տիրականօրէն իշխողն է տելիօլոգիա-  
կան տեսակէտը: Ասում ենք, դա անհեթեթ  
միտք է, որովհետև հէնց դրանով մեզ «յանձ-  
նարարում են չհասկանալ», սրամիտ կեր-  
պով նկատում է Միխայլովսկին: Բի աւելի,  
ոչ պակաս, այլ «չհասկանալ»: Զծիծաղել  
այն բանի վրա, ինչ ծիծաղելի է, կնշանակէ  
ուղղակի չհասկանալ. չարտասուել այն, ինչ

արտասուելի է, չկարեկցել այն, ինչ կարեկցելի է, նշանակում է չհասկանալ, չմբռնել: «Մեր ամեն մի վարմունքը, որ շօշափում է հասարակութիւնը, սօցիալական փաստ է: Ապրել հասարակութեան մէջ և հասարակական բնոյթի գործ չկատարել, դա համահաւասար է սօցիալական կեանքի էութեան չըմբռման: Ընդհակառակը, տւեալ հասարակական գրութեան ըմբռնումը անմիտ է առանց սուբիեկտիվ գնահատման»\*), նկատում է ոռւս պատմաբան-սօցիոլոգը, Կարև:

Անա ինչպէս պէտք է հասկանալ Միխայլովսկու ըմբռնած սուբիեկտիվ տելէօլոգիան, որը համարում է առհասարակ նրա ինդիվիդուալիզմի թագն ու պսակը: Միխայլովսկու, ինչպէս ոռւսական դպրոցի, հայեցակէտով սօցիոլոգիայի, էթիկայի, էսթետիկայի, քաղաքականութեան շրջանում, որ մենք գործ ունենք գլխաւորապէս արժէքների և գնահատումների հետ, տիրում է տելէօլոգիական տարրը: Այստեղ խիստ սահմանափակում է օրիեկտիվ տարրը: Նպտակացրող սուբիեկտով: Այս գիտական սիստեմների մէջ տիրում է ոչ միայն այն, ինչ որ կայ, ինչ իրական է, այլ և այն,

\*) «Историко-фил. в соц. этюд» ст. :27-

ինչ պէտք է լինի, դա Հրամայականն է, Գերադոյնը, որը հանդէս է մարդու հոգեկան գործունէութեան վրա: «Արժէքներից են: առում, զարգանում և արժէքների վրա հանդէսում մեր հոգեկան կեանքը», նկատում է Ռիլ: Իսկ չկայ արժէք առանց տելէօլոգիայի, սուբիեկտիվ տելէօլոգիայի: Մեր հոգեկան կեանքի բովանդակ զարգացումը հիմնւած է տելէօլոգիական սկզբունքի վրա, իսկ առանց այդ սկզբունքի կամ «առանց այդ արժէքների մեր կեանքի նաւարկութիւնը, յիրաւի, առանց կողմնացոյցի է» (Ռիլ):

Ամեն մի հասարակական գրուպա, խմբակցութիւն, կազմակերպութիւն, ինչպէս և անհատ, ընդգրկում է այդպիսի արժէքներ, սօցիալական թէ անհատական բնոյթ կրող, իսկ այդ կազմակերպութիւններն արդէն ինքնին տելէօլոգիական միութիւններ են: Այդ երևոյթիւններն մենք ականատես ենք ինչպէս զարգացման ամենապրիմիտիվ աստիճանի վրա կանգնած մարդկային հասարակութեան մէջ, այնպէս և XX քաղաքակիրթ դարի շէմքում կանգնած հասարակութեան մէջ: Մի տեղ պահաս գիտակցական, միւս տեղ աւելի բարձր գիտակցական: Բայց երևոյթը էապէս նոյնն

է, և կեանքը միևնոյն խնդիրն ունի— նապատակ: Այդ բոլոր միութիւններն ընդդէմ կու՛մ են որոշ նպատակ և երևան գալով՝ հասարակական-քաղաքական կեանքի մէջ, աշխատում են իրագործել իրենց ընդհանուր նպատակը: Հասարակութիւնն ինքն ևս այդպիսին է, մի կաղմակերպութիւն որոշ նպատակի համար:

Այդպիսի մի կաղմակերպութիւն է նաև սօց. գիմոսիցատիան: Նրա հիմքում ևս զըրւած է տելէօլօգիայի սկզբունքը, թէև նրա թէօրեալիկները համարում են իրենց «իրերի բնական ընթացքի» հետևողներ: Նա, որպէս կաղմակերպութիւն, ունի իր մենիմալ և մաքսիմալ ծրագիրը, իր մօտաւոր և հեռաւոր նպատակը: Եւ ղնելով այդ պահանջները, նա պայքար է մղում ամենուրեք: Նա չի մնում ինդիֆերենտ, հեռից անմասդիտողի գերի մէջ և ձեռքերը ծալած սպասում «իրերի բնական-տարերային ֆաթալ ընթացքին»: Նա պայքարում է. «պրօլետարներ բոլոր երկրների՝ միացէք», կոչում է նա: Ի՞նչ են ներկայացնում այս բոլորը. այն՝ այստեղ անտարակուսելիօրէն գոյութիւն ունի տելէօլօգիական տարրը, այն էլ գերիշխող ձևով, բայց ոչ օրիէկտիվ, այլ սուբիէկտիվ տելէօլօգիայի: Ուրեմն,

արանք էլ կանգնած են փաստապէս այն տեսակէտի վրա, ինչ տեսակէտի վրա կանգնած է մեր փիլիսօփա սօցիօլօգը կամ առհասարակ ուսական սօցիօլօգիական շկօլան, որոնց մէջ այնքան պայքար է մղւել 90-ական թւականներին:

Աւելին կասենք: Տելէօլօգիական տարրը սօցիօլօգիայի մէջ ոչ միայն անխուսափելի է, այլ և խիստ ցանկալի: Սա Միխայլովսկու մի կարևոր գրութիւնն է: Հետևապէս երբէք վախի հարց չի կարող լինել, ոչ էլ տելէօլօգիական տեսակէտից փախչելու խնդիր:

Անգամ Դարվինը և Սպենսերը, որոնք իրաւացիօրէն պարծենում էին իրենց գերմարդկային անկողմնակալութիւնով և աշխատում էին միանգամայն օրիէկտիվ լինել, ազատ որևէ սուբիէկտիվ տարրից և զըրդուններից, բայց նրանք էլի գատուեցին մարդկանց կողմից, որպէս որոշ նպատակների կրողներ, որոշ շահերի պաշտպաններ: Սպենսերին յայտարարեցին «բուրժուա-սօցիօլօգ», իսկ Դարվինին «արխատկրատական մտածող»: Դեռ ավելին կարելի է ասել տելէօլօգիայի տեսակէտից: Ըստ դարվինեան թէօրիայի՝ տելէօլօգիզմը ճանաչում է է մինչև իսկ կենդանական աշխարհում:

Նրա ընտրութեան և գոյութեան կուր թէ-  
օրիան, որպէս մի ուսմունք նպատակայար-  
մար ձևերի ծագման և զարգացման մասին,  
արդէն իրենից ներկայացնում է տելէօլօ-  
գիական բնոյթ կրող մի հայեցողութիւն:

Եթէ այդպէս է բնական աշխարհում,  
աւելի քան պարզ և հասկանալի, մինչև իսկ  
անխուսափելի է հասարակական կեանքի աշ-  
խարհում, մարդկային հասարակութեան մէջ,  
ուր մեր ամեն մի գործողութիւնը, ամեն մի  
վարմունքը կապւած է բարոյական, էսթէթի-  
քական, արդարութեան և գնահատման հետ:  
Մենք բնական ընթացքով մօտենում ենք  
Միխայլովսկու սուբիեկտիվիզմի միւս դրու-  
թեանը, արդարութեան և անհրաժեշտու-  
թեան կառեգօրիաներին, մի դրութեան, որը  
սերտօրէն և էպպէս կապւած է շօշափւած  
դրութիւնների հետ, այնպէս է կապւած, որ  
մինչև իսկ անհրաժեշտ է բաժանել: Այդ բո-  
լոր մտքերը կազմում են մի ներգաշնակ  
ամբողջութիւն՝ ըզխած մի ազբիւրից:

3. ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՂՐԱԺԵՏՏՈՒԹԱՆ  
ԿԱՏԵՂՕՐԻԱՆ

Արդէն գիտենք, որ սուս սուբիեկտի-  
վիստ-սօցիօլօգը համարում է «կանխակալ  
կարծիքի» գոյութիւնը անտարակուսելի առ-  
հասարակ և հասարակական երևոյթների մէջ  
մասնաւորապէս: Այդ կանխակալ կարծիքը,  
որով մարդ զեկավարւում է առհասարակ,  
«հասարակական երևոյթների աշխարհում,  
բարդանում է մի նոր սարբով—բարոյական  
տարբով: Հէնց դրա համար էլ Օգիւստ Կօնտը  
միանգամայն իրաւացի է, աւելացնում է  
Միխայլովսկին, երբ նա պնդում է իր պօ-  
զետիվ փիլիսօփայութեան կուրսի մէջ, որ  
«նրանք միայն կարող են սօցիօլօգիայով յա-  
ջողութեամբ գրազեկ, որոնց բարոյական  
մակարդակը բաւականին բարձր է»:\*) Եւ  
սօցիօլօգի կանխակալ կարծիքը «տարբեր-

\*) Михайловичі. I т. 150 ст.

ւում է բնագետի կանխակալ կարծիքից հենց միայն նրանով, որ առաջինի մօտ բարոյական տարրը կատարում է խիստ կարեւոր դեր»։\*)

Այս խօսքերով ընդգծւում է արդէն այդ նոր դրութիւնը, արդարութեան և բարոյականի կատեգորիան, որը, ինչպէս էլի նկատել ենք, կազմում է Միխայլովսկու սուբիեկտիվիզմի յատկանշական գծերից։

Բայց անհրաժեշտ ենք համարում նորէն շեշտել, թիւրիմացութեան տեղիք չտալու համար, որ սուբիեկտիվիզմը — մեր խօսքը, ինչպէս, Միխայլովսկու սուբիեկտիվիզմի մասին է — չէ բացասում բոլորովին գիտական հիմնաւորման հնարաւորութիւնը։ Ոչ այդ սկզբունքը շեշտում է միայն գնահատումը, քննադատական իդէալը։ Սօցիօլօգիայի մէջ կայ անպայմանօրէն օբիեկտիվ կողմը, տարրը, ինչպէս և անհրաժեշտութիւնը, բայց ոչ միայն և բացառապէս դա։ Սօցիօլօգիայի մէջ ընդունւում են դրանց հետ նաև արդարութեան և հնարաւորութեան կատեգորիաները։ Սօցիօլօգը, պատմաբանը չէ ուսումնասիրում միայն այն, ինչ կայ, ինչ անհրաժեշտօրէն

\*) ibid. 158. et.

լինելու է, ինչ sein müss, այլ և այն, ինչ պէտք է լինի արդարութեան և բարոյականի տեսակէտից, այն, ինչ մարդն է ցանկանում որ լինի, դա Sollen է, սօցիալական Sollen-ը։ Եւ այդ սօցիալական Հրամայականը, Sollen-ը արդասիք է քննադատութեան, պատմական, հասարական ըէալ, տեւալ փաստերի, մարդկանց յարաբերութիւնների քննադատութեան, հետևապէս գնահատման։ Նա գնահատում, արժէքաւորում է արդարութեան, բարոյականի կատեգորիայի տեսակէտով։ Եւ այդ գնահատման գիծը շատ խորն է մարդու մէջ։ Իր և ուրիշների գործողութիւնների «բարոյական գնահատումը, նկատում է Միխայլովսկի, այնպէս խորունկ պահանջ ու կարիք է մարդու համար, որ նա հարկադրւած է այդ գնահատմանը ենթարկել մինչև իսկ շրջապատող անկենդան բնութիւնը»։\*)

Այդպիսին է անա մարդը։ «Անգամ ճանաչելով այս կամ այն երևոյթի երկաթեայ անհրաժեշտութիւնը, նա էլի ամեն մի մասնակի դէպքում իր էութեան ամբողջ ոյժով կանգնում է այդ անհրաժեշտութեան դէմ, պաշտպանում է իր ազատութիւնը

\*) ibid. IV T. et. 60.

մինչև արեան վերջին կաթիլը, մինչև վերջին շունչը: Այսպիսին է, օրինակ, մահւան երևոյթը: Կատարելապէս զիտակցելով այդ անհրաժեշտութիւնը և նրա սարսափելի օրինելով պարտադրականութիւնն առհասարակ, ինչպէս և իր համար որոշ մօմենտում, բայց մարդը այդ մօմենտն ընդունում է միայն այն ժամանակ, երբ արդէն մահը վրա է հասել և նրան ննում է միայն ճանաչել այն»):\* Եթէ այդպէս է մարդու գիրքը մահւան վերաբերմամբ, հասկանալի է, կարծու՞մ ենք, նրա գիրքը մարդկային հասարակութեան երևոյթներին ու յարեցութիւններին անհրաժեշտութեան հանդէպ:

Սրանից պարզ է, որ հասարակագէտը, ընդգէտը չի բաւականանում միայն եղածով տւեալ փաստերով և նրանց կօմբինացիաներով: Նա ուզում է նոր ձև տալ նրանց, նոր ընթացք և գունաւորում: Նա յիտ է մղում, ինչ բարոյական և ցանկալի չէ, ինչ զուրեկան և արգար չէ, իսկ առաջ է մղում այն, ինչ, ընդհակառակը, բարոյական է և ցանկալի, զուրեկան է և արգար:

Եւ Միխայլովսկին իրաւացիօրէն պահանջում է արգարութեան և բարոյականի

\*) *ibid.* *op.* 60.

կատեգորիաների կիրառումը հասարակագիտութեան մէջ: Այդ նոյն պահանջը գնում է նաև Գերցեն, Չերնիշևսկի, Լաւրով, Չերնով, Լուկինիչ ևն: Այսպիսով Միխայլովսկու և առհասարակ սուսայ սօցիօլօգիական գալրոցի սուրբեկտիվիզմը ու ինտիլիգուսիզմը ստանում է էթիքական-սօցիօլօգիական բնատրուութիւն: Սօցիօլօգիան անբաժան է էթիկայից, բարոյագիտութիւնից: Եւ եթէ բաժանւի, դա կլինի բռնագրօսիկ: Ահա այդ գալրոցի կարեօր թէզիսներին մէկը: «Ճշմարտութիւնը և արգարութիւնը տւեալ և վերջնական չեն: Ճշմարտութիւնը կարող է մշակւել, իսկ արգարութիւնը կարող է մարմնանալ զործի մէջ միմիայն քննադատական մտքի աշխատանքի ճանապարհով: Դրա համար էլ սօցիօլօգիան էթիկայից բաժան մի գիտութիւն չէ, ստում է Լաւրով: Քննադատութիւնը աւելի քան անհրաժեշտ է: Քննադատութիւնից զուրս չկայ և՛ ճշմարտութիւն, և՛ արգարութիւն, և՛ հասարակական կեանք, և՛ պրօգրէսս»):\* Չերնով շատ մեծ արժէք է տալիս Լասսալի հետեւալ բացականչութեանը՝ «Ինչ է գիտութիւնը, եթէ նա չի տալիս մտքին անհրաժեշտ է-

\*) «Формула прогресса М-каро». *op.* 45.

Թիքական ուղղութիւն: Եւ ի՞նչ է էթիկան, եթէ նա արդիւնք չէ ճշմարիտ իմացութեան»: Բերդակն անդամ, Միխայլովսկու ամենախիստ քննդատներից մէկը, թէև ոչ այքան տեղին — գտնում է Միխայլովսկու այդ դրութիւնը աւելի քան ճիշտ և արժէքաւոր: «Ամեն մի սօցիալական երևոյթի պիտի տալ էթիքական բնաւորութիւն», Միխայլովսկու այդ խօսքերի հետ պէտք է համաձայնել, ասում է Բերդակ, քանի որ անկարելի է անտարրեր մնալ:

Այս տեսակէտից Միխայլովսկու ոյժը, նրա մտքի ընկճող արամաբանական ոյժը այժմ շատերին է համոզում, համոզում անգամ իր թշնամիներին: Նա գալիս և վերջի վերջոյ տալիս է իր հռչակաւոր միացումը, ճշմարտութեան և արդարութեան միացումը: Նա դնում է ճշմարտութիւնը և արդարութիւնը մի բառի մէջ, Правда-ի, աւելի ճիշտ, այդ երկու կատեգորիաները արդէն մի ամբողջական հասկացողութիւն են կազմում և դրանց երբէք իրարից չպէտքէ անջատել: Եւ յիշուի, ոչ մի բառ, ոչ մի տերմին այնպէս ճշգրիտ չի արտայայտում Միխայլովսկու ընդգրկող սօցիոլոգիական-փիլիսօփայական աշխարհայեցողութիւնը, ինչպէս Պրաւդան: Եւ դա Միխայլովսկու սկզբունքների Սկզբ-

բունքն է: Իսկ այդ սկզբունքների սկզբունքի երկեակ բնոյթով, կամ պրաւդայ-ի լոբբոնմամբ արդէն Միխայլովսկին տարբերում և հեռանում է այն բացիօնալիզմից, որ տիրող էր նամանաւանդ 60-ական թւականներին: Ահա այդ երկեակ ճշմարտութիւնը — ճշմարտութեան և արդարութեանը պէտք է դատէ բովանդակ մաքրկութիւնը: Աւելի անարդար և սխալ, քան այդ երկեակ ճշմարտութեան բաժանումը, — չի կարող լինել: Պրաւդան, իր այդ ընդգրկող և վեհ իմաստով, միշտ էլ կազմել է Միխայլովսկու գերագոյն որոնումների, հետախուզումների կէտ-նպատակը: «Правда-ճշմարտութիւնը բաժանելով правда-արդարութիւնից, այսինքն, Թէօրետիկ երկնքի ճշմարտութիւնը՝ պրակտիկ երկրի ճշմարտութիւնից — դա ոչ միայն չի բաւարարել ինձ, այլ միշտ էլ վերաւորելը»: Իրանք բաժանելու համար չեն, այլ միշտ էլ մի գեղեցիկ ամբողջութիւն պէտք է կազմեն: Եւ նա առաջարկում է «աներկիւղ նայել իրականութեան աչքին և նրա արտացոլման, օրինկտիվ ճշմարտութեան և միևնոյն ժամանակ պահպանել правда-արդարութիւնը, սուբիեկտիվ ճշմարտութիւնը»: Այսպիսին է նրա բովանդակ կեանքի խնդիրը, նրա գործունէութեան հիմնա-

կան մօտիվը: Եւ նա մինչև իր կեանքի վերջին օրերը, ամբողջ 1/2 դար դեբազանցօրէն հետամտեց այդ գերազոյն ինչորին: Եւ նա չի գտնում մարդկային մի ոյժ, որպիսին ուղում է նա լինի, որ աստաշին զբա վրա գործադրելով: Եւ այդ գերազոյն սկզբունքի համար նա զո՞նաբերեց իր լաւագոյն ոյժը, իր էներգիան, իր խանդը ու կիրքը:

Մինչայժմեան վերլուծումից, Միխայլովսկու սօցիօլօգիական վարդապետութեան հիմնական դժերի ընդթաղրից արդէն պարզուած և աւելի քան հասկանալի է դառնում նրա յարուցած այն հարցը, թէ ինչպէս կարող է կառուցուել սօցիօլօգիական դօկտրինը, ամբողջ սօցիօլօգիական շէնքը: Արդէն այդ շէնքի շատ բաղկացուցիչ-էական մասերը մեզ յայտնի են և հետևապէս պարզ է շէնքի ընդհանուր Փիղիօնօմիան: Միխայլովսկու տեսակէտով սօցիօլօգիայի կառուցումը պիտի նոյն հիմունքներով լինի— և այլ կերպ էլ չէր կարող լինել—, ինչպէս առհասարակ ամեն մի դիտութեան կառուցում, բայց իր Պրաւդայի տեսակէտով: Ինչպէս ամեն մի դիտութիւն, այնպէս էլ սօցիօլօգիան պէտք է նախ բաւարարէ իմացութեան կարիքը, պահանջը, իսկ իմա-

ցութեան կարիքը բաւարարուած է միայն ճշմարտութեամբ: Բայց միայն սրանով չի կարող սահմանափակուել սօցիօլօգիան, գա կլինէր սխալ և կհակասէր Միխայլովսկու ընդգրկող Պրաւդայի սխտեմին: Սօցիօլօգիան, ստի և ճշմարտի կատեգորիաներից պատ, զորժ ունի նաև բոլորովին իւրայատուկ կատեգորիաների հետ— բարոյականի, արդարութեան և ցանկալիութեան կատեգորիաների: Անա այդ դիժն է, որ ստիպում է մարդուն սուբիեկտիվ ձևով վերաբերել օբիեկտիվ աւելիներին, մարդկանց վախճարարութիւններին: Բայց դա չի հակասում օբիեկտիվ ճշմարտութեան: Եւ մենք միանգամայն համաձայն ենք Իւանով-Քալուսնիկի այն պնդման հետ, որ «Միխայլովսկին միշտ էլ ձգտել է զննել օբիեկտիվ ճշմարտութեան դոյութիւնը սօցիօլօգիայի մէջ: Նրան չեն կարող մեղադրել զրանում և ստերիք չի հակասում նրա սուբիեկտիվ վերաբերմունքին դէպի այդ օբիեկտիվ ճշմարտութիւնները»:

Մենք համարեա թէ սպաւեցինք Միխայլովսկու սօցիօլօգիական սուբիեկտիվի մի էական դժերի վերլուծման հարցը. ասում ենք համարեա թէ, որովհետև մնում է դեռ մի ինչիւր, որն անքակտելիօրէն կապ-

լած է մի փոքր առաջ վերլուծած կատե-  
գորիաների հետ: Այդ հարցն է ցանկալիու-  
թեան կատեգորիայի կիրարկումը հասարա-  
կական դիտութիւնների, սոցիոլոգիայի,  
պատմութեան են մէջ: Երկու հակադիր դրու-  
թիւնների պրօբլէմն է, դետերմինիզմի և  
անհատի դերի խնդիրը պատմութեան մէջ,  
մի պրօբլէմ, որն այնքան քննադատուի է  
ռուսական իրականութեան մէջ դեռ 70-ա-  
կան թվականներից ի վեր, շարունակուում է  
և այժմ:

4. ԱՆՀԱՏԻ ԴԵՐՔ, ՀԱՄԱՐԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՏԵԳՐԻԱՆ

Մա համարում է սոցիոլոգիական էա-  
կան պրօբլէմներից մէկը, որը բաւականին  
դրադեցրել է Միխայլովսկուն: Այն հարցը,  
թէ պատմութիւնը անանուն մասսաներն են  
որակում թէ անհատները, դրադեցրել է և  
դրադեցնում է ամեն մի պատմադէտի, ա-  
մեն մի պատմափիլիսօփայի և սոցիոլոգի:  
Տիրում են տարբեր տեսակէտներ, իրար  
տրամագծօրէն հակադիր թէօրիաներ: Կան  
պատմաբաններ և սոցիոլոգ-փիլիսօփաներ,  
որոնք բացատում են անհատի դերը պատ-  
մութեան մէջ և շեշտում են միմիայն մասսա-  
ների նշանակութիւնը, դիտելով այն որպէս  
առաջ-մղիչ գործօն պատմական էվօլուցի-  
այի, առհասարակ սոցիալ-քաղաքական վար-  
դացման: Այդպիսի մտածողներ են, օրինակ,  
Կօնդօրսէ, Բօկլլ, Կօնտ, Մարքս ևն:

Մտածողների այս շարքի հանդէպ կան  
և այնպիսի դէմքեր, նոյնքան հեղինակաւոր  
և խոշոր, որոնք, ընդհակառակը, ճանաչում

են անհատների, մեծ մարդկանց դերը պատմական պրոցեսի մէջ և միանգամայն մերժում մասնաների, շրջապատի, «իրերի բնական ընթացքի» նշանակութիւնը: Օրինակ, Թոմաս Կարլէյլը, անգլիացի յայտնի պատմաբան-փիլիսոփայի, «հերոսները և հերոսականը պատմութեան մէջ» աշխատութեան հեղինակի համար պատմութիւնն այլ բան չէ, քան անհատների, մեծ մարդկանց կենսագրութիւնների գումարը:

Բայց մի երբորդ ուղղութիւն, աւելի լայն և խորը, բնութենում է այդ երկու տեսակէտները խիստ ծայրահեղ և իրականութեանը չհամապատասխանող, և ճանաչում է թէ բէայ, պատմական միջավայրի, թէ իրերի բնական ընթացքի և անհատի դերի նշանակութիւնը պատմութեան մէջ: Մեծ մարդկանց և մասնաների թէօրիայով շատ զբաղւել է Ռուսաստանում տաճնաճնապէս Կարենը, և նա աւել է իր յայտնի գրքում «Сущность исторического процесса и роль личности в истории» այդ ուղղութիւնների բնութագիրը: Այդ գրքի վրա մասնանշում է հենց ինքը՝ Միխայլովսկին:

Միխայլովսկուն էլ զբաղեցրել է այդ պրոբլէմը, մասնաների և անհատների թէօրիան: Եւ Միխայլովսկու գիրքը այդ հար-

ցի հանգէսլ աւելի քան պարզ է: Նրա ընդգրկող Պրաւդա-սիւտեմը արդէն ինքնին տալիս է դրա լուծումը, անգամ նրա սուրբինկտիվիզմն է տալիս այդ: Ըստ էութեան այստեղ մենք նոյն հարցի հետ դորժ ունենք, ինչ յարուցւեց վերեւ, պրաւդա-ճշմարտութեան և պրաւդա-արդարութեան: Երկեակ ճշմարտութեան մի մասնակի կիրարկումն է սա: Եւ անհատի դերը, աւելի ճիշտ, հնարաւորութեան կամ ցանկալիութեան կատեգորիան սոցիոլոգիայի մէջ սերտօրէն և անբաժանելիօրէն կապւած է երկու կատեգորիաների հետ—տեղէօլոգիան սոցիոլոգիայի մէջ և էթիկան սոցիոլոգիայի մէջ:

Բայց մօտենանք հարցի լուծմանը և սողա մեր զբոսութեան հիմնաւորմանը մանրամասնօրէն, գիտական հիմունքներին:

Այստեղ զբւած է դետերմինիզմի և ինդետերմինիզմի հարցը: Կարելի է և այսպէս զննել հարցը: Միխայլովսկին իր աշխարհայեցողութեամբ եղեղ է դետերմինիստ: Գուցէ այս պնդումը շատերին զարմանք պատճառէ առաջին հայեացքից, բայց դա փոսս է, ինչպէս յետոյ այդ մենք կտեսնենք փաստօրէն: Այս նոյն միտքը շնչում է նաև Բագուսնիկը: «Միխայլովսկուն լովսկուն լայտարարում են ինդետերմինիստ,

նա եղել է համուլամ ցտերմինիստ» (ընդդէ-  
 ծումը մերն է Ե. Պ.) Ահա ինչ է ասում նա:  
 Եւ մենք այս մտքի հետ միանգամայն հա-  
 մաձայն ենք: Այլ կերպ էլ չէր կարող լինել  
 Պրավգա-սխտեմի ստեղծագործողը: Ինչե-  
 տերմինիզմի դէմ մի մարջնացեալ բողոք է  
 ներկայանում հէնց Միխայլովսկու սօցիո-  
 լոգիական սուրիեկտիվիզմը: Միւս կողմից  
 նա չէր կարող հանդուրժել ինչեաներմի-  
 նիզմը, քանի որ այդ սկզբունքը ճանաչում  
 է կամքի կատարեալ ազատութիւնը, հետե-  
 ւապէս, արդիւնք է ուլտրա-ինդիվիդուալիզ-  
 մի, իսկ մենք արդէն գիտենք, որ նա այս  
 դրութիւնը մերժում է: Այդ այդպէս լինե-  
 լով, նա չէր կարող, երբորդ կողմից, հան-  
 դուրժել նաև իրերի ընական, ֆաթալ ըն-  
 թացքի սկզբունքը, ուրիշ խօսքով անտի-  
 ինդիվիդուալիզմի տեսակէտը: Պարզ է, որ  
 սուրիեկտիվիստ-սօցիոլոգը չէր կարող ոչ  
 մէկի և ոչ միւսի տեսակէտի վրա կոնզնել:  
 Այստեղ էլ երևան է գալիս նրա մտքի սեն-  
 թեթիկ կազմը, ելակէտ ունենալով իր հիմ-  
 նական աշխարհայեցողութիւնը, պրավլայի  
 համայնապարփակ սկզբունքը: «Մարդկային  
 գործունէութիւնը մէկն է պատճառների և  
 հետևանքների ամբողջ շղթայի օղակներին»:  
 Միխայլովսկու այս խօսքերի մէջ կայ ամ-

բողջ մի թէօրիա: Նա ընդունում է դրանով  
 անհատի ահալով գործունէութիւնը և դերը  
 պատմական պրօցեսսի և զարգացման մէջ:  
 Բայց նա ճանաչելով մարդկային գործու-  
 նէութիւնը որպէս պատճառներից մէկը,  
 բոլորովին չի ժխտում պատմութեան պատ-  
 ճառականութիւնը և օրինաւորութիւնը, ու-  
 րիշ խօսքով, պատմական դէպքերի ընական  
 ընթացքը: «Օրիեկտիվ օրէնքները որոշում  
 են պատմական շարժման կարգը, իսկ սու-  
 րիեկտիվ ոյժը ազդում է շարժման ընթաց-  
 քի վրա» (IV 102): Ահա ինչպէս է տրամա-  
 բանում նա: Այստեղ շեշտում է պատմու-  
 թեան թէ օրիեկտիվ և թէ սուրիեկտիվ  
 կողմը, առաջինը զուտ բանականութեան  
 տեսակէտն է, ինչպէս գրել է Կանաթը, իսկ  
 միւսը կամքի բարոյական գնահատում է,  
 մի բարոյական դատ՝ բարոյական կատեգօ-  
 րիայի տեսակէտից: Պատմութեան այս եր-  
 կու կողմերը իրար չեն ժխտում, բացասում,  
 այլ միայն լրացնում մի ներդաշնակ միու-  
 թեան ամբողջութեան մէջ: Այսպիսով Մի-  
 խայլովսկին լուծած և բացատրւած է հա-  
 մարում այն անտինոմիան, որ գրել էր Քեօ-  
 նիգարերդի մեծ փիլիսօփան, Կանաթը—զուտ  
 բանականութեան և գործնական բանակա-  
 նութեան անտինոմիան:

Պարզ է, որ Միխայլովսկին չի ժխտում, և չի կարող ժխտել, արտաքին պայմանների, պատմութեան ընթացող գործոնների դերը, նշանակութիւնը և ազդեցութիւնը, բայց դրանց մէջ տեղ է տալիս նաև անհատի ակտիվ դերին: Նա, իհարկէ, ոչ էլ ընկնում է միև ծայրահեղութեան մէջ, պաշտպանելով մեծ մարդկանց, հերոսների կուլար: «Մեծ մարդիկ, անկասկած, հրկինքից չեն ընկնում երկրի վրա, այլ երկրից բնուում: Նրանց ստեղծում է նոյն այն միջավայրը, որը մզում է նաև ամբոխին, միայն կենտրոնացնելով և մարմնացնելով նրանց մէջ՝ ամբոխի մէջ բաժան-բաժան դրանց ոյժերը, զգացումները, բնազդները, մտքերը և ցանկութիւնները»:\*) Նոյն այդ գրեթէ քրոն, հենց մի երկու հրեա յետոյ նա դեռ աւելին է ասում. «Կան մեծութիւններ, որոնք լուսաւորում են հեռուսր պատմական հորիզոնը: Այնպէս է պատահում, որ մեծ մարդը, իր անմահ կեանքով, իր մտքով ապրում է դարեր, և դարերով ապրում է ամբոխի վրա, զբաւելով վերջինիս: Բայց լինում է և այնպէս, որ մեծ մարդը յանկարծ փայլատակում է,

\*) Мах. «Уол. Соч.» II т. 97. «Герои и толпа».

ինչպէս դիտուոր աստղ, միայն մի բողէ դառնում է ամբոխի կուռքը և իզէալը, և ապա, երբ անցնում է բողէական ուղևորութիւնը, ինքն ևս մտնում է մութ մասսայի շարքերում»։\*) Մեզ համար կարևորը Միխայլովսկու այս խօսքերի առաջին կտորն է: Եւ խկապէս անհեթեթ բան է պնդել, թէ այդպիսի խոշոր մարդիկ որևէ հետք չեն թողնում պատմութեան մէջ: Ճշմարտութեան գէժ մեղանչել չի նշանակում միթէ անդիտանալ այն դերը, որ խաղացել է պատմութեան մէջ մի Ալեքսանդր Մակեդոնացի, մի Ֆրիդրիխ Մեծ, մի Նապալէօն, մի Բիսմարկ, մի թէկուզ Ջինզիգ-խան, Աէնկլիմուր՝ բացասական մտքով: Չէ որ ամբողջ հասարակական կեանքը, ամբողջ պատմութիւնը ներկայացնում է իրենից անհատների գիտակցական, թէ անդիտակցական գործունէութեան արդիւնք. մեզանից ամեն մէկը իր գործունէութեամբ ուղղում է հասարակութիւնը այս կամ այն կողմը և, այսպիսով, այս կամ այն իմաստով անում է պատմութիւնը»։\*\*) Էլ աւելի ան-

\*) ibid et. 99.

\*\*) Карповъ. «вст.-фил. и соц. этюды». et 127.

միտ է ասել, թէ Մահմէդը, և Քրիստոսը, և Բուզզան որպէս այդպիսիներ, որպէս անհատներ և կրօնագէտներ, վճռական դեր չեն խաղացել պատմական, մտքի զարգացման ընթացքի վրա: Մեծ մարդկանց ամենամեծ ոյժը և արժէքը և արժէքը և հէնց նրանում, որ նրանք կարողանում են պատմական մօմենտները և յարաբերութիւնները ծնւաւորել և ներկայանալ մի կենտրոնակէտ, կեզակէտ եղած ոյժերի վերաբերմամբ, ինչպէս և ուղղութիւն տալ ըէալ յարաբերութիւններին և ոյժերին, ուղղելով զըանց դէպի մի որոշակի նպատակ:

Այդպիսին է մարդը, մեծ հոգի և խորունկ գիտակցութիւն ընդգրկող անհատը: Անհատը, նպատակազրոյ անհատը չի բաւականանում միայն նրանով, ինչ կայ, ինչ ներկայացնում են տեւալ պայմանները: «Մարդը ստրուկ է պայմաններին», ասում են շատերը, բայց բանը նրանումն է, որ նա չի ուզում ստրուկ լինել: Պարզ և կարճ ֆօրմուլան՝ մարդը պայմանների գերին է, դա կեանքի բաժակի իրական յատակն է, բայց միայն յատակ, որով ոչ մի սպրոյ չի բաւականանում: Իր անպայման տեսքով այդ ըէալ յատակը չունի ոչ մի գործնական նշանակութիւն:

Մենք կարող ենք առաջ բերել նաև այլ կտորներ, որոնք էլ աւելի կապացուցանեն և պարզ կգործեն Միխայլովսկու տեսակէտը: Շատերը մեծ մարդուն ընդունում են որպէս պատմութեան գէնք և զրանից ոչ աւելի: «Թող նա լինի գէնք, ասում է Միխայլովսկին, բայց նա գէնք է՝ զգացող, խորհող և, որ զլիաւորն է, գիտակցաբար և ընտրողական ուղղութեամբ աշխատող: Թող թէկուզ նա լինի իր բոլոր ոյժերով արդիւնք յայտնի պատճառների, բայց հետևելով իր նպատակներին, նա ինքն ևս զանում է ախիւվ և գիտակցական պատճառ գէպքերի շարունակական ընթացքի մէջ: Երևոյթների պատճառական կապը անկասկած է, բայց այդ պատճառների թւում կամ հասարակական կեանքի այդ երևոյթներին շարքում կայ և՛ անհատական էներգիան, և՛ տոկունութիւնը, և՛ մտքի համագեցուցիչ ոյժը, և՛ օրինակի ոյժը՝ ներկայանալով որպէս հերոս»:\* ) Պատմափիլիսօփաւիքները աւելի հետուն է գնում և մի կարևոր մօմենտ շեշտում. «ամեն եղելութիւն, զարգացում անհատական է, իսկ ընթացքը կօլլիկտիվ. անհատական է ստեղծագործող

\*) II т. ст. 386. «Еще о героях».

մօտենալը, իսկ կօլլեկտիվ՝ տարածւող ընթացքը: Անհատական գործը ունի սահմանափակ ազատութիւն, իսկ կօլլեկտիվը՝ սահմանափակ անհրաժեշտութիւն, որովհետեւ առաջինը որոշուած է նախապայմաններէ միջոցով, իսկ վերջինս էլ յետագոյնցութեան միջոցով»:

Միխայլովսկու և Լիզների մօտ նմանութիւնը աւելի քան պարզ է: Դրանք երկուսն էլ, որպէս մտածողներ, շեշտում են հոգեբանական կողմի վրա պատմութեան մէջ: Միևնոյն ժամանակ, թէ Միխայլովսկին և թէ Լիզները, ընդունում են պայմանների և անհատի, միջավայրի և մարդկային ակտիվ գործունէութեան փոխ-ազդեցութիւնը: Այստեղ շեշտում է իրար պատկանելիութեան սկզբունքը, այն մտքով, ինչ մտքով դրել է Աւենարիուսը իր փիլիսոփայութեան հիմքում շրջապատի և ինդիվիդի փոխ-յարաբերութեան հասկացողութիւնը: Միխայլովսկին, ինչպէս առհասարակ ուստական սօցիօլօգիական-սուրբիեկտիվիստական շօլայի ներկայացուցիչները, Կարև, Չերնով, Լուսկինիչ կանգնած է քէալլիստական պատմահայեցողութեան տեսակէտի վրա: Այդ դպրոցը իր հայեացքը ուղղած է պատմական պրօցեսին՝ իր ամբողջութեան մէջ,

ի նկատի ունենալով նրա բոլոր բաղկացուցիչ-էական տարրերը: Իգէա և տնտեսութիւն, աշխարհագրական դիրք և ինտելլեկտ, մասսաներ և անհատներ, կօլլեկտիվ և անհատական կամեցողութիւններ, մօրալ և գեղարեստ, կրօն և փիլիսոփայութիւն, բաս և կլիմայական գրութիւն—այս բոլոր տարրերը գտնուած են մշտական փոխազդեցութեան մէջ: Նրանք երկուստեք իրար փոխադարձաբար որակում և պայմանաւորում են: Այս տարրերը այնպէս են զուգաւորւած և շաղկապւած պատմական զարգացման մէջ, որ ուղղակի անհնարին է դատել նրանց և իւրաքանչիւրի դիրքը գաւ-դատ գնահատել: Այդ փոխազդեցութեան տեսակէտի վրա է կանգնած նաև յայտնի փիլիսոփա-սօցիօլօգ Ջիմմէլը, Լիզները և վերջինս իր հայեցողութիւնը անւանում է «պատմական պիլիսօֆիդիլիզ»<sup>\*)</sup> Պատմական զարգացմանը մասնակցող այս բազմապիսի գործօնները, աւելի ճիշտ, տարրերը բաժանւում են ըստ էութեան երկու որոշ խմբակցութեան—արնտեսական և իդէօլօգիական: Սա տարրերի կլասսիֆիկացիան է: Մի շարքը օրիեկտիվ, բնական պայմաններ, հողի յատկութեան և

\*) Geschichtsphilosophie. S. 241.

ձև, կլիմա են, իսկ միւսը սուրբիկտիվ, գիտակցութեան ձևեր՝ իդէա, մօրալ, գիտութիւն, փիլիսօփայութիւն, իրաւունք են: Իսկ եթէ աւելի ընդհանրացնենք և մի յայտարարի բերենք, կստանանք, մարդ և միջավայր՝ որպէս սկզբնական պատճառներ: Մարդը կազմում է պատմութեան սուրբիկտիվ, իսկ միջավայրը օբիեկտիվ կողմը: Բայց սրանք բաժան, գատ-գատ մեծութիւններ չեն ներկայանում: Մրանք, ընդհակառակը, մարդը և միջավայրը, իդէօլօգիականը և տնտեսականը կազմում են մի մեծութիւն, մի մեծութիւն ճիշտ այն հասկացողութեամբ, ինչպէս ըմբռնում են Մախ և Աւենարբուսը ֆիզիքականը և հոգեկանը— պսիխօֆիզիցիզմը: Ահա այստեղ մենք գործունենք մի պատմական պսիխօֆիզիցիզմի հետ, այլ տերմինօլօգիայով, մի տնտեսա-իդէօլօգիական պարալիլիզմի հետ: Եւ դրանց մէջ չի ընդունւում պատճառի և հետևանքի ահա և յարաբերութիւն, այլ ճիշտ մի այնպիսի ահա, ինչպիսին ընդունում են էմպիրիօ-կրիտիցիզմի հիմնադիրները ֆիզիքականի և հոգեկանի վերաբերմամբ ֆունկցիօնէլ յարաբերութիւն:\*)

\*) Այդ մասին մանրամասնել տեսնել «Միտք» գիտական-փիլիսօփայական ժողովածուն Երևո 75—86.

Մենք սկսեցինք Միխայլովսկու մի հիմնական դրութիւնից, նրա երկեակ ճշմարտութիւնից, և այժմ էլ նոյն տեղը վերադառնում ենք: Ամենուրեք նոյն բիւրեղացած ղեկավար տեսակէտն է:

Մեզ մնում է միայն մի կարևոր հարց և մենք կսպասենք ոուս սուրբիկտիվիստի Սրաբձա-սիստեմի, նրա ընդգրկող սօցիալ-փիլիսօփայութեան ամբողջ վերլուծումը: Դա անհատականութեան և պրօգրէսի հասկացողութեան շատ նշանաւոր և էական խնդիրն է:

Անցնենք այդ հարցին:

— 200000 —

### III. ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԷՕՐԻԱՆ

ԵՒ

#### ՊՐՕԳՐԷՍԻ ՖՕՐՄՈՒԱՆ

Прогрессъ есть постепенное приближеніе къ цѣлостности недѣлимыхъ, къ возможно полному всестороннему раздѣленію труда между органами и возможно меньшему раздѣленію труда между людьми.

Н. К. Михайловскій.

I

Այժմ մեր առաջ գրւած է սօցիօլօգիայի վախճանական հարցը, պրօգրէսի որոշման խնդիրը:

Պրօգրէսի հարցը շատ է զրազեցրել ոռւս փիլիսօփա-հասարակագէտին: Եւ նա աւել է պրօգրէսի իր կլասիկ ֆօրմուլան, որն իր յայտնի տեղն ունի առհասարակ պրօգրէսի մասին եղած բոլոր նշանաւոր ֆօրմուլաների մէջ:

Բայց ինչու՞ն է կայանում պրօգրէսը, ինչպէս հասկանալ դա:

Արդէն մինչայժմեան անալիզից դժւար

չէ կռահել մօտաւորապէս Ն. Կ. Միխայլովսկու պրօգրէսի ֆօրմուլան կամ նրա ըմբռնողութիւնը պրօգրէսի մասին: Բայց դրած հարցին աւելի ճիշտ մօտենալու համար, նամանաւանդ աւելի պարզ և յստակ կայուցանելու համար ոռւս մտածողի հայեացքը շօշափւող պրօգրէսի մասին,—անհրաժեշտ է ծանօթանալ նրա «անհատականութեան թէօրիայի» հետ առհասարակ, նրա «անհատականութեան կուլի» սկրուսքի հետ:

«Անհատականութեան թէօրիա» և պրօգրէսի հասկացողութիւնը սերտօրէն կապւած են իրար հետ, և վերջինը, ինչպէս կտեսնենք, առաջինի անմիջական և արամարանական հետևութիւնն է:

Անհատականութեան թէօրիան բաւելութեան հակադրութիւնն է Դարվինի բնական ընտրութեան և դոյութեան կուլի օրէնքի կամ Մպինսէրի օրդանական թէօրիայի: Ն. Կ. Միխայլովսկին հասաւ անհատականութեան թէօրիային, ժխտելով օրդանական թէօրիան կամ առհասարակ դարվինեան բիօլօգիական սօցիօլօգիան, առանձնապէս դոյութեան կուլի և բնական ընտրութեան սկզբունքը:

Դեռ 40-ական, 50-ական թւականերին

ուսւս սօցիօլօգ-փիլիսօփան ամբողջապէս  
կլանուում է է Սպինոզերի՝ ժամանակի համար  
ուշագրաւ՝ օրդանական թէօրիայով: Այդ այն  
ժամանակ էր, երբ Ռուսաստանը դեռ շատ  
յետ էր մնացած թէ արդիւնաբերութեան և  
թէ կուլտուրայի կողմից. այդ այն ժամա-  
նակ էր, երբ դեռ չկար գասակարգային  
շերտաւորում, հեռակապէս, երբ դեռ գասա-  
կարգային կոիւրդարգացած չէր և բաւա-  
րար հող չուներ Ռուսաստանում: Բայց յե-  
տոյ, արդէն 60-ական թւերին Ն. Կ. Մի-  
խայլովսկուն այլ ևս չի գոհացնում օրդա-  
նական թէօրիան, և նա խիստ քննադատու-  
թեան ենթարկելով այն, գալիս կանգնում  
է անհատականութեան տեսակէտի վրա: Եւ  
այդ դառնում է ուսւս սօցիօլօգի շարունա-  
կական և մնայուն տեսակէտը:

Նա անողոր քննադատութեան է են-  
թարկում առհասարակ ընդդիտական, մաս-  
նաւորապէս քիօլօգիական հիմնական դրու-  
թիւնները, նամանաւանդ այն դրութիւննե-  
րը, որոնք ուղղադձական դարվիսիստ սօ-  
ցիօլօգները կամենում էին տարածել, — և  
տարածում էին, — սօցիալական երևոյթնե-  
րի վրա, դարձնելով նրանց համար ևս հան-  
րապարտադիր և ղեկավար սկզբունքներ:

Ն. Կ. Միխայլովսկու մղած տեսական

պայքարը էապէս մի սարսափելի և անողոր  
կոիւ էր: Նա տալիս է ջախջախիչ, ոչնչա-  
ցնող հարւածներ դարվիսեան սօցիօլօգիա-  
յին և աղճատում ամբողջ կառուցւածքը,  
դուրս քաշելով մէկ-մէկ շէնքի հիմնաքարե-  
րը: Նա մերժում է նախ դարվիսեան սօցի-  
օլօգների այն դրութիւնը, թէ պրօգրէսը  
կապւած է «գոյութեան կուլի» սկզբունքի  
կամ օրէնքի հետ: Նա յայտարարում է, որ  
պրօգրէսը, ընդհակառակը, սերտօրէն և ան-  
քակտելիօրէն կապւած է անհատականու-  
թեան կուլի օրէնքների հետ: Նա պնդում է  
միւս կողմից, որ կատարեալ անհատականու-  
թիւնը գոյութեան կուլի կամ բնական ըն-  
տրութեան արդիւնք չէ: Այդ բնական օրէնք-  
ները ոչ միայն չեն խօսում անհատակա-  
նութեան օգտին, այլ մինչև իսկ պայմանաւոր-  
ում են անհատականութեան ստորացումը:  
Եւ եթէ որևէ յաղթանակ կատարում է,  
այդ էլ միայն անհատականութեան ստորաց-  
ման գնով:

Բայց ինչո՞ւ, ի՞նչ հիմնունքեր ունէր  
ուսւս սօցիօլօգը իր պնդումների համար:

Բնագիտութեան մէջ ընդունուում են  
առհասարակ երկու տեսակի տիպեր — իդէա-  
լական և գործնական: Դարվիսեան գոյութեան  
կուլի սկզբունքը, ինչպէս և բնական ընտ-

բութեան ու միջավայրի պայմաններին յարմարելու օրէնքները ստեղծում, արտադրում են միայն գործնական, պրակտիկ տիպեր, բայց նրբէք իդէալական: Իսկ Ն. Կ. Միխայլովսկիու անհատականութեան կուբի սկզբունքն, ընհակառակը, արտադրում է իդէալական տիպեր: Դարվիկների գոյութեան կուբի և բնական ընտրութեան թէօրիայի ստեղծած տիպը միակողմանի և ցածր է, իսկ Ն. Կ. Միխայլովսկիու անհատականութեան թէօրիայի առաջ ընթացած տիպը բազմակողմանի և բարձր: Ահա Միխայլովսկուն և Դարվիկին բաժանող զիժը:

Ռուս սօցիոլոգի անհատականութեան թէօրիան դէմ է միաժամանակ լիբերալիզմին, նա աւելի քան դէմ է մեղչանականութեան և անոգոք պայքար է մղում այդ տեսակէտից: Բուրժուազիան էր ներկայանում լիբերալ մտածողութեան ներկայացուցիչը, լիբերալ իդէաների կրողը, և Միխայլովսկին սպառնալիօրէն ծառանում է ժամանակակից բուրժուազիայի և բուրժուազիական աշխարհայեացքի դէմ: Սյոլսիսի բուրժուական բնոյթ էր կրում նոյնպէս Դարվիկի սօցիոլոգիական դոկտրինը, որը կողմնակից էր պրակտիկ տիպին, և նա հէնց այդպէս էլ որակում է Դարվիկին և դարվիական ամ-

բողջ թէօրիան:

Ահա նրա գնահատական պարզ և անվերապահ խօսքը: «Անգլիական լիբերալ վաճառականը կարող է, իհարկէ, կատարելապէս բաւարարել Դարվիկի վարդապետութեան դեմօկրատիզմով, մի վարդապետութեան, որը մի հանճարեղ բուրժուական թէօրիա է (ընդգծումը իմն է, Ե. Յ.): Նա, իհարկէ, կարող է ասել, հետև ամեն տեսակի մենաշնորհ և անհաւասարութիւն: Բայց Դարվիկի ուսմունքը իրենից ոչ միայն չի ներկայացնում որպէս մի զէնք անհաւասարութեան և մենաշնորհի դէմ, այլ, ընդհակառակը, նա դնում է այդ նոր և աւելի լայն հողի վրա»:\*) Մի փոքր ցած նա աւելացնում է. «դարվիկիզմն ըստ էութեան ոչ միայն դեմօկրատական չէ, այլ ամենաորոշակի ձևով դնում է անհաւասարութիւնը և կոիւր հասարակութեան մէջ, որպէս իր բարոյագիտական-քաղաքական դոկտրինի անկիւնաքարեր: Դարվիկիզմը ճիշտ այն չափով է դեմօկրատական, ինչ չափով դեմօկրատական է ամեն մի բուրժուական դոկտրին»:\*\*)»

\*) Соч. I т. ст. 930—931.

\*\*) ibid 931.

Այստեղ պէտք է առանձնապէս շեշտել, որ Ն. Կ. Միխայլովսկին, և առհասարակ ուսուսական սուբիեկտիվիստական և պոզիտիվիստական շէօլան, ուսուսական ինտելիգենցիայի ակախի մասը շատ մեծ հարւած տաւ լիբերալիզմին Ռուսաստանում և խիստ կերպով թուլացրեց այդ հոսանքը: Եւ համեմատաբար լիբերալիզմը շատ աւելի յետ է մնացած և թոյլ է Ռուսաստանում, քան Արեւմտեան եւրոպական երկրներում: Այդ հոսանքը, մտածողութեան այդ ուղղութիւնը կորցնում է այդտեղ իր հեղինակութիւնը և հմայքը: Լիբերալիզմին Ռուսաստանում ամենազօրեղ և մահացու հարւած տւողներն շարքում առաջին պլանի վրա կանգնած է Միխայլովսկին, ինչպէս և Չերնիշևսկին: Եւ լիբերալիզմը ուսուսական կեանքի յեղաշրջողներն մէջ շատ աւելի պակաս, անգամ աննշան դեր է խաղացել՝ համեմատած եւրոպական միւս պետութիւնների բուրժուական դասակարգերի հետ:

Ռուսական ինտելիգենցիայի ակախի մասը, նարոզնիկութեան ներկայացուցիչները այդ հարւածը տալիս են լիբերալիզմին ոչ միայն դորժնական կեանքի մէջ, այլ և տեսականօրէն—լիբերալ մտածողութեան առհասարակ: Ն. Կ. Միխայլովսկին առանձ-

նապէս պայքար է մղում դարվիճեան բուրժուասօցիօլօգներն վարդապետութեան դէմ, նրանց բնագիտական տեսակէաներից հետեւած հասարակական դրութիւնների դէմ: Նա չէր կարողանում հանդուրժել նամանաւանդ դոյութեան կուլի և բնական ընտրութեան սկզբունքը հասարակագիտութեան մէջ: Յարմար էր, թէ չէ կոչնչանաս: Ահա ինչ են թելադրում և հրամայում այդ բնագիտական երկաթեայ օրէնքները: Յաղթանակը յարմարւողներինն է, չչարմարւողներն անպայման պէտք է ոչնչանան. յարմար էր բնութեան, միջավայրի պայմաններին: Ահա բիօլօգիայի փիլիսօփայութիւնը, նրա հրամայականը: Եւ այդ էլ հէնց իսկական էվօլյուցիան է, իսկական առաջադիմութիւնը: Այդպէս է յայտարարում դարվիճիզմը: Ուրեմն, կատարելիութեան կրիտերիումն է՝ յարմարել միջավայրի և բնութեան պայմաններին:

Բայց ովքեր են այդ յարմարւողները, այդ յաղթանակողները դորժնական կեանքում: Գրանք պրակտիկ, դորժնական տիպեր են, իսկ դրանք միշտ էլ ուժեղ և կատարեալ օրգանիզմները չեն: Գեո աւելին մեծ մասամբ թոյլերն և անպիտաններն են: Գոյութեան կուլի համար նրանք ունին մի-

այն որոշ վարձացած ընդունակութիւններ  
և գծեր, որով կարողանում են նրանք յաղ-  
թանակել և նամանաւանդ յարատեկել: Բայց  
այդ հանգամանքը դեռ բոլորովին ապացոյց  
չէ նրանց գերազանցութեան և մանաւանդ  
կատարելիութեան, ինչպէս օգտակարու-  
թեան: Շատ պարագիտներ, օրինակ, կարո-  
ղանում են յարմարել միջավայրի պայման-  
ներին և պահպանել իրենց յարատև գոյու-  
թիւնը, բայց այդ կեանքը միանգամայն  
անօգուտ է և, միևս կողմից, պարագիտը  
չի ներկայանում որպէս կատարեալ տիպ,  
կատարեալ անհատականութիւն կամ, աւելի  
ճիշտ, օրգանիզմ: Պարագիտն ունի միայն  
գործնական կեանքի համար անհրաժեշտ  
որոշ յատկութիւններ, և նա ապրում է: Այն-  
պէս որ միանգամայն սխալ կլինի այստե-  
ղից հետևեցնել, թէ օրգանիզմներն որքան  
աւելի յարմարեն միջավայրի պայմաննե-  
րին, այնքան աւելի կատարեալ կլինին:  
Այդ երկու հասկացողութիւնները—աւելի  
յարմարեողներ և աւելի կատարեալներ—  
իրար չեն ծածկում:

Այս մէկ. և սա երբէք չպէտքէ անու-  
շաղբութեան մատնել: Միևս կողմից խնա-  
մոտ ուշաղբութեան պէտք է առնել նաև  
այն հանգամանքը, որ ընտրողութեան օրէն-

քը կամ սկզբունքը պրօգրէսիվ դեր չի խա-  
ղում կեանքի նոր ձևեր կազմելու մէջ: Առ-  
նւազն անհիմն է պնդել նման մի միտք:  
Ոչ, այդպիսի մի դեր չի կարելի վերագրել  
այդ բիօլօգիական սկզբունքին: Այդ սկզբ-  
բունքը աւելի ճիշտ մի անխորական գործոն  
է: Նա չունի որևէ իդէալ և որոշ նպատա-  
կով չի կատարում ընտրութիւնը: Նա առ-  
հասարակ որևէ իդէալական դրութեան հետ  
գործ չունի: Բնագիտական այդ երկու տի-  
պերից, գործնական և իդէալական, յաճախ  
վերջիններս պարտում են գործնական տի-  
պերից և ոչնչանում են կեանքում, չնայած  
դրանք աւելի կատարեալ, աւելի բարձր և  
օգտակար են, քան գործնական տիպերը:  
Այնպէս որ դարվինիստները միանգամայն  
սխալում են, կարծելով, թէ գոյութեան  
կտիւր և բնական ընտրութիւնը ներկայա-  
նում են անհրաժեշտօրէն ու բացառապէս  
պրօգրէսի ազդակներ և զէնքեր: Միայն է  
նաև կարծել, թէ գոյութեան կուում գար-  
զանում են միմիայն լաւերը, ընտրելիները  
և աւելի ուժեղները: Ընտրութիւնը կատա-  
րեալների, բարձր տիպերի կողմը չէ, այլ  
միայն աւելի յարմարեողների կողմը: Չպէտք  
է մոռանալ երշորդ կողմից նոյնպէս այն  
ճիշտ և անտարակուսելի դրութիւնը, թէ

ինդիվիդի և տեսակի շահերը միշտ էլ չեն ծածկում իրար, չեն նոյնանում, այլ, ընդհակառակը, յաճախ կազմում են հակադրութիւններ:

Եզրափակենք: Ահա այս դարվիճեանքի օրոգիական սօցիօլոգիայի դէմ է ծառայում ոուս փիլիսօփա-սօցիօլոգը: Մրցման մէջ յարմարւոյների յաղթանակը ընդդէմ չյարմարւոյներին— դա միաժամանակ մեղանշականութեան և բուրժուազիայի, ինչպէս և լիբերալիզմի յաղթանակն է. «Laissez faire, laissez passer»:

Այս բոլորը վերգնահատելով և ժխտելով, Ն. Կ. Միխայլովսկին գնում է իր անհատականութեան կուր սկզբունքը, որը կողմնակից է ոչ թէ գործնական, միակողմանի և ցածր արդիւն, այլ իդէալական, բազմակողմանի և բարձր արդիւն:

II.

Ինդիվիդուալիստական գիծը անհատական յատուկ է ոուսական պօզիտիվիստական և սօցիօլոգիական սուբիեկտիվիստական շխօրային, առանձնապէս Ն. Կ. Միխայլովսկու աշխարհայեացքին:

Բայց ինչպիսի ինդիվիդուալիզմ: Թէև

այդ ըմբռնման բոյժը արդէն յայտնի չափով պարզ է մեր դիտողութիւններից և վերլուծումից, նամանաւանդ վերջին կտորից, չբայց այժմ էլ աւելի կպարզւի, երբ կտանք նոր հիմնաւորումներ և փաստեր:

Բէալ անհատի բարօրութիւնը համարւում էր ոուսական ինտելլիգենցիայի ակտիվ մասի գործունէութեան նպատակէտը: Ռուս մտածողների գեղեցիկ շարքը— Գերցեն, Չերնիշևսկի, Կալրով և Միխայլովսկի— կանգնած է այդ հայեցակէտի վրա: Առաջին երեքի, ինչպէս և Ն. Կ. Միխայլովսկու ընդգրկող սօցիալ-փիլիսօփայական աշխարհայեցողութեան անկիւնաքարը կազմում են անհատի, բէալ անհատի և ոչ թէ վերացական մարդու, շահերը: Պէտք է այս հանգամանքը առանձնապէս ի նկատի ունենալ, որպէս զի թիւրիմացութեան տեղիք չարւի:

«Մարդկային անհատը, նրա ճակատագիրը, նրա շահերը պէտք է լինին մեր թէօքիտիկ մտքի և պրոտիպիկ գործունէութեան հիմքում դրած»: Այսպէս է բնորոշում Ն. Կ. Միխայլովսկին իր հիմնական ինդիվիզմը:

Անհատի շահեր, սա կազմում է ոուս մտածողի սօցիալ-փիլիսօփայութեան կա-

սուցանածքի մի անկիւնաքարը: Շէնքի միւս անհրաժեշտ անկիւնաքարը կազմում են ժողովրդի շահերը: Բայց այստեղ ըստ երեւոյթին կարող է մի հակասութիւն երևալ: Բայց դա միայն «ըստ երեւոյթին» է: Այդ կարծած հակասութիւնը, աւելի ճիշտ թիւրիմացութիւնը կվերանայ, եթէ ի նկատի առնենք այն հասկացողութիւնը, ինչ որ տալիս է Ն. Կ. Միխայլովսկին, առհասարակ մեզ հետաքրքրող ուսուսկան շիօլան, «ժողովուրդ» գաղափարին: Անտարակոյս, «ժողովուրդ» խօսքը շատ է առանձգական ու անորոշ, և շատերն են, մանաւանդ այժմ, խօսում նրա շահերի տեսակէտից և յանուն նրա շահերի, բայց իրօք շատ քչերն են ժողովրդի շահերը հասկանում և պաշտպանում իրականապէս:

Ժողովուրդ— դա աշխատուոր դասակարգն է: Անա ինչ է նշանակում այդ բառը Միխայլովսկու բերնում կամ ընդհանրապէս ուսուսկան սօցիոլոգիական-պօզիտիվիստական շիօլայի տերմինօլոգիայի մէջ: Այդ շատ անհրաժեշտ և կարևոր լուսարանութիւն է, որի վրա առանձնապէս շեշտելով, հրաւիրում ենք ընթերցողի լուրջ ուշադրութիւնը:

Ն. Կ. Միխայլովսկին ներբողում է

աշխատանքը: Եւ յիրաւի, աշխատանքը կազմում է հիմնական տեսակէտը Միխայլովսկու, ինչպէս և այդ դպրոցի համար: Նրանք այդ տեսակէտով են մօտենում զանազան խնդիրների լուսարանութեան: Ռուսական ինտելիգենցիայի, առաջաւոր մտաւորականների ակտիվ մասը զալիս է հէնց այդ աշխատանքը պաշտպանելու, ուր ուզում է դա լինի: Ուր շահագործել այդ աշխատանքը, այդտեղ նա ուզում է պաշտպանել այն շահագործումից: Այդ դպրոցի, ինչպէս և Միխայլովսկու տեսակէտով անհատի ատորիքուն է միայն աշխատանքը: Հետևապէս ժողովրդի (կամ աշխատանքի) և անհատի շահերը գուգադիպում են իրար, ոչ թէ բաժանում ու հակասութեան մէջ գրանւում: Այդ ևս ուսուսկան դպրոցի ինքնատիպ կողմերից մէկն է: «Պրաւդայի ամբողջ շէնքը պիտի կառուցւի անհատի վրա, բայց կօնկրէտ քաղաքական հարցերը ներկայանում են երբեմն այնպիսի բարդ ձևի մէջ, որ հետևել այդ ցանցի մէջ անհատի շահերին և ձակատագրին շատ դժւար է: Այսպիսի դէպքում անհատի շահերի փոխարէն դուք դնում էք ժողովրդի շահերը կամ, աւելի պարզ և ճիշտ, աշխատանքի շահերը»\*) (ընդ-

\*) Соч. IV т. ст. 462.

գծումն իմն է. Ե. Յ.):

Այստեղ երևան է գալիս նորէն Միխայլովսկու մտքի սինթեթիկ կազմը: Նա դնում է ժողովրդի և անհատի շահերի սինթեզը: Այդ սինթեթիկ գիծը կազմում է ոչ միայն Միխայլովսկու, այլ առհասարակ այդ զարոյցի բնորոշ կողմերից մէկը: «Մի երկեակ կրիտերիում—բէալ անհատի բարօրութիւն և աշխատուոր դասակարգերի բարօրութիւն, ահա դրա վրա է կառուցւած Միխայլովսկու ամբողջ աշխարհայեցողութիւնը»\*), ճիշտ նկատում է յարգելի ուսու մտածող Բաղումնիկը: Միխայլովսկին ուզում է այնպիսի հասարակական ձև ստեղծել, որ երաշխաւորէր լի ու լի անհատի զարգացումը: Եւ այս հասարակական ձևի մէջ ինդիվիդուալիստական խնդիրն արդէն փոխւում է հասարակականի: Իէպի մարդկութեան երջանկութիւնը տանող ճանապարհի վրա ննում է դեռ անցնել մի մեծ և պտտմական զարբաս, որի ճակատի վրա գրած է «մարդը մարդու համար, ամեն ինչ մարդկութեան համար»: Բայց մարդկութիւն աւելով, ինչպէս նկատեցի, Միխայլովսկին հասկանում է ժողովրդի աշխատուոր դաս-

ակարգերի միութիւնը: Ծառայել ժողովրդին՝ նշանակում է Միխայլովսկու հասկացողութեամբ աշխատել աշխատուոր դասակարգերի համար: Ծառայելով աշխատուոր դասակարգին, մենք ծառայում ենք պարզապէս աշխատանքին և ոչ թէ բացառիկ շահի կամ մենաշնորհման: Իսկ, միւս կողմից, գիտենք, որ աշխատանքը անհատի ատորիքումն է, հետեապէս վերջին հաշւում մենք ծառայում ենք անհատի շահերին:

Այս բոլորից պարզ և անտարակուսելի է մի դրութիւն, այն, որ յամենայն գէպս անհատը Միխայլովսկու համար կազմում է կենտրոնական կէտը, ղեկավար տեսակէտը: Նա բարձր է ամեն ինչից: Ահա ինչ է ասում բառացի կերպով Միխայլովսկին. «ամեն մի միութեան և կուսակցութեան, շրջանի և ընտանիքի, ինչպէս և ազգութեան արժանիքի չափը պիտի լինի անհատի շահը... նշանակում է բոլոր քաղաքական հարցերի մէջ դուք դարձնում էք ձեր մտորումները կիզակէտը ոչ ազգի, ոչ պետութեան, ոչ համայնքի, ոչ գաւառի և ոչ էլ ֆեդերացիայի շահը, այլ պարզապէս անհատի շահը: Նա կազմում է այն կենտրոնը, որից մեզ համար սփռում, տարածում են ամենուրեք, բոլոր կողմերը *Правда*-ի ճառագայթները և

\*) История рус. общ. мысли, ст. 139.

լուսաւորում են այս կամ այն հասարակա-  
կան միութեան նշանակութիւնը մեզ հա-  
մարձ:\*) Միխայլովսկին յայտարարում է  
անհատը մինչև իսկ որպէս սրբազան և ան-  
ձեռնմխելի:

Բայց ինչպիսի՞ անհատի մասին է  
խօսքը, որի շահերը նա ներըողում է և  
նրա բարօրութիւնը ամեն ինչից բարձր  
դասում:—Դա լայն, բազմակողմանի և  
բարձր տիպի անհատն է: Նա դնում է ան-  
հատականութեան բազմակողմանի, կատա-  
րեալ և ներդաշնակ դարգացումը: Բայց ի՞նչ-  
պէս հասկանալ այդ, չէ՞ որ շատերն են նոյն-  
կամ նման խօսքեր ասում և դրութիւններ  
պաշտպանում:

Ասացինք, որ նա դէմ է գոյութեան  
կռւի սկզբունքին: Ժխտելով դա, նա  
դնում է իր անհատականութեան կռւի ըս-  
կզբունքը, ամբողջ մէ թէօրիա ստեղծելով:  
Անա այդ անհատականութեան թէօրիան  
տալիս է վերև դրած հարցի պատասխանը:  
Իսկ այդ անհատականութեան սկզբունքի  
հիմնաւորման նւիրւած են նրա երկու խո-  
շոր սօցիոլոգիական աշխատանքները—  
„Ворьба за индивидуальность“ և „Теория Дарвина  
я общественная наука“:

\*) Пол. соч. IV т. 460 стр.

III

Արդէն ասեց, որ Միխայլովսկին  
ժխտում է բնագիտական տեսակէտը—յար-  
մարւիր շրջապատին: Ասեց նոյնպէս, որ  
այդ սկզբունքը անդամ բեգրեսիվ է անհատի  
շահերի տեսակէտից: Միխայլովսկին բացա-  
սում է այդ, իսկ այդ բացասելով, նա  
դնում է իր աշխարհայեացքի հիմքում դրա  
հակադիր սկզբունքը—Կարլ Ֆօն Բերի դար-  
գացման ֆօրմուլան:

Բայց ինչպէ՞ս է կայանում Բերի այդ  
հռչակաւոր օրէնքի էութիւնը:

Օրգանիզմների կատարելիութեան կրի-  
տերիումը կայանում է ոչ թէ յարմարելու  
մէջ, այլ, ընդհակառակը, Բերի օրէնքով  
ճանաչւում է կենդանի էութիւնների օր-  
գանների ալլատարրութիւնը և աշխատան-  
քի բաժանման պատիճանը ինդիվիդի մա-  
սերի մէջ: Կարլ Ֆօն Բերի օրէնքի համա-  
ձայն «օրգանիզմը այքան աւելի զարգացած  
է, որքան նա աւելի բարդ է, որքան աւելի  
աշխատանքի ֆիզիոլոգիական բաժանումը՝  
նրա օրգանների մէջ՝ պարզ և ըէլիեֆ կեր-  
պով որոշւած է: Օրգանիզմն առաջադիմում  
է, երբ նա բարդանում է, այսինքն, անց-  
նում է միատարր դրութիւնից դէպի բարդ-

մատարը դրութիւնը, և յետադիմում է, երբ, ընդհակառակը, նա պարզանում է, հասարակ զստնում, այսինքն, անցնում է բազմատարր դրութիւնից դէպի միատարր դրութիւնը»\*) Այս ճշմարտութիւնը ուսու փիլիսոփա-սօցի-  
 օլօգը համարում է սնվիճելի, անտարակու-  
 սելի: Բերի օրէնքը սեփականացնելով, Մի-  
 խայլովսկին դարձնում է զա իր աշխարհա-  
 յնացքի անկիւնաքարը: Բայց այստեղ դար-  
 ձեալ մի հանգամանք անհրաժեշտ է երբէք  
 մոռացութեան չտալ, որը, հակառակ դէպ-  
 քում, խիստ թիրիմացութեան տեղիք  
 կտայ: Միխայլովսկին ընդունում է այդ  
 օրէնքը այնպէս, ինչպէս տալիս է Բերը,  
 բայց ոչ նրա այն կիրառումը, որը մենք  
 տեսնում ենք ուղղագծօրէն մտածող դար-  
 վիրիստ-սօցիօլօգների մօտ: Այդ օրէնքը  
 Բերի մօտ կրում է զուտ «անհատական  
 զարգացման օրէնքի» ընոյթ: Եւ այդպէս  
 էլ ընդունում է ուսու հասարակագէտը:  
 Մրանից արդէն ինքնին պարզ է, որ Մի-  
 խայլովսկին ընդունում է Բերի օրէնքը այն  
 չափով, ինչ չափով նա գալիս է ուժեղա-  
 ցնելու աշխատանքի բաժանումը մէկ և մի-  
 ենոյն ինդիվիդի օրգանների մէջ: Այս չա-

\*) Соч. I т. 175 ст.

փով նա միայն անհատական զարգացման օրէնք  
 է: Բայց Միխայլովսկին միանգամայն դէմ  
 է այդ օրէնքի սօցիօլօգիական կիրառման:  
 Բերի օրէնքը նա համարում է բիօլօգիա-  
 կան օրէնք և ոչ թէ սօցիօլօգիական. հե-  
 տնապէս չի կարելի ընդունել նոյն խմաս-  
 տով նրա դործագրութիւնը հասարակագի-  
 տութեան մէջ: Բերը «արտայայտում է իր  
 ֆօրմուլայով օրգանական պրօցեսի էու-  
 թիւնը»\*), բայց զա երբէք սօցիօլօգիական  
 նօրմ չէ: «Փոփոխութիւնների շարքը առաջ  
 է բերում միատարրից դէպի բազմատար-  
 րը»\*\*): Այսպէս է ձևակերպում Միխայլով-  
 սկին Բերի անհատական զարգացման օրէն-  
 քը: Եւ նա այս դրութիւնը համարում է  
 ժամանակակից գիտութեան ամենարեզմա-  
 ւոր ընդհանրացումներից մէկը: Բայց նա  
 միանգամայն դէմ է և չի կարող համաձայ-  
 նել, երբ շատերը, ինչպէս Իրեպերը և ու-  
 րիշները, ելակէտ ունենալով Բերի այդ զուտ  
 անհատական զարգացման օրէնքը, «ուզում  
 են դրա վրա կառուցել սօցիալական օրգա-  
 նիզմի իրէան»\*\*\*): Նա դէմ է, որովհետև

\*) Соч. I т. 70 ст.

\*\*\*) ibid.

\*\*\*) ibid.

«հասարակութիւնը օրգանիզմ չէ, այլ անբաժանելի օրգանիզմների մի միութիւն է. նա կազմւած չէ օրգաններից՝ յատկապէս նախորոշւած այս կամ այն գործառնութեան համար, այլ նա կազմւած է անբաժանելի միաւորներից, որոնք ունին բոլոր օրգանները և որոնք կատարում են գործառնութիւնների ամբողջ գումարը: Սօցիալական օրգանիզմի իդէան տրամագծօրէն հակասում է Բերի օրէնքին, և կարելի է միայն զարմանալ նրա պաշտպանների կարճատեսութեան վրա, որ ուզում են յենել այդ օրէնքի վրա»<sup>\*</sup>): Բերի օրէնքը միայն նօրմալ, Ֆիզիօլօգիական զարգացման օրէնք է և այդ օրէնքով դրւում է միայն աշխատանքի Ֆիզիօլօգիական բաժանումը մէկ և միևնոյն ինդիվիդի օրգանների մէջ: Այդ օրէնքի համաձայն օրգանիզմի զարգացման աստիճանը ուղիղ յարաբերական է աշխատանքի Ֆիզիօլօգիական բաժանման աստիճանին կամ օրգանիզմի կատարելիութեան աստիճանը ուղիղ յարաբերական է աշխատանքի Ֆիզիօլօգիական բաժանման աստիճանին: Սա միայն և միմիայն բիօլօգիական ճշմարտութիւն է, անվիճելի ճշմարտութիւն:

<sup>\*</sup>) ibid.

Բայց այս զուտ բիօլօգիական ճշմարտութիւնը սխալմամբ շփոթւում է, այն էլ յաճախ, զիվերգենցիայի սկզբունքի հետ, ինչպէս նկատում են Լուսկեիչը և ուրիշները:

Ահա թէ ինչպէս է պատճառաբանւում այդ սխալը, այդ խոշոր և էական սխալը:

Կարլ Ֆօն Բերի օրէնքի համաձայն ազդեցութիւնը տարածւում է միևնոյն անբաժանելի ինդիվիդի օրգանների կամ մասերի վրա, մինչդեռ զիվերգենցիայի օրէնքի համաձայն ազդեցութիւնը տարածւում է մի տեսակի տարբեր ինդիվիդների վրա: Առաջին դէպքում ինդիվիդի օրգաններն են զարգանում, հետևապէս ինքն ինդիվիդը կատարելագործւում է, իսկ միւս դէպքում միայն ինդիվիդի այս կամ այն օրգանն է կատարելագործւում ու զարգանում, հետևապէս անբաժանելի ինդիվիդը, որպէս ամբողջութիւն, յետադիմում է: Կարելի է շատ կողմերի վերաբերմամբ անել նման համեմատութիւն: Կարլ Ֆօն Բերի օրէնքը անհատական զարգացման օրէնք է, միւսը սօցիօլօգիական օրէնք: Բերի օրէնքը դնում է աշխատանքի Ֆիզիօլօգիական բաժանումը, իսկ զիվերգենցիայի սկզբունքը դնում է աշխատանքի այսպէս կոչւած անտեսական կամ սօցիալական բաժանումը: Բերի օրէնք

քով գաղղանում, առաջագիծում, կատարելութեան է դիմում ինդիվիդը, անհատը, իսկ զիվերգենցիայի օրէնքով գարգանում, կատարելութեան է դիմում հասարակութիւնը: Առաջին դէպքում անհատն է գնում միատարր գրութիւնից դէպի բազմատարր գրութիւնը, իսկ երկրորդ դէպքում հասարակութիւնն է գնում միատարր վիճակից դէպի բազմատարր վիճակը:

Ահա ինչպէս բաժանւում են այդ երկու յայտնի սկզբունքները իրենց հիմնական գծերի և դրութիւնների մէջ: Եւ Միխայլովսկին դէմ է կանգնում զիվերգենցիայի սկզբունքին, այսինքն, աշխատանքի սօցիալական կամ անտեսական բաժանման: Այս օրէնքը խեղաթիւրում է կեանքի ներգաշնակութիւնը, նա բերում է անհատի ամբողջականութեան աղճատումը, դարձնելով նրան հաշմանդամ: Դեռ աւելի հեռուն է գնում ուսւ մտածողը: Այդ սկզբունքը նա յայտարարում է որպէս մարդկութեան առաջագիծութեան ոխերիմ թշնամի: Աշխատանքի անտեսական բաժանման սկզբունքը պրօպրէտիվ չէ, այլ բէպրէսիվ: Ահա դրա դէմ պէտք է պայքարել: Եւ ինչպէս որ ինդիվիդի կատարելութեան աստիճանը ուղիղ յարաբերական է Ֆիդ. աշխատանքի բաժան-

ման աստիճանին, ճիշտ այնպէս էլ ինդիվիդի կատարելութեան աստիճանը հակառակ յարաբերական է աշխատանքի սօցիալական բաժանման աստիճանին: «Չկնախելի անհատականութեան սահմաններում աշխատանքի Ֆիդ. բաժանումը, այսինքն, աշխատանքի բաժանումը օրդանների մէջ, համուժ է բաւականին բարձր աստիճանի, որովհետեւ այստեղ ի նկատի է առնւած մի կողմից այն օրդանները, որոնք անհրաժեշտ են գոյութեան համար՝ ջրի մէջ, և միւս կողմից այն օրդանները, որոնք անհրաժեշտ են ցամաքի վրա: Բայց երբ ձկնախելի իդէալական տիպը վերածւեց մողեսի և ձկան գործնական տիպին, անցաւ աշխատանքի բաժանումը ինդիվիդների մէջ և այդ ժամանակ զրանցից ամեն մէկի մէջ աշխատանքի Ֆիդիօլօգիական բաժանման աստիճանը պակասեց, ոմանք դառան միայն ջրային կեանքի ընդունակ, իսկ միւսները՝ ցամաքային: Այսպիսով իջաւ զարգացման տիպը: Այդ նոր, ցած գործնական տիպը կարող է համակը զարգացման ամենաբարձր աստիճանին: Այժմ նոյն օրէնքը վերագրենք հասարակական երևոյթներին: Դեհնք ձկնախելի տեսակի տեղ որևէ սօցիալական գրուպպա, որևէ հասարակական անհատա-

կանութիւնս: Եթէ այդ անհատականութեան ներսում և նրա զարգացման ազդեցութեան տակ ուժեղանում է աշխատանքի սօցիալական բաժանումը, դա առաջ է բերում ինքիվիզների խիստ տարբերութիւնը, այնպէս որ նրանց տիպն ընկնում է, թէպէտ նրանց զարգացման աստիճանը բարձրանում է»:<sup>\*</sup>)

Այս խոշոր կտորն արդէն պարզորոշ կերպով տալիս է Միխայլովսկու կարծիքը բերի օրէնքի, ինչպէս և զիվիբրգենցիայի մասին: Եւ ինչպէս որ համեմատութեան համար օրինակ վերցրինք կենդանական աշխարհից, նոյնպէս կարելի է վերցնել նաև մարդկային կեանքից, ցոյց տալու համար զարգացման տիպի և աստիճանի հակադրութիւնը: Օրինակ, նախապատմական մարդու անհատականութեան սահմաններում աշխատանքի ֆիզիօլօգիական բաժանումը հասնում է շատ բարձր աստիճանի, որովհետև այգտեղ ի նկատի է առնւած նրա շատ օրգանները, և աշխատանքի բաժանումը կատարւում էր հաւասարապէս այդ բոլոր օրգաններին մէջ: Դա տիպի զարգացման տեսակէտից իդէալական էր: Նախամարդը

<sup>\*</sup>) Соч. I т. 493-494 ст. «Борьба за индивидуальность».

ներկայանում էր և՛ որսորդ, և՛ հովիւ, և՛ կուրդ ևն. նա էր իր համար գործիքներ պատրաստում, ինչպէս և իրեր: Նա էնցիկլօպեդիստ էր: Բայց կամաց-կամաց նա դանտզանաւորման ենթարկեց, ընկաւ տիպը և զարգացաւ աստիճանը: Առաջ եկան գործնական տիպեր, յարմարեցրւած միջավայրի պայմաններին, ուրիշ խօսքով, սպեցիալիստներ, որոնց մէջ կատարւում է աշխատանքի ոչ թէ ֆիզիօլօգիական, այլ սօցիալական բաժանում, այսինքն, աշխատանքի բաժանում ոչ թէ մարդկային միևնոյն անհատի օրգաններին մէջ, այլ շատ անհատներին մէջ: Աշխատանքի բաժանման տեսակէտից ահագին տարբերութիւն կայ նախամարդու և այժմեան սպեցիալիստի մէջ:

Այստեղից, կարծում ենք, միանգամայն պարզ է աշխատանքի ֆիզիօլօգիական բաժանման և աշխատանքի սօցիալական բաժանման փոխադարձ յարաբերութիւնը: «Որքան աշխատանքի սօցիալական բաժանումը աւելի ուժեղ է, այնքան աշխատանքի ֆիզ. բաժանումը աւելի թոյլ է, և ընդհակառակը»<sup>\*</sup>): «Եւ ամբողջն այնքան»

<sup>\*</sup>) Соч. I т. 477 ст.

աւելի կատարեալ է, որքան նրա մասերը կատարեալ չեն, և ընդհակառակը»\*)։ Այս վերջին խօսքերը պատկանում են հռչակաւոր բնագէտ և բնափիլիսոփա Էրնստ Հեյկելին, որ առաջ բերելով Միխայլովսկին, ինքն ևս համաձայնում է դրանց հետ։ Եւ այս միտքը այնքան պարզ է, որ կօմենտարիաների պէտք չունի. միայն բաւական է ստել և նորից շեշտել այն հիմնական գրութիւնը, որ գիվերդենցիայի սկզբունքը, այսինքն աշխատանքի սօցիալական բաժանումը պահանջում է անհատներից յարմարելի կեանքի շատ աւելի հասարակ ֆորմուլայի հետ, հետեապէս տիպը միանգամայն ընկնում է, իսկ աշխատանքի ֆիզ. բաժանումը պահանջում է, ընդհակառակը, անհատներից յարմարելի կեանքի շատ աւելի բարդ ֆորմուլայի, հետեապէս պրօցեսը տանում է դէպի բարձր տիպի կատարելութիւնը։ Մի շարք բնագէտ-սօցիօլոգների խորունկ սխալը կայանում է հէնց նրանում, որ նրանք նոյնացնում էին այդ երկու՝ ըստ էութեան հակադիր սկզբունքները։

Այդ սկզբունքը էապէս ներկայացնում էր իրենից մի մասնաւոր կիրառումը մի

\*) *ibid.* 478.

այլ ընդհանուր և ընդգրկող տեսակէտի. հիմնած նոյնպէս սխալ անալօգիայի և հիմունքների վրա։ Իս օրդանական թէօրիան է, հասարակութեան և օրդանիզմի անալօգիայի հայեցակէտը, մի ուսմունք, որով մենք արդէն զբաղել ենք։ Այդ հռչակաւոր օրդանական թէօրիայի դէմ շատ է պայքարել ուս սօցիօլօգը և տւել է ամենաուժեղ հարեւածները։ Մինք նորէն կանգ չենք առնի այդ թէօրիայի վրա, մանաւանդ հանգամանօրէն, քանի որ դա կրկնողութիւն կլինէր, միայն կուզենանք կրկին շեշտել արդող հիմնական տարբերութեան վրա, որը գոյութիւն ունի կենդանական օրդանիզմի և հասարակութեան միջև և որը չեն կարողանում անտես առնել անգամ ամենածայրայեղ ուղղաբանական դարվիսեան սօցիօլօգները, օրինակ, հէնց Մպենսէրը։ Եւ մենք կտանք այդ տարբերութիւնը հէնց Միխայլովսկու խօսքերով։ «Օրդանիզմի մէջ յամենայն դէպս տանջւում և վայելում է ամբողջութիւնը և ոչ թէ մասերը, իսկ հասարակութեան մէջ, ընդհակառակը, տանջւում և վայելում են մասերը և ոչ թէ ամբողջութիւնը։ Եւ ոչ մի սրամտութիւն, ոչ մի էրուդիցիա չի կարող ջնջել այդ հիմնական տարբերութիւնը, միացած այն տարբերու-

թեան հետ, որ գոյութիւն ունի աշխատանքի ֆիզիօլօգիական և սօցիալական բաժանման մէջ»): Միւս կողմից, որքան էլ թէկուզ կատարելի աշխատանքի սօցիալական բաժանումը, այսինքն, աշխատանքի անվերջ սպեցիալիզացիան հասարակութեան մէջ, բայց յամենայն դէպս շեշտած տարբերութիւնը չի վերանում, անհատները չեն կորցնում տանջուելու և վայելելու ընդունակութիւնը, և դա կազմում է հէնց անհատի էական, բնորոշ, իւրատիպ դիժը:\*\*)

Ն. Կ. Միխայլովսկին չի բաւականանում, իհարկէ, միայն այդ անվիճելի և էական տարբերութիւնը շեշտելով, այսինքն, աշխատանքի սօց. և ֆիզ. բաժանման անժխտելի տարբերութիւնը: Ոչ. դա շատ քիչ է: Անհատականութեան կատարելիութիւնն ունենալով որպէս ելակէտ, նա դէմ է կանգնում աշխատանքի սօց. բաժանման սկզբունքին: Եւ անհ ինչու: Ասացի, որ աշխատանքի սօցիալական բաժանումը տանում է դէպի ծայրայեղ մասնագիտացումը: Անհ այդ ծայրայեղ մասնագիտացումը Միխայլովսկին համարում է չարիք, չարիք

\*) Соч. I т. ст. 71.

\*) ibid 72.

թէ անհատի կատարելիութեան տեսակէտից և թէ առհասարակ պրօպրէսի տեսակէտից:

Այստեղ արդէն կանգնում ենք նրա բարդ և պարզ կօօպերացիայի, գործակցութեան մասին ունեցած ըմբռնման առաջ, ուրիշ խօսքով, այն հարցի առաջ, թէ նա ի՞նչպէս է հասկանում և ցանկանում, որ լինի հասարակական կազմը: Նա կողմնակից է, անտարակոյս, պարզ գործակցութեան: Այս գրութիւնը բղխում է հետեղուկանօրէն նրա հիմնական աշխարհայեցողութիւնից, նրա Правда-ի սիստեմից, սօցիալփիլիսօփայութիւնից: Միխայլովսկու կարծիքով «օրինելիվ-մարդակենտրոն շրջանում բացակայում էր կօօպերացիան, կար հասարակ գործակցութեան միայն թոյլ ձեւարտակենտրոն շրջանում իշխում էր աշխատանքի բաժանումը, իսկ սուրիէկտիվ-մարդակենտրոն շրջանում տիրելու է հասարակ, պարզ գործակցութիւնը»): Այս վերջին դրութիւնը նրա ցանկացած լաւագոյն հասարակարգն է: «Աշխատանքի սօցիալական բաժանմամբ չէ սպառում կօօպերացիան, նկատում է ոռւս փիլիսօփա-սօցիօլօգը, դրա հետ գոյութիւն է ունեցել, և

\*) Соч. I т. ст. 124.

դոյութիւն ունի, հասարակ գործակցութիւնը, այսինքն, հաւասար մարդկանց աշխատանքի միացումը, որոնք հետեւում են մէկ և միեւնոյն նպատակին: Եւ պազան պատկանում է գործակցութեան այս ձևին»\*):

Ահա Միխայլովսկու անվերապահ պնդումը: Նա ղէմ է բարդ կօօպերացիային և կոդմակից պարզ, հասարակ կօօպերացիային, որովհետև առաջինը տանում է ղէպի տիպի ստորացումը և միայն աստիճանի վարդացումը, ծայրայեղ մասնադիտացումը, հոսեակէս ղէպի անկումը, իսկ երկրորդը պահանջում է անհատի ներգաշնակ ամբողջութիւնը, նրա բոլոր ֆունկցիաների ներգաշնակութիւնը: Նա կամենում է մի հասարակարգ, որն ապահովէր անհատների բազմաաարբութիւնը և հասարակութեան միատարբութիւնը:

Ահա ինչ է ասում Միխայլովսկին այդ աստիւ, ուր պարզորոշ կերպով զրուած է նրա կարծիքը նաև պարզ և բարդ գործակցութեան մասին: «Գարդ, հասարակ գործակցութեան ղէպը մարդիկ մտնում են խմբակցութեան մէջ ամեն մէկը իր այլապանութեամբ, բազմաաարբութեամբ, որի

\*) ibid. 77.

հետեանքն է լինում ամբողջ գրուպայի միատարբութիւնը: Բարդ գործակցութեան միջոցին առաջ է գալիս հակառակ երևոյթը, գրուպայի անդամները գործադրում են ամեն մէկը նոյն, միւսը մի այլ մասը իր անհատականութեան բազմապանութեան, նրանք զառնում են միատարբ, իսկ ամբողջ գրուպան ստանում է բազմապանութեան աւելի կամ պակաս որոշ ընաւորութիւն: Առաջին ղէպը մենք ստանում ենք միատարբ հասարակութիւն՝ բազմաաարբ, հաւասար, ազատ և անկախ անդամներով, երկրորդ ղէպը ամբողջութեամբ հասարակութիւն՝ անհաւասար, անազատ, մասնագիտութեան ենթարկւած անդամներով: Նախապատմական շրջանում տիրում էր առաջին տեսակի գործակցութիւն, բայց կրում էր պատահական բնոյթ—միանում էին մի նպատակի շուրջը և բաժանւում»\*):

Այսպիսով, պարզ է, որ նա պաշտպանում և կամենում է, որպէս հասարակագէտ, որ ստեղծւի մի պարզ գործակցութեան տիպի հասարակակարգ: Եւ այդպիսի հասարակարգի մէջ պահպանւելու է անհատի ամբողջականութիւնը, և զրա մէջ էլ կայանում է

\*) Соч. I т. 98-99.

հէնց մարդու բարօրութիւնը, ինչպէս և ճշմարտութիւնը մարդու համար:

Ահա հէնց այս ղեկավար տեսակէտից էլ բղիւում է նրա կլասիկ ֆօրմուլան, պրօգրէսի ֆօրմուլան:

Այժմ դառնանք այդ ֆօրմուլային:

IV

Այսքանից յետոյ մեզ շատ քիչ բան է մնում ասելու Միխայլովսկու պրօգրէսի յայտնի ֆօրմուլայի մասին, առհասարակ նրա ըմբռնողութեան մասին պրօգրէսի վերաբերմամբ:

Միխայլովսկին աւել է պրօգրէսի իր ֆօրմուլան դեռ 60-ական թւականների վերջերին, իր առաջին սօցիօլօգիական, բայց միաժամանակ ամենայայտնի, տրակտատում, «Что такое прогресс?»-ում: Միխայլովսկու այս սօցիալ-փիլիսօփայական աշխատութիւնը գրւած է Սպինսէրի պրօգրէսի, առհասարակ նրա սօցիօլօգիական թէօրիայի առթիւ: Այս գրւածքի լրացուցիչ մասը, մեզ հետաքրքրող հարցի տեսակէտից, կարելի է համարել նրա մի այլ յօդւածը, գրւած երեք տարի յետոյ, 1872 թւին, այսինքն, «Что такое счастье?»: Եւ դա գրւած է Սպինսէրի «social statics»-ի առթիւ:

«Что такое прогресс?»-ը, Միխայլովսկու այս խիստ հետաքրքրական և խորունկ ուշադրութեան արժանի աշխատութիւնը, կարելի է բաժանել ըստ էութեան երկու մասի— քննադատական կամ նիգատիւ և դրական:

Միխայլովսկին քննադատում և բացատում է Սպինսէրի թէօրիայի հիմնական դրութիւնները, և գալիս կանգնում է իր պրօգրէսի իգէայի հայեցակէտի վրա: Այդ աշխատանքի դրական մասն, ուրեմն, կայանում է Միխայլովսկու սօցիալ-փիլիսօփայութիւնը: Այդ գրւածքում նա տաւ պրօգրէսի իր վերջնական բանաձևը, որը նրա համար մինչև վերջն էլ մնաց որպէս ղեկավար տեսակէտ, պարտադրական և շարունակական: Ապագայում նա միայն հիմնաւորել, խորացրել է, բայց երբէք նոր դրութիւններ չի գրել: «Что такое прогресс?»-ը կարելի է խկապէս նրա աշխարհայեցողութեան հիմնական գրւածքը համարել, որովհետև նրա ամբողջ սօցիօլօգիայի և փիլիսօփայական ըմբռնողութեան ընոյթը պարզ և ցայտուն կերպով երևան է գալիս:

Նրա պրօգրէսի ֆօրմուլան հարազատ ձևունդ է այն դարաշրջանի, այն հայեացքների մարմնացումն է, երբ և որոնց շրջա-

նակում նա ապրում էր, երբ նա իր ամբողջ էութեամբ նեւաւած էր եռուն պայքարի մէջ, այսինքն, 60-ական և 70-ական թւականներէ: Եւ հէնց այդ տեսակէտից նրա ֆորմուլան կարելի է իրաւացիօրէն համարել շատ հետաքրքրական և ուշագրաւ: Այդ կլասիկ ֆորմուլայի, բանաձևի մէջ բիւրեղացրած են ժամանակակից աշխարհայեցողութիւնների հիմնական գծերը:

Արդէն այս գլխի ճակատին դրել ենք Միխայլովսկու հոչակաւոր և Ռուսաստանի համար շատ յայտնի պրօֆէսի ֆորմուլան:

Անա այն ամբողջապէս:

«Պրօֆէսոր աստիճանական մերձեցումն է գէպի անճատների ամբողջականութիւնը, գէպի աշխատանքի հնարաւոր եղած կատարեալ և բազմակողմանի բաժանումը օրգանների մէջ և հնարաւոր եղած նւազ բաժանումը մարդկանց մէջ: Անբարոյական, անարդար, վրասակար, անբանական է այն բոլորը, ինչ յիս է պահում այդ շարժումը: Բարոյական, արդարացի, բանական և օգտակար է միայն այն, ինչ նւազեցնում է հասարակութեան և աժեղացնում նրա առանձին անդամների բազմատարբութիւնը»:<sup>\*</sup>)

<sup>\*</sup>) I T. CT. 166.

Սուրին ուշագրութեամբ և կրկին ու կրկին կարգալով ու վերլուծելով այդ ֆորմուլան, անտարակոյս, դժւար չի լինի իրագեկ ընթերցողի համար նկատել, որ դա կազմում է յիբաւի մեր վերլուծած բովանդակ մտքերի ամբողջութիւնը, միայն մի քանի կլասիկ բանաձևերի մէջ դրւած: Ընդհանուր գրութիւնները մենք արդէն վերեւում վերլուծել ենք մանրամասնօրէն: Դժւար չէ, միւս կողմից, նկատել, որ Միխայլովսկու այդ յայտնի ֆորմուլայի մէջ կիրաււած է կարլ ֆօն Բեբի օրէնքը, անհատական դարգացման օրէնքը, որի մասին այնքան հանգամանօրէն և երկարօրէն խօսել ենք: Իսկ այսքանից յետոյ դժւար չէ նոյնպէս նկատել նաև այն, որ դա անհատականութեան և ոչ թէ գոյութեան կուր արդիւնք է: Պրօֆէսոր հիմնուում է անհատի բազմակողմանի, ներդաշնակ և կատարեալ զարգացման վրա: Այդ ֆորմուլայով տրւում է անհատի ամբողջականութեան հարցը, ոչ թէ բաժանբաժան լինելը: Իսկ այդ ամբողջականութեան մէջ էլ նա տեսնում է անհատի բարօրութիւնը, երջանկութիւնը, ինչպէս և կատարելիութիւնը,

Այսպիսով Միխայլովսկու պրօֆէսի ֆորմուլան և առհասարակ երջանկութեան

գաղափարը միմիանց հետ կապւած են ան-  
քակտելիօրէն: Իսկ այդ ներքին կապը Մի-  
խայրովսկու աշխարհայեցողութեան մէջ  
կազմում է բնորոշ գծերից: Բայց այդ Փոր-  
մուլան ունի, ասացի, իր խիստ արժէքա-  
ւոր նշանակութիւնը, քանի որ նա ունի  
նոյնպէս պատմական նշանակութիւն:

V

Գիտակ ընթերցողը նկատում է ան-  
շուշտ, որ գնելով անհատականութեան հար-  
ցը, Միխայրովսկին իր յայտնի Փորմուլայով  
լուծում է այդ հարցը յօգուտ անհատակա-  
նութեան լայնութեան և ոչ թէ խորութեան: Նա  
կամենում է անհատի ընդունակութիւնների  
բազմակողմանի, լրիւ, կատարեալ և ներ-  
դաշնակ զարգացումը: Իսկ անհատի լայնու-  
թիւնն է: Իրանով յիշաւի ստեղծւում է մի  
անհատ, որ մասնագէտ չէ, այլ պրօֆան,  
էնցիկլօպեդիստ: Միխայրովսկին գերազա-  
սում է պրօֆանը մասնագէտից, որովհետեւ  
առաջինը շատ աւելի բարձր է որպէս տիպ,  
քան երկրորդը, թէեւ վերջինիս զարգացման  
աստիճանը շատ աւելի բարձր է, բայց ոչ  
որպէս տիպ: Մասնագէտի մօտ ծայրայե-  
ղօրէն զարգացել է մի ֆունկցիան, մի ըն-  
դունակութիւնը ի վնաս միւս ընդունակու-

թիւնների: Իսկ անհատի խորութիւնն է: Ահա  
այդ խորութիւնը չի գնում և պահանջում  
Միխայրովսկին: Նրա ցանկացածը մասնա-  
գէտը չէ, այլ պրօֆանը: Նա դէմ է մասնա-  
գէտին, զրա համար էլ պայքարում է աշ-  
խատանքի սօցիալական բաժանման դէմ, մի  
սկզբունքի դէմ, որը բերում է աշխատանքի  
բաժանումը անհատների, բայց ոչ միեւնոյն  
անհատի օրգանների մէջ: Այս երկու ուղ-  
ղութիւններն էլ կային ուստական sturm  
und Grang Period-ում, 60-ական, 70-ա-  
կան թւականներին. երկու հակադիր հո-  
սանքներ, մէկը կանգնած էր անհատի խո-  
րութեան, իսկ միւսը անհատի լայնութեան  
տեսակէտի վրա: Եւ դրանք պայքարում էին  
իրար դէմ: Միխայրովսկին համաձայն էր  
խկապէս ոչ առաջին և ոչ էլ երկրորդ տե-  
սակէտին. նա երկու հայեցակէտն էլ գրտ-  
նում էր կարեւոր: Այս նոյն միտքն է պըն-  
դում նաև Իվանով-Ռազունսիկը: Բայց, եթէ  
նա կանգնեց մի հոսանքի, անհատի լայնու-  
թեան տեսակէտի վրա, այդ էլ պէտք է բա-  
ցատրել նրանով, որ ուսու սօցիօլօգը կամե-  
նում էր ընտրել չարիքներից փոքրագոյնը:  
Եւ նա զերազատում է զարգացման ամենա-  
բարձր տիպը, լայնութիւնը, քան թէ զար-  
գացման ամենաբարձր աստիճանը, խորու-

թիւնը: Իսկ այս վերջին, խորութեան տեսակէտի վրա կանգնեցին մարքսիստները: անտեսական մատերիալիզմի հետեորդները:

Իր այդ լուծումով, յիշուելի, ոուս սոցիոլոգ-փիլիսոփան շեղուց ճշմարտութեան ուղիից և ընկաւ, ասես կամովին, սխալանքի մէջ կամ, աւելի ճիշտ, մի ծայրայեղութեան մէջ, որից նա աշխատում էր խուսափել: Եւ սա կազմում է իսկապէս նրա կլասիկ ֆորմուլայի ամենապահասաւոր, թերի կողմը: Ինձ թւում է, որ ոուս մտածողը այստեղ ևս երևան պէտք է գար ընականօրէն իր սինթեթիկ ըմբռնողութեամբ, իր մտքի սինթեթիկ կազմով, և կկանգնէր ճիշտ տեսակէտի վրա: Այդպէս է թելադրում նրա ամբողջ սոցիալ-փիլիսոփայական կօնցեպցիան և ոգին, նրա հիմնական տեսակէտը, ինչպէս և նրա մտքերի ու խոհերի տրամաբանական ընթացքն ու դարգացումը: դեռ չեմ ասում նրա մտքի սինթեթիկ կազմը, որի վրա յաճախ շեշտել եմ: Ահա դրա համար եմ ասում, որ նա ասես կամովին շեղումն է կատարում և, հետեապէս, ընտազբօսելի կերպով տանում իր մտքերի դարգացումը և տալիս լուծումը: Նա, ասես, չի հետևում իր մտքի տրամաբանական թելադրութիւններին, այլ աւելի ճիշտ կեանքի

գործնական պահանջներին, և յատկապէս այն ժամանակայ գործնական կեանքի պահանջներին: ձայնին: Եւ իսկապէս կեանքի գործնական պահանջները տեսակէտից Միխայլովսկու. ֆորմուլան շատ արժէքաւոր և նշանակալից դժեք է պարունակում իր մէջ, թէկուզ տեսական կողմից կարող է թերի լինել:

Եւ եթէ քննադատուել է ու այժմ էլ քննադատում է Միխայլովսկու պրոգրէսի ֆորմուլան, այդ արւում է միայն վերև շեշտաւած ուղղութեամբ: Անհրաժեշտ և կարևոր է այստեղ նկատել, որ անհատի խորութեան սկզբունքը, այսինքն, աշխատանքի բաժանումը անհատների մէջ, կայ արդէն Միխայլովսկու մօտ: Նա անտես չի անում դա: Այդ տեսնում ենք մինչև իսկ նրա ֆորմուլայի մէջ: Բայց նա պահանջում է, որ աշխատանքի բաժանումը կատարուի ամենափոքր չափով, զուշանալով անհատի ծայրահեղ մասնագիտացումից, հետեապէս, նրա բովանդակութեան նեղանալուց: Եւ ես միանգամայն համաձայն եմ Բազումիի հետ, երբ նա նկատում է, որ Միխայլովսկին ուղում էր կուել աշխատանքի սոցիալական բաժանման սկզբունքի իշարն գործողբիուդէմ, և ոչ թէ անաստարակ այդ սկզբունքի

դէմ: Բազումներին ընդունում է այդ ֆորմուլայի միայն առաջին մասը, անհատիկորութեանը վերաբերող կտորը, իսկ միւս մասը նա բացասում է և գտնում է սխալ:

Ն. Կ. Միխայլովսկու պրօգրէսի ֆորմուլայի այդ թոյլ կողմի վրա մատնանշել է դեռ շատ վաղ ուսսական սօցիօլօգիական-սուբիեկտիվիստական դպրոցի մի վետերանը, Լաւրովը, որն աւագ է այդ դպրոցում, քան Միխայլովսկին, թէև նա վերջինի փիլիսօփայական և սօցիօլօգիական էրոզիցիան և հայեացքները շատ է դնահատում: Լաւրովը համարում է առհասարակ ուսսական մտքի զարգացման պատմութեան մէջ աեղ բոնոզ ականաւոր և խոշոր, մեզ համար նաև գրաւիչ, դէմքերից մէկը: «Սյապէս,— եղրափակում է Լաւրովը իր քննադատական գնահատումը,— աշխատանքի հնարաւոր եղածին չափ քիչ բաժանումը (սօցիալական) չի խանդարում մասնազատութիւնների մշակման և նրանց գործադրութեանը հասարակութեան օգտին: Մարդ լինել չի նշանակում կանգնել ուրիշների հետ հաւասար մակերեւոյթի վրա»\*)...

Լաւրովին էլ, ուրեմն, իր ամբողջու-

\*) Лавровъ. «Прогрессъ Н. К. Михайловскаго» ст. 41.

թեան մէջ չի բաւականացնում Միխայլովսկու ֆորմուլան: Նա չի գտնում, որ դա պրօգրէսի ֆորմուլա է, այլ, աւելի ճիշտ, «պրօգրէսի շարժման պահանջման մի ֆորմուլա է մօտիկ ապագայի համար»\*): Լաւրովի կարծիքով «պրօգրէսը զարգացման մի պրօցեսս է մարդկային գիտակցութեան մէջ և ձուլման պրօցեսսը ճշմարտութեան և արդարութեան, անհատների քննադատական մտքի աշխատանքի ճանապարհով՝ ժամանակակից կուլտուրայի վրա»\*\*): Լաւրովը համաձայն չլինելով Միխայլովսկու պրօգրէսի ֆորմուլայի ամբողջութեան հետ, նա գտնում է, որ դա պէտք է փոփոխութեան ենթարկել: Հեռաւոր ապագայի համար Լաւրովը պատրաստ է նրա ֆորմուլան այսպէս դնել. «հնարաւոր եղածին չափ քիչ բաժանում հասարակական կամ սօցիալական աշխատանքի մարդկանց մէջ»: այս կողմը դրէր և կիրառէր միայն այն ժամանակ, երբ անհատների մարդկային զարգացումը հասել է բաւականին բարձր աստիճանի: Իսկ այժմ դնում է նա աւելի լայն ֆորմուլա, որը չպէտք է գործադրել թէ ներկայից թէ անցեալի և թէ ապագայի վերաբեր-

\*) ibid 41. \*\*) ibid.

մամբ: Ես ասում եմ. «աշխատենք ամենա-  
արդարացի բաժանումը մարդկանց մէջ»\*):

Այս է ահա Լաւրովի սրբազրութիւնը  
և տեսակէտը պրօգրէսի, ինչպէս և Միխայ-  
լովսկու Փօրմուլայի մասին:

Այսպէս, քննադատելով, սրբազրելով  
և ուղղումներ մտցնելով հանդերձ, Լաւրովը  
գտնում է, որ Միխայլովսկու Փօրմուլան  
գործնական կարևորութեան տեսակէտից  
շատ նշանաւոր տեղ է բռնում անգամ Եւրո-  
պայի սօցիօլօգիական գրականութեան մէջ  
յայտնի եղած ու հռչակւած թէօրիայի շար-  
քում՝ պրօգրէսի մասին, բայց միայն գործ-  
նական կարևորութեան տեսակէտից, և ոչ  
գիտութեան տեսակէտից առհասարակ:

Եւ իսկապէս, գործնական կարևորու-  
թեան տեսակէտը շատ էական և որոշիչ  
դեր է խաղացել այդ ուս սուրիկիտիվիստ  
սօցիօլօգի պրօգրէսի Փօրմուլայի մշակման  
և յղացման գործում: Մինք արդէն այդ  
կէտի վրա շեշտել ենք: Այդ Փօրմուլան  
մարմնացնում է իր մէջ 60-ական, 70-ական  
թւականների աշխարհայեացքները և կրում  
է հէնց այդ ժամանակի պահանջների և  
կարիքների գրօշմը:

\*) ibid. cr. 42

Եւրօպականը: Չնայած այդ թերու-  
թեան և պակասին, Միխայլովսկին էլի  
ներկայանում է որպէս խոշոր դէմք և խո-  
րունկ միտք սօցիօլօգիական գրականու-  
թեան մէջ: Նա պէտք է բռնէ համաշխար-  
հային սօցիօլօգների շարքում իր պատւաւոր  
տեղը: Այդ կլինի միայն այն ժամանակ,  
երբ նրա գրածքները կգտնան համաշխար-  
հային սեփականութիւն, թարգմանւելով եւ-  
րոպական լեզուներով: Մեզ հայերիս հա-  
մար, յամենայն դէպս, շատ և շատ ուսա-  
սանելի բան կայ նրա խիստ օրիգինալ աշ-  
խարհայեացքի մէջ: Նա մեր սրտին և  
մտքին, մեր հոգուն առհասարակ շատ բան  
է տալիս՝ թարմ և ջերմ, խորն և ուշագրաւ:

Եւ այս՝ շատ անխուսափելի դժւարու-  
թիւնների հետ կապւած՝ աշխատանքը կա-  
տարեցի մեծ հաճոյքով, ասում եմ մեծ հա-  
ճոյքով, որովհետեւ մեր սրտին և հոգուն  
շատ են մօտիկ նրա հիմնական գրութիւն-  
ները, անգամ նրա բովանդակ սօցիալ-փի-  
լիսօփայութիւնը:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Եր.	սխալ.	ուղղից
62	փիլիսոփայութիւն	փոխյարարերու- թիւն
87	Լիլիժնֆիլդ	Լիլիենֆիլդ
89	տեսակէսնիւրի	տեսակնիւրի
97	Կանտ	Կոնտ
106	Կրկրի	Իրերի
115	ընդունենք	չընդունենք

---

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԻԱԾՔՆԵՐԸ

- 1) Ատրպատական, (սահաւաթիւ) 1 ր. 50 կ.
- 2) Պատմափիլիսոփայութիւն . 30 կ.
- 3) «ՄԻՏՔ» գիտական-փիլիսոփայական ժողովածու . . . 1 ր. 50 կ.
- 4) Նիցշէ և նրա փիլիսոփայութիւնը 20 կ.
- 5) Պետտիսմիզմի փիլիսոփան (Շօպենհաուէր և նրա փիլիսոփայութիւնը) 50 կ.
- 6) Միխայիլովսկին որպէս փիլիսոփասօցիոլոգ . . . 60 կ.
- 7) N. K. Michailowsky als Philosoph und Soziolog. Berlin, գրքը 3 մարկ (1 ր. 50 կ.)

ԳՐՆՆ Է 60 ԿՈՊ.

Հեղինակի հասցէն՝

Эривань, Армянская Семинарія  
учителю Е. Франгяну.

« Ազգային գրադարան



NL0145274

